# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 7 (1757) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 27, 2016
VOLUME 36, NO. 7 (1757) SATURDAY, FEBRUARY 27, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՍԴՀԿ Հայաստանի Վարչութեան Կազմակերպած Քննարկումը՝ Նուիրուած Սուրիական Տագնապին



Տեսարան մը սեմինարի մասնակիցներէն

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի վարչութեան նախաձեռնութեամբ Երեւանի «Մարիոթ» հիւրանոցին ներս տեղի ունեցաւ «Սիրիայի հակամարտութիւն. ռուս-թուրքական յարաբերութիւնների հնարաւոր անդրադարձը Հայաստանի վրայ» թեմայով սեմինար, որուն կը մասնակցէին ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան անդամներ, Ռուսաստանի Դաշնութեան դեսպանութեան խորհրդական Մուրադ Խացուեւ, յայտնի քաղաքագէտներ, տնտեսագէտներ, թրքագէտներ, արեւելագէտներ, ինչպէս նաեւ Հնչակեան Կուսակցական անդամներ: Զեկոյցներով հանդէս եկաւ ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան ատենապետ, պատմական գիտութիւնների թեկնածու ընկ. Նարեկ Գալստեան, որ իր խօսքին մէջ նշեց, թէ որքան կարեւոր է Հայաստանի համար պատրաստ ըլլալ յառաջիկայ մարտահրաւէրներուն՝ նկատի առնելով Սուրիոյ մէջ ամէն օր վատթարացող իրավիճակը, ռուս-թրքական հակամարտութիւնը, քրդա-

Շար.ը էջ 5

## Հայաստանի Մէջ Կաշառակերութեան Դէմ Պայքարը Կը Մնայ Թերի



Միացեալ Նահանգներու Միջազգային զարգացման գործակալութեան հայաստանեան առաքելութեան ղեկավար Քարեն Հիլբրտ

Մէկ տարի առաջ Հայաստանի կառավարութեան որոշմամբ ստեղծուեցաւ կաշառակերութեան դէմ պայքարի հերթական խորհուրդը՝ վարչապետ Յովիկ Աբրահամեանի գլխաւորութեամբ:

Այս ամսուայ սկզբին Միացեալ Նահանգներու Միջազգային զարգացման գործակալութեան հայաստանեան առաքելութեան ղեկավար Քարեն Հիլբրտ ու Հայաստանի կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեան ստորագրեցին համաձայնագիր մը, ըստ որու ամերիկեան կառավարութիւնը մօտ 750 հազար տոլար դրամաշնորհ պիտի տրամադրէ Հայաստանի մէջ կոռուպցիայի դէմ պայքարի համար:

«Այո, կարծում եմ՝ կոռուպցիայի դէմ պայքարին գծով Հայաստանի կառավարութեան յաջողութիւնը կամ ձախողումը իր ազդեցութիւնը կ'ունենայ հայ-ամերիկեան յարաբերութիւններուն վրայ: Այն իր ուղղակի ազդեցութիւնը կ'ունենայ ներդրումներու վրայ: Ներդրողները պէտք է հաւատան, վստահ ըլլան, որ այստեղ պիզնէսի համար բարենպաստ պայմաններ կան եւ եթէ անոնք այստեղ ներդրումներ ընեն, չեն կրեր կոռուպցիայի բեռը: Հայաստանի կառավարութիւնը մեզի բազմիցս հաւաստիացուցած է, որ շատ շահագրգռուած է ԱՄՆ-ի կողմէ կատարուող ներդրումներով: Հայաստանի կառավարութիւնը պէտք է պայքարի կոռուպցիայի դէմ, որպէսզի մեծացնէ ամերիկեան ներդրումներու ծաւալը», - ըսաւ Հիլբրտ:

Հակառակ կաշառակերութեան դէմ պայքարելու իշխանու-

Շար.ը էջ 5

## ԱՄՀ. «Հայաստանի Տնտեսութեան Համար Այս Տարին Պիտի Ըլլայ Բարդ»

Հայաստանի տնտեսութեան համար այս տարի աճ արձանագրելը բարդ պիտի ըլլայ՝ տնտեսութեան զարգացման համար, նկատի առնելով որ ստեղծուած է ոչ բարենպաստ միջավայր, եւ կարիք կայ իսկական բարեփոխումներու: «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին նման գնահատական հնչեցուց Արժոյթի Միջազգային Հիմնադրամի հայաստանեան գրասենեակի ղեկավար Թերեզա Տաբան Սանչեզը:

«Արտաքին միջավայրը Հայաստանի համար շարունակելու է մնալ ոչ բարենպաստ, պայմանաւորուած՝ Ռուսաստանում շարունակուող տնտեսական անկմամբ, Եւրամիութեան տնտեսութիւնը եւս, ցաւօք, շատ արագ չի աճում, իսկ Ռուսաստանն ու ԵՄ-ն Հայաստանի երկու հիմնական առեւտրային գործընկերներն են: Այս տարի Հայաստանի համար հիմնական մարտահրաւէր է լինելու կենտրոնացումը տեղական տնտեսութեան ակտիւացման վրայ, իսկ դրա համար անհրաժեշտ են բարեփոխումներ՝ իրական բարեփոխումներ: Սա է լինելու այս տարուայ գլխաւոր խնդիրը: Կառավարութիւնը պէտք է իրականացնի լուրջ բարեփոխումներ՝ վստահ լինելու համար, որ տնտեսութեան զարգացումն ապահովուելու է առաւելապէս երկրի ներսում»,- ըսաւ ԱՄՀ-ի հայաստանեան գրասենեակի ղեկավարը:

Պաշտօնական տուեալներով՝ նախորդ տարի Հայաստանի առեւտրաշրջանառութիւնը՝ հիմնական տնտեսական գործընկեր Ռուսաստանի Դաշնութեան հետ նուազած է 18 տոկոսով, արտահանումը Հայաստանէն Ռուսաստան՝ նուազած է 26.7 տոկոսով: Տաբան Սանչեզ համաձայն է՝ նոր առեւտրային ուղղութիւններու որոնման կարիք կայ: «Հայաստանեան գործարարները պէտք է աւելի ակրեսիւ լինեն ռուսական շուկայում, կամ դուրս գան աւելի բարենպաստ շուկաներ, ինչպէս՝ Մերձաւոր Արեւելքը»,- օրինակ բերած է Թերեզա Սանչեզ:

Արժոյթի Միջազգային Հիմնադրամի հայաստանեան գրասենեակի ղեկավարը վստահ է՝ կառավարել փոխարժէքի տատանումը կարելի չէ: «Օբեկտիւօրէն, աշխարհում ոչ մի կենտրոնական բանկ չի կարող կառավարել փոխարժէքը, դա անհնար է: Նոյնն է, թէ փորձես կանգնեցնել ցունամին. դու չես կարող անել դա»:

## Սուրիահայերու Ի Նպաստ Թելեթոնի ընթացքին Հանգանակուեցաւ 1.2 Միլիոն



Տեսարան մը ՍԱՐՖ-ի թելեթոնէն

Կիրակի, Փետրուար 21-ին Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցաւ Սուրիահայութեան Օժանդակութեան Հիմնադրամի՝ ՍԱՐՖ-ի կազմակերպած «Կեանք Մը Փրկէ» Թելեթոնը, որու ընթացքին հանգանակուեցաւ 1.2 միլիոն տոլար:

Վեց ժամ տեւած թելեթոնի ընթացքին, սուրիական պատերազմի հետեւանքով տուժած մեր հայրենակիցներուն օգնութեան հասնելու կոչերով ելոյթներ ունեցաւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, հոգեւոր առաջնորդներ, ուսանողներ եւ արուեստագէտ- արուեստագիտուհիներ:

Դրամահաւաքի յաջողութեան մեծապէս նպաստեցին ՍԱՐՖ-ի ղեկավարութեան ամիսներ տեւող հետեւողական աշխատանքը:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Սերժ Սարգսեանը Փոխում է Կառավարութեան Գործառոյթը

*ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ*

*Յայտարարելով արտաքին գործընկերների հետ տնտեսական յարաբերութիւնները խորացնելու նպատակադրումով խորհրդակցութիւնների շարք սկսելու մասին, Սերժ Սարգսեանը, ըստ էութեան, արձանագրում է, որ Հայաստանում կառավարութիւնը չի աշխատում:*

*Խնդիրն այն է, որ դեռեւս 2015 թուականի Դեկտեմբերի 3-ին տուած յայտնի հեռուստահարցազրոյցում նա փորձում էր բոլորին հաւատացնել, որ տնտեսական իրավիճակի, տնտեսական քաղաքականութեան համար պատասխանատուն նախագահը չէ, այլ կառավարութիւնն է: Աւելին՝ Սարգսեանը փորձում էր հաւաստիացնել, որ նաեւ հենց դրա համար է անհրաժեշտ փոխել կառավարման մոտելը, եւ իրերը դնել իրենց տեղը, այսպէս ասած՝ մօտեցնել հասարակական ընկալումներին: Ինչո՞ւ են այս կամ այն սոցիալական խմբերը կառավարութեանը պահանջներ ներկայացնելու փոխարէն նախագահական նստավայր գալիս, հարցնում էր Սերժ Սարգսեանը:*

*Անցել է ընդամէնը երկու ամիս, եւ ահա Սերժ Սարգսեանը յայտարարում է, որ նախաձեռնում է տնտեսական արտաքին կապերը*

**Եթէ երկու ամիս առաջ Սարգսեանը այդ պատասխանատուութիւնը բաւական ընդգծուած ձեւով Յովիկ Աբրահամեանի եւ կառավարութեան վրայ էր դնում...` այժմ փաստացի յայտարարում է տնտեսական քաղաքականութեան պատասխանատուութիւնը**

*խորացնելու խորհրդակցութիւնների շարք, ինչը, ըստ էութեան, նշանակում է, որ Սերժ Սարգսեանը ձեռքն է վերցնում տնտեսական քաղաքականութիւնը: Ասել, թէ խօսքը արտաքին ոլորտների մասին է՝ ծիծաղելի եւ միամիտ կը լինի, քանի որ տնտեսութիւնն արտաքին ու ներքին չունի, տնտեսութիւնը մէկն է, եւ ներքին դաշտն ու արտաքին իրողութիւնները սերտ փոխկապակցուած են, ըստ էութեան միեւնոյն շղթան են:*

*Ի վերջոյ, տնտեսական արտաքին կապերի ամբողջ նպատակը ներքին իրավիճակի վրայ ազդելն է: Սա նշանակում է, որ արտաքին տնտեսական յարաբերութիւնների ձեռնամուխ լինելը ուղղակիօրէն ենթադրում է նաեւ ներքին տնտեսական իրողութիւններին միջամտութիւն: Այդպիսով, Սերժ Սարգսեանը փաստօրէն յայտարարում է տնտեսական կառավարման ղեկն իր ձեռքը վերցնելու մասին: Անշուշտ, միամիտ պէտք չէ լինել եւ կարծել, թէ մինչ այդ ղեկը նրա ձեռքում չէր: Խօսքը տուեալ դէպքում վերաբերում է պատասխանատուութիւն վերցնելուն:*

*Եթէ երկու ամիս առաջ Սարգսեանը այդ պատասխանատուութիւնը բաւական ընդգծուած ձեւով Յովիկ Աբրահամեանի եւ կառավարութեան վրայ էր դնում՝ նոյնիսկ մեղադրական ակնարկով ցոյց տալով, որ կառավարութեանը կասկածում է ցուցարարներին նախագահական հասցէն «տալու» համար, ապա այժմ Սերժ Սարգսեանը փաստացի յայտարարում է տնտեսական քաղաքականութեան պատասխանատուութիւնը վերցնելու մասին: Ի վերջոյ, եթէ նա խորացնում է արտաքին տնտեսական կապերը, ապա դրանք պէտք է որեւէ արդիւնքի ձեւով արտացոլուեն ներսում: Եւ եթէ ներսում չկայ արտացոլում, ապա կը նշանակի, որ Սարգսեանի արտաքին նախաձեռնութիւնը անարդիւնաւէտ է:*

*Իսկ քանի որ դրա մասին յայտարարելով, Սերժ Սարգսեանը որեւէ կերպ չի ակնարկում պատասխանատուութիւնը բաժանելու մասին, այսինքն՝ գոնէ առայժմ չի խօսում, որ ինչ-ինչ բաներ այնուհանդերձ կառավարութեան քայլերից են կախուած, ապա եզրակացութիւնը մէկն է՝ Սերժ Սարգսեանը իր վրայ է վերցնում ամբողջ պատասխանատուութիւնը: Սակայն դա, իհարկէ, չի նշանակում, որ կառավարութիւնը դառնում է աւելորդ: Բոլորովին: Եւ անգամ հակառակը: Կառավարութիւնը էլ աւելի պէտքական է դառնում, բայց ոչ թէ տնտեսութեան, այլ Սերժ Սարգսեանի համար:*

*Բանն այն է, որ Սերժ Սարգսեանի նախաձեռնութիւնները բոլորովին չեն յանգեցնելու տնտեսական թռիչքների կամ հրաշքների: Դրա համար Հայաստանի ներսում են պէտք արագ եւ բեկումնային քայլեր, ոչ թէ խորհրդակցութիւններ արտերկրում Հայաստանի դեսպանների հետ: Պարզապէս կառավարութիւնն այլեւս դառնում է քաւութեան նոխազների մի հաւաքական, որը սպասարկելու է Սերժ Սարգսեանի ստանձնած հրապարակային պատասխանատուութեանը: Կառավարութեան անդամների վրայ ըստ անհրաժեշտութեան դուրս կը գրուի Սերժ Սարգսեանի նոր նախաձեռնութեան անարդիւնաւէտութիւնը՝ փուլ առ փուլ, աստիճանական կարգով:*

*Յամենայնդէպս, խորհրդարանական ընտրութիւններին ընդառաջ դա կը լինի կառավարութեան առանցքային առաքելութիւնը: Այլ կերպ ասած՝ Սերժ Սարգսեանը ընտրութիւններից առաջ ձեռնամուխ է լինում մի գործընթացի, որում հենց սկզբից իրեն դնում է գրեթէ անպարտելի մի վիճակում, այսինքն՝ մի կողմից ստանձնում է պատասխանատուութիւն տնտեսական զարգացումների համար, միւս կողմից, սակայն, խնդիրը տեղափոխում է արտաքին դաշտ՝ ներքին համակարգային իրողութիւնների համար պատասխանատուութիւնից խուսափելու եւ իր համար մաների դաշտ ապահովելու նպատակով:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# Քաղաքականութեան Անբարոյ Մետաստազները

*ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ*

*Ըստ երեւոյթին հանրապետականներն ու դաշնակներն այդպէս էլ լաւ չեն հասկացել, թէ ինչու է հասարակութեան մեծ մասը իրենց «համագործակցութիւնը» մեղմ ասած՝ անբարոյականութիւն համարում:*

*Հանրապետականներին, օրինակ, թւում է, թէ նախանձն է պատճառը, որ քաղաքական միւս ուժերը ցեխն են կոխում Դաշնակցութեանը: Վահրամ Բաղդասարեանը հենց այդպէս էլ ասում է՝ «աղուէսի դունչը խաղողին չհասաւ, ասաց խակ է»: Ըստ երեւոյթին մօտաւորապէս նոյն կարծիքին են նաեւ դաշնակները: Նրանց թւում է, թէ բոլորը խելօք հերթ կանգնած են եղել՝ իշխանական կերակրատաշտից օգտուելու համար, բայց քանի որ իրենք «շուստրի» են գտնուել եւ առանց հերթ են խցկուել՝ դրա համար էլ բոլորն իրենց դէմ են խօսում:*

*Իրականում հասարակութեան բացասական վերաբերմունքի պատճառները բոլորովին այլ են, եւ երեւի ժամանակն է, որ ՀՀԿ-ն ու ՀՅԴ-ն հասկանան սա: Թէ չէ մի տեսակ սիրուն բան չի ստացւում՝ բոլորը հայհոյում են, իսկ սրանք շուարած չորս կողմն են նայում ու այդպէս էլ չեն հասկանում, թէ ինչ «ղալաթ են արել»:*

*Հանրապետականների դէպքում ամէն ինչ համեմատաբար աւելի պարզ է: Մարդկանց բարկացրել է յատկապէս այն, որ Սերժ Սարգսեանն ինչ-որ գաղտնի «բազառների» արդիւնքում պատրաստ է առանց աչք թարթելու «կուբիկռուբիկի» նման քանդել պետական կառավարման համակարգը, ինչ-որ նախարարութիւններ կպցնել իրար, յետոյ քանդել, յետոյ նորից կպցնել, մարզպետների պաշտօններ բաժանել աջ ու ձախ՝ կարծես խօսքը ոչ թէ հարիւր հազարաւոր մարդկանցով բնակեցուած մարզերի, այլ ինչ-որ բոստանների մասին է եւ այլն: Բարկացրել է նաեւ այն, որ փաստօրէն ցանկացած պաշտօնեայ, անկախ նրանից՝ լաւ է աշխատել, թէ ոչ, ցանկացած պահի կարող է «չուժոյ պախմել» պաշտօնանկ արուել եւ մի կողմ շպրտուել: Սա, համաձայնուէք, այնքան էլ բարոյական չէ:*

*Հիմա՝ Դաշնակցութեան մասին: Խորհրդարանական վերջին ընտրութիւններում այդ կուսակցութիւնն, ինչպէս յայտնի է, հազիւ 5 տոկոս հաւաքեց եւ մի կերպ մտաւ խորհրդարան: Ընտրութիւններից յետոյ ՀՅԴ-ն ինչ-որ լղոզուած յայտարարութիւններ արեց, բայց հիմա արդէն պէտք է յստակեցնել՝ ի վերջոյ Դաշնակցութիւնն ի՞նչ կարծիքի է, խորհրդարանական վերջին ընտրութիւնները կեղծուե՞լ են, թէ՞ արդար են եղել: Միանգամից ասենք՝ միջանկեալ պատասխանները չեն ընդունւում. ընտրութիւնները կամ կեղծւում են, կամ ոչ, միջինը չկայ: Հիմա եկէք երկու տարբերակներն էլ քննարկենք: Ենթադրենք՝ ընտրութիւնները կեղծուել են: Հասկանալի է, չէ՞, որ իշխանութիւններն են կեղծել, եւ ոչ թէ «երկնքից իջած արջերը»: Բա եթէ այդպէս է՝ դաշնակները որպէս ի՞նչ են վազում ընտրակեղծարար իշխանութիւնների հետ համագործակցելու: Ի՞նչ է դա, եթէ ոչ անբարոյականութիւն:*

*Հիմա՝ երկրորդ տարբերակը; Ենթադրենք՝ խորհրդարանական վերջին ընտրութիւնները չեն կեղծուել եւ ճշգրտօրէն արտացոլել են քաղաքական ուժերի վարկանիշները: Ստացւում է, որ Հայաստանի բնակչութեան միայն 5 տոկոսն է կողմ Դաշնակցութեանը: Բա այդ դէպքում որպէս ի՞նչ է ընդամէնը 5 տոկոս ստացած ուժը բութ յամառութեամբ, ճակատի զոռով խցկւում է իշխանութիւն ու պաշտօններ ստանձնում: Լաւ, հասկացանք՝ դռնից դուրս ես անում, լուսամուտից են խցկւում, բայց աներեսութիւնն է՛լ չափ ու սահման ունի: Ուրիշ ի՞նչ անուն տաս այն ուժին, որը շատ լաւ գիտի, որ ժողովրդի մեծ մասն իրենցից զզւում է, բայց տարբեր «շուստրիութիւններով» այնուամենայնիւ պաշտօններ է ճանկում: Նորմալ քաղաքական տրամաբանութեան տեսանկիւնից՝ հենց սա է մեծագոյն անբարոյականութիւնը:*

*Մի խօսքով՝ ՀՅԴ-ՀՀԿ համագործակցութիւնն անբարոյականութիւն է առաջին հերթին հենց քաղաքական չափանիշներով, ու մարդկային որակներն այստեղ բացարձակապէս կապ չունեն: Մարդկային որակների առումով դաշնակ իշխանաւորները հանրապետականներից ոչ լաւն են, ոչ վատը: Եւ, ի դէպ, հէչ պարտադիր չէ, որ այդ համագործակցութիւնը քննադատողները մարդկային որակներով դաշնակներից ու հանրապետականներից աւելի լաւը լինեն: Բայց սա քաղաքական գործընթաց է, եւ առաջին հերթին պէտք է գնահատել հենց քաղաքական չափանիշներով:*

*«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»*

մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՉԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Մարտի 1-ի Հանրահաւաքը Կ'անցնի «Ընդդէմ Պետական Աւազակապետութեան» Կարգախօսով

*Մօտ տասն օր շարունակուած բանակցութիւններից յետոյ ընդդիմադիր երեք ուժեր՝ Հայ Ազգային Գոնկրէսը, Հայաստանի ժողովրդական կուսակցութիւնն ու «Նոր Հայաստան» հանրային փրկութեան ճակատը, համաձայնութեան են եկել Մարտի 1-ին միասնական հաւաք-երթ անցկացնել՝ «Ընդդէմ պետական աւազակութեան» կարգախօսով:*

*Ըստ տարածուած հաղորդագրութեան, հաւաքը կը մեկնարկի Ազատութեան հրապարակում, ապա մասնակիցները երթով կը հասնեն Միյասնիկեանի արձանի մօտ, որտեղ 8 տարի առաջ արիւնալի բախումների հետեւանքով 10 մարդ զոհուեց:*

*«Նոր Հայաստան»-ի կողմից Հայ Ազգային Գոնկրէսի հետ անցած օրերին այս հարցով բանակցած Հիմնադիր Խորհրդարանի նախագահ Գարեգին Չուգասզեանը «Ազատութեան» հետ զրոյցում նշեց. - «Համաձայնութեան ենք եկել գլխաւորի շուրջ, որ կայ վտանգ, այդ վտանգի դէմ պէտք է պայքարել: Եւ միացեալ ուժերով պէտք է ամէն կերպ թոյլ չտալ ամբողջատիրական բռնապետութեան հաստատումը Հայաստանում»:*

*Նա յաւելեց, որ հաւաքին մասնակցելու առաջարկ են արել նաեւ այլ ուժերի, այդ թւում՝ «Քաղաքացիական պայմանագրին» եւ քաղաքացիական նախաձեռնութիւններին. - «Սա չի նշանակում, որ այդ երեք ուժերն են լինելու: Կը լինեն նաեւ այլ ուժեր, որոնք կը միանան: Եւ մենք առաջիկայ օրերին պիտի նաեւ այդ բանակցութիւններն աւարտենք: Ուստի այս ամբողջ քննարկումները շատ կարեւոր ենք համարում ժողովրդավարական ուժերի ընդհանուր յայտարարի գալու իմաստով: Այսինքն՝ ճշգրտելու հարցերի այն տիրոյթը, որի շուրջ կայ միասնական դիրքորոշում ընդդիմութեան մէջ: Սա ամենակարեւոր արդիւնքն է, որը նոր լիցք հաղորդի բոլորի պայքարին»:*

*Այլ մանրամասներ չհաղորդելով՝ Չուգասզեանը փոխանցեց, որ հաւաք-երթին կը լինի միասնական օրակարգ եւ միասնական յայտարարութիւն, որոնց բովանդակութեան ու ռազմավարութեան վերաբերեալ ճշգրտումները կ'արուեն աւելի ուշ. - «Բոլոր հնարաւոր եղանակներով: Բոլո՛ր: Այստեղ չպէտք է տարբերութիւն դնել հնարաւոր պայքարի եղանակների միջեւ. բոլորը ընդունելի են, միայն թէ արդիւնք լինի: Բոլոր այն ուժերը, որոնք տարբեր մարտավարութիւն ունեն, պէտք է միաւորուեն նախ իրենց գաղափարական հիմքի վրայ, յետոյ՝ գործողութիւնների մէջ: Մարտի 1-ը առաջին այդպիսի գործողութիւնը կարող է դառնալ»:*

### ԲՀԿ-ում Կրկին Կռիւ է Կոալիցիա Ցանկացողները Չեն Հանդստանում

*Մարդու իրաւունքների պաշտպանի թեկնածուի քուէարկութեանն ընդառաջ ԲՀԿ խմբակցութիւնում կրկին կրքեր են բորբոքուել: Կուսակցութեան ղեկավար Նաիրա Զոհրաբեանի պաշտօնական դիրքորոշումն է դէմ քուէարկել իշխանութեան թեկնածուին, մինչդեռ Վահան Բաբայեանն արդէն յայտարարել է՝ քուէարկելու է Արման Թաթոյեանի օգտին: Աւելին՝ քուէարկութիւնից առաջ նա հրաժարուել է կուսակցութեան խօսնակի գործառոյթից:*

*Վահան Բաբաեանը դժուարանում է իր անձնական դիրքորոշմանը հակասող կուսակցութեան պաշտօնական դիրքորոշումը յայտնել լրատուամիջոցներին: Այս մասին նա ասաց NEWS.am-ի հետ զրոյցում: «Կուսակցութիւնից դուրս գալու խնդիր չկայ, չի էլ եղել: Խօսքը վերաբերում է կուսակցութեան պաշտօնական տեսակէտները յայտնելուն, որից ես հրաժարւում եմ»,-ասաց Բաբաեանը:*

*Կուսակցութեան պաշտօնական դիրքորոշումների հետ համաձայն չլինելով հանդերձ՝ նա յայտարարեց, որ ԲՀԿ-ն պէտք է լինի ամուր կուսակցութիւն:*

*Նշենք, որ նրա այս քայլը անակնկալ է եղել խմբակցութեան ղեկավար Նաիրա Զոհրաբեանի համար: ԲՀԿ-ականների խօսքով՝ սա ուրբաթ օրուայ արտահերթ նիստի հետեւանքն է եղել, երբ Միքայէլ Մելքումեանը ամբիոնից սրտնեղել իրենց կոալիցիա չհրաւիրելու կապակցութեամբ, ինչից յետոյ խմբակցութիւնում տհաճ քննարկումներ են եղել:*

*Նաիրա Զոհրաբեանին վրդովուեցրել է այն հանգամանքը, որ ինքը բազմիցս յայտարարել է կոալիցիա կազմելու թեման փակուած լինելու մասին, մինչդեռ կոալիցիայի նկրտումներ ունեցող թեւը ի դէմս Մելքումեանի պահը չի կորցնում ամբիոնից դրա մասին յայտարարութիւններ անելու: Թէ ինչպէս կը հանգուցալուծուեն տարաձայնութիւնները եւ ով կը լքի ԲՀԿ-ն, դեռեւս յայտնի չէ, բայց ենթադրւում է, որ իրավիճակն աւելի կը սրուի 2017-ի պատգամաւորական ցուցակում տեղերը բաշխելու փուլում:*

### Եթէ Կոալիցիա Են Կազմում Միայն Պաշտօններ Զբաղեցնելու Նպատակով, Դրական Չեմ Վերաբերում

*Հանրապետական խմբակցութեան պատգամաւոր Վոլոդեա Բադալեանը քաղաքական ուժերի միաւորուելուն եւ բաժանուելուն դրական է վերաբերում, սակայն դէմ է, երբ դա արւում է միայն պաշտօններ ստանալու համար:*

*«Ես դրական եմ համարում քաղաքական ուժերի միանալն ու բաժանուելը: Ես կարող եմ հետեւեալն ասել, որ արդիւնքները միշտ աւելի ուշ են երեւում»,-NEWS.am-ի հետ զրոյցում նշել է Վոլոդեա Բադալեանը՝ անդրադառնալով ՀՅԴ-ՀՀԿ համագործակցութեանը:*

*«Ամէն քաղաքական ուժ ունի իր ծրագրերը, որոնք համադրելով մէկը միւսի հետ՝ լրացնում են ու կարողանում են հարցեր առաջ քաշել»,-ասել է պատգամաւորը:*

*Մեր զրուցակիցը նշել է, որ միայն պաշտօնների նպատակով կոալիցիա կազմելուն դէմ է: «Եթէ քաղաքական ուժերը մտածում են կոալիցիա կազմեն միայն պաշտօններ զբաղեցնելու նպատակով դրական չեմ վերաբերում»:*

### Ակտիւիստները Հեռացան Նախագահականի Մօտից՝ Կրկին Վերադառնալու Խոստումով



Երեւանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպեան կը վիճի երիտասարդ ցուցարարներու հետ

*Ի աջակցութիւն կալանաւորուած քաղաքացիական ակտիւիստներ Վարդգէս Գասպարիի եւ Գէորգ Սաֆարեանի՝ ակցիայի մասնակիցներին փետրուարի 22-ին, այդպէս էլ չյաջողուեց մօտենալ Նախագահական Նստավայրին:*

*Ակտիւիստները, որ, չնայած ոստիկանների դիմադրութեանը, դիմացի մայթից անցել էին փողոցը եւ հաւաքուել Մեծ Բրիտանիայի դեսպանատան առջեւ, հեռացան վերադառնալու խոստումով:*

*«Ոստիկանները խոչընդոտեցին մեր ակցիան. ինչը մեզ լիովին լիազօրում է վերադառնալ եւ մեր ձայնը լսելի դարձնել: Իսկ մեր ասելիքն այն է, որ մենք էլ ունենք նոյն քաղաքական հայեացքները, ինչ որ կալանաւորուածները, թող մեզ էլ կալանաւորեն»,- յայտարարեց ակցիայի մասնակիցներից Արամ Մանուկեանը:*

*Ակտիւիստները այդպէս էլ չհանդիպեցին նախագահականից ոչ մէկի: Այդ հարցում նրանց օգնել փորձող՝ Երեւանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպեանը ասաց, որ նախագահականում համապատասխան բաժնի աշխատանքային ժամերը աւարտուել են:*

*Ակտիւիստները իրենց յետագայ անելիքների օրակարգը քննարկելուց յետոյ կ'իրազեկեն իրենց յաջորդ ակցիայի մասին:*

*Նշենք, որ «Նոր Հայաստան» հանրային փրկութեան ճակատի անդամ Գէորգ Սաֆարեանը մեղադրուում է ոստիկանի նկատմամբ բռնութիւն կիրառելու մէջ, նա կալանաւորուած է Յունուարի 1-ից: Քաղաքացիական ակտիւիստ Վարդգէս Գասպարին կալանաւորուել է օրեր առաջ՝ այն բանից յետոյ, երբ մի քանի անգամ հրաժարուել է ներկայանալ իր դէմ մեղադրանքով դատական նիստերին:*

### Տեղի Ունեցաւ «Հայկական Վերածնունդ Միաւորում»-ի Հիմնադիր Համագումարը

*ՕԵԿ առաջնորդ Արթուր Բաղդասարեանը իշխանութիւն դառնալու նոր յայտ է ներկայացնում: Խորհրդարանական ընտրութիւններին ընդառաջ 12 կուսակցութիւնների ու շուրջ 140 հասարակական կազմակերպութիւնների հետ Բաղդասարեանը «Հայկական վերածնունդ միաւորում» անուանմամբ նոր կուսակցութիւն հիմնադրեց:*

*2008թ. մարտիմէկեան արիւնալի իրադարձութիւններից յետոյ Սերժ Սարգսեանի հետ ստորագրած յուշագրով իշխանութեան հետ կոալիցիա կազմած Արթուր Բաղդասարեանը պնդում է՝ ՕԵԿ-ը հեղինակազրկուած չէ, նոր կուսակցութեան հիմնադրումն այլ նպատակ ունի. - «Մենք պէտք է մեր մէջ սպաննենք այն սարկացած հատուածին, որ կայ, որը կորցրել է իր յոյսը, ոչ մի բանի չի հաւատում... մենք պէտք է կարողանանք գտնել մեր ներսում մեր հաւատի ուժը, մեր պայքարի ներուժը, մեր ոգին ու վճռականութիւնը՝ իսկապէս պոռթկում կատարելու համար»:*

*Թուարկելով նախաձեռնութեանը միացած 12 կուսակցութիւններին, Արթուր Բաղդասարեանը պնդեց, թէ դրանք ամենեւին էլ մէկ մարդու կուսակցութիւններ չեն. - «Ամէն մի կուսակցութիւնում նուազագոյնը երկու-երեք հազար մարդ կայ: Գումարենք՝ կայ մօտաւորապէս 40-50 հազար մարդ, հասարակական կազմակերպութիւններին չհաշուած, միացել են այս շարժմանը»:*

*Արթուր Բաղդասարեանն իր ելոյթում մի քանի անգամ հպարտութեամբ շեշտեց՝ նախաձեռնութեանն են միացել բազմաթիւ հասարակական կազմակերպութիւններ, ինչը, ըստ նրա, գրեթէ չլսուած իրադարձութիւն է:*

### Երեք Կարկառուն ՀՀԿ-ականների Յարաբերութիւնները Սրուել Են. Չեն Կարողանում Պաշտօնը Կիսել

*«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Մեր տեղեկութիւններով՝ բաւականին սրուած են ՀՀԿ-ական երեք կարկառուն դէմքերի՝ վարչապետ Յովիկ Աբրահամեանի, տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարեանի եւ պատգամաւոր Մհեր Սեդրակեանի՝ Թոխմախի Մհերի յարաբերութիւնները:*

*Խնդիրը՝ 2017թ. Երեւանի քաղաքապետի ընտրութիւններն են: Քաղաքական քուլիսներում խօսւում է, որ Բեգլարեանը ցանկանում է հետ գալ իր հին պաշտօնին, Աբրահամեանը ցանկանում է Երեւանի քաղաքապետ դարձնել Արտաշատի քաղաքապետ իր որդուն՝ Արգամ Աբրահամեանին:*

*Իր որդու՝ Երեւանի աւագանու անդամ Դաւիթ Սեդրակեանի համար նոյն մտադրութիւններն ունի նաեւ Սեդրակեանը:*

*Այս երեք պաշտօնեաները տեղեակ են միմեանց այդ նպատակների մասին, եւ երեքն էլ սկսել են այդ ուղղութեամբ աշխատել՝ միաժամանակ խանգարելով մրցակիցներին: Երեքն էլ փորձում են Սերժ Սարգսեանի, ինչպէս նաեւ յանցաւոր աշխարհի աջակցութիւնը ստանալ՝ միաժամանակ նրա մօտ փնովելով միւսին*

## ԼՈՒՐԵՐ

## Ատրպէյճանցի Ցուցարարներին Շուէտի Հայ Համայնքը Դիմաւորել է Արցախի Դրօշներով




*Շուէտի հայ համայնքի երիտասարդները Արցախի դրօշներով կը դիմաւորեն Ատրպէյճանցի ցուցարարներուն*

*Շուէտում, Փետրուարի 20-ին, ՀՀ դեսպանութեան առջեւ տեղի ատրպէյճանցիները կազմակերպել էին ցոյց, նպատակ ունենալով ոչ աշխատանքային օրուայ ընթացքում նկարուել ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութեան առջեւ՝ յետոյ սեփական մամուլում մարդաշատ ցոյցի մասին ապատեղեկատուութիւն տարածելու համար:*

*Շուէտի հայ համայնքի երիտասարդները, նախապէս տեղեկանալով ցոյցի կազմակերպման մասին, անակնկալ են մատուցել՝ ատրպէյճանցիներին դիմաւորելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դրօշներով: Արդիւնքում ատրպէյճանական սակաւամարդ ցոյցը շատ կարճ ժամանակում ցրուել է:*

## Հայաստանի Եզդիների Համայնքի Ղեկավար. Ատրպէյճանը Կեղծ Տեղեկութիւններ է Տարածում

*Աշխարհի եզդիների միութեան եւ Հայաստանի եզդի համայնքի ղեկավար Ազիզ Թամոյեանը հանդէս է եկել յայտարարութեամբ՝ կապուած ատրպէյճանական լրատուամիջոցների կողմից փաստերը խեղաթիւրելու հետ:*

*Այսպէս, Ատրպէյճանի քարոզչական մեքենան փորձ է արել սահմանին զոհուած եզդի զինուորներին ներկայացնել որպէս «քուրդ ահաբեկիչներ»:*

*Ազիզ Թամոյեանի յայտարարութիւնում, մասնաւորապէս, ասւում է.*

*«Վերջին օրերին ատրպէյճանցի քարոզիչները ջանք ու եռանդ չեն խնայում հայ-ատրպէյճանական սահմանում զոհուած ազգութեամբ եզդի զինծառայողներին որպէս ահաբեկիչներ ներկայացնելու համար եւ կեղծ տեղեկութիւններ են տարածում իբր Հայաստանի Հանրապետութիւնում ազգային փոքրամասնութիւնների, մասնաւորապէս՝ եզդիական համայնքի նկատմամբ կիրառուող ճնշումների վերաբերեալ:*

*Նման կեղծիքի տարածումը ուղղուած է ոչ միայն եզդի ժողովրդի դէմ, այլեւ պետական մակարդակով հայերի հանդէպ Ատրպէյճանում արմատաւորուած ատելութեան մթնոլորտի տարածման նպատակ ունի:*

*Ի տարբերութիւն Ատրպէյճանի՝ Հայաստանում բնակուող ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ որեւէ բռնաճնշում, որեւէ խտրականութիւն չի կիրառւում: Հայ ու եզդի ժողովուրդները դարաւոր բարեկամներ են, ու այսօր էլ ՀՀ-ում բնակւում է մօտ 60 հազար եզդի: Ի տարբերութիւն աշխարհի շատ երկրների՝ Հայաստանում եզդիների իրաւունքները պաշտպանուած են օրէնքով: 32 դպրոցներում դասաւանդւում է եզդիերէն, համայնքն ունի եզդիերէն ռատիօհեռարձակման ժամեր:*



*Հայաստանի եզդի համայնքի ղեկավար Ազիզ Թամոյեան*

*Եզդի ժողովրդի զաւակները հայ ժողովրդի եւ Հայաստանում բնակուող ազգային այլ փոքրամասնութիւնների՝ եզդի, ասորի, յոյն, քուրդ, ռուս, հրեայ, լեհ, ուքրանացի քաղաքացիների հետ միասին մասնակցում են Հայաստանի զարգացմանն ու հզօրացմանը: Մեծ է եզդի ժողովրդի ներդրած աւանդը Արցախեան ազատամարտում, նրանց մասնակցութիւնը ՀՀ եւ Արցախի սահմանների պաշտպանութեանը: Արցախեան պատերազմի տարիներին եզդիների 500 հոգանոց ջոկատը կանգնած է եղել հայ ժողովրդի կողքին, եւ այսօր էլ եզդի պատանիները, որպէս Հայաստանի Հանրապետութեան լիիրաւ քաղաքացիներ, ազգային փոքրամասնութիւնների այլ ներկայացուցիչների հետ միասին պատուով ծառայում են զինուած ուժերում:*

*Վստահ ենք, որ ինչպէս Հայաստանի ամէն քաղաքացի, այստեղ ազատօրէն բնակուող եզդիները պատրաստ են Հայկական բանակի զինուորների հետ միասին պաշտպանել սահմանները թշնամիների յարձակումներից եւ ոտնձգութիւններից»:*

## Հայաստանի Չորրորդ ՄԻՊ-ը Արման Թաթոեանն է



*Հայաստանի Չորրորդ ՄԻՊ Արման Թաթոեան*

*«Ստանձնելով Մարդու իրաւունքների Պաշտպանի պաշտօնը, երդւում եմ, հաւատարիմ լինելով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեանն ու օրէնքներին, հասարակական համակեցութեան եւ արդարութեան սկզբունքներին, պաշտպանել մարդու եւ քաղաքացու իրաւունքներն ու ազատութիւնները», - ընտրուելուց յետոյ յայտարարեց Արման Թաթոեանը՝ վստահեցնելով, որ իր համար առաջնահերթ լինելու են քաղաքական հնչեղութիւն ստացած գործերը:*

*Ժամկէտներ չնշելով, նորընտիր օմբուդսմենը խոստացաւ այցելել կալանաւորուած քաղաքացիական ակտիվիստ Վարդգէս Գասպարիին ու «Նոր Հայաստան»-ի անդամ Գէորգ Սաֆարեանին:*

*Իր խօսքում, սակայն, Արման Թաթոեանը այդպէս էլ չգործածեց «քաղաքական բանտարկեալ» բնորոշմամբ - «Դեռ ինքս ունեմ շատ հարցեր պարզելու: Հասկանամ առաջնահերթութիւնը իւրաքանչիւր գործի եւ այլն»:*

*Չնայած հնչած քննադատութեանը՝ Թաթոեանը աւելի շատ ձայներ հաւաքեց, քան իր նախորդները: Իշխանութեան թեկնածուներ լինելով՝ Արմէն Յարութիւնեանը ստացել էր 87, Կարէն Անդրէասեանը՝ 83 պատգամաւորի քուէ: Իսկ Արման Թաթոեանի օգտին քուէարկեցին 96 պատգամաւորներ:*

*Խորհրդարանը, յիշեցնենք, Մարդու իրաւունքների պաշտպանին ընտրում է 6 տարի ժամկէտով:*

*Թաթոեանի թեկնածութեանը դէմ քուէարկեցին Ազգային ժողովի 7 պատգամաւորներ:*

*Նորընտիր օմբուդսմենը համաձայն չէ դիտարկմանը, թէ այսօր իր օգտին քուէարկեցին նաեւ մարդիկ, որոնք իր անուն-ազգանունն անգամ չգիտէին:*

*Ընտրութեանը ներկայ էին նաեւ ՀՀԿ-ական պատգամաւորներ Նահապետ Գէորգեանն ու Սամուէլ Ալեքսանեանը: Վերջինս այդպէս էլ չպատասխանեց «Ազատութեան» հարցին, թէ ում օգտին է քուէարկել:*

*Մինչեւ քուէարկութիւնը Մարդու իրաւունքների պաշտպանի թեկնածուին սատարելու մասին յայտարարել էին Հանրապետականն ու Դաշնակցութիւնը: «Օրինաց երկիր»-ի եւ «Բարգաւաճ Հայաստան»-ի պատգամաւորները, համաձայն խմբակցութիւնների ղեկավարների յայտարարութիւնների, ազատ էին քուէարկել:*

*«Ժառանգութիւն»-ը միասնական տեսակէտ չյայտնեց, իսկ Հայ Ազգային Կոնգրեսի (ՀԱԿ) խորհրդարանական խմբակցութեան ղեկավարը յայտարարել էր, որ չեն մասնակցելու ընտրութեանը:*

*Այդուհանդերձ Նիկոլ Փաշինեանը եկել էր քուէարկութեան: Նա ասել էր, որ կողմ է քուէարկելու ՀՀԿ-ի ներկայացրած թեկնածուին:*

## Ատրպէյճանը Գլխաւորում է Եւրոպայում Ամենաշատ Զէնք Ներմուծող Երկրների Ցանկը

*Միացեալ Նահանգներն ու Ռուսաստանը մնում են աշխարհում սովորական սպառազինութիւնների հիմնական զինատեսակների ամենախոշոր արտահանողները: Նրանց բաժին է հասնում զէնքի համաշխարհային շուկայի մօտ 60 տոկոսը. Միացեալ Նահանգներին՝ 33, Ռուսաստանին 25 տոկոսը: Այս մասին ասւում է Ստոկհոլմում գործող Խաղաղութեան խնդիրների ուսումնասիրութեան ինստիտուտի հրապարակած զեկոյցում:*

*Ռազմական խնդիրներով, մասնաւորաբար՝ սպառազինութիւնների գնումների դիտարկմամբ զբաղուող այս հեղինակաւոր վերլուծական կառոյցը փաստաթղթում նշում է՝ վերջին 5 տարում Միացեալ Նահանգների զէնքի արտահանման ծաւալներն աճել են 27 տոկոսով, իսկ ՌԴ-ինը՝ 28: Միաժամանակ, ուսումնասիրութեան համաձայն, 2014 եւ 2015 թուականներին Ռուսաստանից զէնքի արտահանման դանդաղման միտում է նկատուել, չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանը հենց այդ նոյն ժամանակահատուածում սկսել է զէնք մատակարարել Լուգանսկի եւ Դոնեցկի ռուսամէտ անջատականներին: Բայց թէ ռուսական զէնքի քանի տոկոսն է բաժին հասել Դոնեցկին եւ Լուգանսկին, շուէդական ինստիտուտը չի նշում:*

*Վերջին հինգ տարում Ռուսաստանը զէնք է մատակարարել 50 երկրների: Հիմնական գնորդների ցանկում փոփոխութիւններ չեն եղել՝ Հնդկաստան, Չինաստան, Վիետնամ:*

*Ատրպէյճանը շարունակում է մնալ Ռուսաստանի հաւատարիմ գնորդը: Իր զինանոցի պարունակութեան 80 տոկոսը Բաքուն Ռուսաստանից է ձեռք բերում, իսկ որոշ զինատեսակներ էլ ներմուծում է Ուքրանեայից, Բելառուսից, Իսրայէլից եւ Թուրքիայից:*

*Ռուսական զէնքի առաքումները Եւրոպա աճել են հիմնականում Ատրպէյճանին վաճառուող զէնքի հաշուին. 2011-2015թթ. Ատրպէյճանին վաճառուած ռուսական զէնքը կազմել է զէնքի ամբողջ արտահանման 4,9 տոկոսը, այն դէպքում, երբ 2006-2010թթ. ցուցանիշը կազմել է ընդամէնը 0,7 տոկոսը:*

*Այսպիսով՝ վերջին հինգ տարուայ ընթացքում Ատրպէյճանն աւելացրել է սպառազինութեան ներմուծումը 217 տոկոսով՝ գլխաւորելով Եւրոպայում ամենաշատ զէնք ներմուծող երկրների ցանկը: Ըստ ատրպէյճանական լրատուամիջոցների, պաշտօնական աղբիւրների համաձայն, Բաքուն վերջին հինգ տարուայ ընթացքում ռուսական զէնք ձեռք բերելու նպատակով 3-4 միլիարդ դոլար է ծախսել:*

## Քննարկւում է Արտաքին Գործերի Նախարարի հարցը

ՆԱՑԻՐԱ ՀԱՑՐՈՒՄԵԱՆ



Երէկ արտաքին քաղաքական հարցերով առաջին խորհրդակցութեան ժամանակ Սերժ Սարգսեանը յայտարարել է արտաքին տնտեսական կապերի հարցերով փոխարտգործնախարարի պաշտօն ստեղծելու մասին:

Սերժ Սարգսեանը Փետրուարի 12-ի ելոյթում յայտարարել է, որ ԱԳՆ-ը եւ դեսպանատները պէտք է զբաղուեն ներդրումների ներգրաւմամբ ու հայկական արտադրանքի համար սպառման շուկաների որոնմամբ: Տնտեսութիւնը, ըստ երեւոյթին, դառնում է արտաքին քաղաքականութեան գերակայութիւն, քանի որ քաղաքականութիւնը որպէս այդպիսին գրոյացուել է: ԱԳՆ-ը նշանակալի դեր է խաղացել, որ Հայաստանը դառնայ ԵՏՄ անդամ եւ մնացեալ աշխարհի հետ յարաբերութիւնները պայմանաւորել է այդ համակենտրոնացման ճամբարում անդամակցութեան հետ: Դրանից յետոյ մեղմ ասած աւելորդ է խօսել արտաքին քաղաքականութեան մասին:

Պատահական չէ, որ դրանից յետոյ արտաքին քաղաքականութեան գործառոյթները «բաժանուել են» մի քանի մասի ու փոխանցուել այլ գերատեսչութիւնների: Մասնաւորապէս, անվտանգութեան հարցերով արտաքին քաղաքականութիւնը ստիպուած է իրականացնել Պաշտպանութեան Նախարարութիւնը: Էներգետիկայի, էկոնոմիայի ու տրանսպորտի հարցերով՝ համապատասխան նախարարութիւնները:

ԱԳՆ-ին 3 հիմնական գործառոյթ է մնացել՝ ամէն առիթով յիշեցնել, որ Հայաստանը ԵՏՄ անդամ է, գլխաւորել ցեղասպանութիւնների դէմ շարժումը եւ պարբերաբար ֆրանկոֆոն հաւաքոյթներ անցկացնել: Դա թոյլ է տալիս Հայաստանը պահել ռուսական ուղեծրում՝ միեւնոյն ժամանակ չկտրուելով կլոբալ ու եւրոպական գործընթացներից:

Հայաստանի արտաքին գործերի նախարարը, ըստ նոր Սահմանադրութեան, պէտք է փոխվարչապետի կարգավիճակ ստանայ, հնարաւոր է, նոյնիսկ գլխաւոր բանակցող դառնայ ղարաբաղեան ու հայ-թուրքական բանակցութիւնների հարցերով: Ներկայում դրանով նախագահն է զբաղւում, որը համակարգում է արտաքին քաղաքականութիւնը: Սակայն, երբ հիմնական իշխանութիւնը կ՛անցնի վարչապետին, արտաքին քաղաքականութեամբ զբաղուելու է փոխվարչապետը՝ ԱԳ նախարարը:

Ո՞վ կը լինի յաջորդ արտգործնախարարը: Կարո՞ղ է Էդուարդ Նալբանդեանը պահել այդ պաշտօնը: Սերժ Սարգսեանի նախագահութեան օրօք նա ամենաերկարակեաց նախարարն է, եւ կարծիք կայ, որ նրա նշանակման ու ազատման հարցը Բաղրամեան 26-ում չեն որոշւում:

Սերժ Սարգսեանը Փետրուարի 12-ին ծրագրային ելոյթ է ունեցել եւ յայտարարել պետական քաղաքականութեան կառուցուածքի փոփոխութեան մտադրութեան մասին: Առանց երկրի ներսում արտաքին քաղաքականութեան փոփոխութեան նրան հազիւ թէ յաջողուի ինչ-որ բան փոխել: ԱԳՆ բնական գործառոյթներն այլ գերատեսչութիւնների խնդիրներով փոխարինելու փորձերը հազիւ թէ քօղարկի արտաքին քաղաքականութեան բացակայութիւնը:

## ՍԴՀԿ Հայաստանի Վարչութեան Քննարկոմը

Շարունակուած էջ 1-էն

կան խնդիրը եւ այլն: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի այն խօսքին, որ Հայաստանէն դէպի Արեւմուտք եւ Արեւելք՝ համարենք ճահիճ է, մեր յոյսները կտրենք Ատրպէյճանի եւ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բարելաւումէն:

Ընկ. Գալստեանը յայտնեց, որ Հայաստանի պետութիւնը այս պահուն չի կրնար ըսել, թէ մենք ունինք տարածքային պահանջներ Թուրքիայէն, սակայն երկրի ներսը քաղաքական ուժերը պարտաւոր են անընդհատ տաք պահել գրաւեալ հողերու վերադարձի հարցը:

Ապա, ելոյթ ունեցաւ թրքագէտ, պատմական գիտութիւններու թեկնածու Արամ Անանեան: Ան իր խօսքին մէջ նախ շնորհակալութիւն յայտնեց ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան այս համաժողովի առթիւ, ինչպէս նաեւ անդրադարձաւ Սուրիոյ նկատմամբ Թուրքիոյ նկրտումներուն եւ պատմական փաստերուն:

«100 տարի առաջ Թուրքերն այժմեան Սիրիայի տարածքում՝ Դեր-Զորում, ստեղծել էին աշխարհի ամենամեծ համակենտրոնացման ճամբարը, որտեղ ոչնչացնում էին մեզ՝ հայերիս: Սա հայերի Աուշուիցն է»,- ըսաւ Արամ Անանեանը:

Ելոյթ ունեցաւ քաղաքագէտ Հրանդ Մելիք-Շահնազարեան, որ նոր վերադարձած էր Միւնիխի մէջ կայացած Անվտանգութեան Համաժողովէն, ուր քննարկուած էր Սուրիոյ հարցը:

Ելոյթներով հանդէս եկան տնտեսագիտութեան դոկտոր փրոֆեսոր Թաթուլ Մանասերեան, քաղաքական գիտութիւններու դոկտոր փրոֆեսոր Ալեքսանդր Մարգարով, իրաւաբան Եղիշէ Բագոեան, արաբագէտ, պատմական գիտութիւններու թեկնածու Սարգիս Գրիգորեան, հալէպահայ մտաւորական Յակոբ Միքայէլեանը, եւ այլք:

Համաժողովի ամբողջական տեսագրութիւնը կարելի է դիտել «YouTube»-ի վրայ:

## Գերմանիոյ մէջ յարձակում՝ Հայկական ցուցահանդէսին վրայ



Գերմանիոյ Ախըն քաղաքին մէջ բացուած «1915-2015. Հայկական ճարտարապետութիւնը եւ ցեղասպանութիւնը» նիւթով ցուցահանդէսը անծանօթներու կողմէ յարձակման թիրախ դարձած է:

1915-ի ցեղասպանութենէն առաջ, օսմանեան սահմաններուն մէջ Հայոց մշակութային եւ ճարտարապետական կոթողներուն անցեալին եւ ներկայիս պարզած իրավիճակը ներկայացնող այս ցուցահանդէսին ցուցադրուած պաստառները վանտալներու կողմէ հատու գործիքներով կտրտուած են:

Ախընի հանրային ուսման կեդրոնը, որ կը հիւրընկալէր այս ցուցահանդէսը, ոստիկանութեան դիմելով բողոքած է. ձեռնարկուած է հետաքննութիւն:

Նշենք, որ ցուցահանդէսը արդէն ներկայացուած էր Գերմանիոյ զանազան քաղաքներուն մէջ: Հոն կը ցուցադրուին մեծ թիւով արեւմտահայերու ապրած քաղաքներու՝ Վանայ, Մշոյ, Եդեսիոյ, Կարինի, Կարսի, Այնթապի, Զմիւռնիոյ եւ Պոլսոյ մէջ հայկական մշակութային եւ ընդհանրապէս ճարտարապետական կոթողներու լուսանկարները, անոնց պատմութիւններու յիշատակումով:

Յարձակումին մասին արձագանգուած է նաեւ գերմանական մամուլին մէջ: Տեղական «Aachener Zeitung» թերթը՝ «Վանտալութիւն» խորագրին ներքեւ լուրը հաղորդելով, ուշադրութիւն հրաւիրած է նաեւ այն հանգամանքին վրայ, որ պատահածին գնահատականը պէտք է կատարել նաեւ ազգային ապահովութեան տեսանկիւնէ:

## Կաշառակերութեան Դէմ Պայքարը

Շարունակուած էջ 1-էն

թիւններու շարունակական խոստումներուն, Միջազգային Թափանցիկութիւն (Transparency International) կազմակերպութեան վերջին զեկոյցը եկաւ հաստատելու որ, կոռուպցիայի ընկալման առումով Հայաստանը անցեալ տարի նահանջ արձանագրած է:

Այսուհանդերձ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան հայաստանեան գրասենեակի ղեկավարը լաւատես է. - «Կը կարծեմ, Հայաստանի կառավարութիւնը շատ կարեւոր կը նկատէ մեր աջակցութիւնը եւ հայ-ամերիկեան յարաբերութիւնները՝ քանի որ հրապարակաւ յայտարարած են, որ կը պատրաստուին պայքարիլ կոռուպցիայի դէմ: Հայաստանի կառավարութեան համար ձախողման գինը կրնայ աւելի բարձր ըլլալ, քան հայ-ամերիկեան յարաբերութիւններն են: Իրական գինը հայաստանեան հանրութեան հետ յարաբերութիւնն է»:

Հայաստանի իշխանութիւնները առաջին տարին չէ, որ կը խօսին կոռուպցիայի դէմ պայքարի մասին: Աւելի քան չորս տարի անցած է Նախագահ Սերժ Սարգսեանի յայտնի հաւաստիացումէն, որ պիգնէսը պէտք է տարանջատուի իշխանութիւններէն, սակայն լրատուամիջոցներու էջերից ողողուած են բարձրաստիճան պաշտօնեաներու ընտանիքներու անդամներուն եւ ազգականներուն պատկանող պիզնէսներու մասին հրապարակումները:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

# «ՂԱՐԱԲԱՂԸ ՄԵՐՆ Է». ՄԵՆՔ ՂԱՐԱԲԱՂԻ՞ՆՆ ԵՆՔ



*ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ*

*Քրեմլինէն սկսած «Վերակառուցման» գեփիւռը 1988-ի Փետրուարին Անդրկովկասի մէջ վերածուեցաւ փոթորիկի, երբ տասնամեակներու երկայնքին անթեղուած ղարաբաղեան լաւան ժայթքեցաւ արագընթաց տարողութեամբ: Ցածթռուքի նախանշաններ ցոյց տուող Խորհրդային Միութեան ամենազգայուն կէտերէն մին՝ Լեռնային Ղարաբաղը շուտով գրաւեց աշխարհի ուշադրութիւնը, որովհետեւ քաղաքական գործընթացներէ աւելի ռազմական գործողութիւնները եղան գերակշիռ հայ-ատրպէյճանական հակամարտութեան հոլովոյթէն ներս: Ազգամիջեան բախումներու ամենադասական օրինակներէն մին էր, որ կը դրսեւորուէր ասկէ 28 տարիներ առաջ, որ ցայսօր կը մնայ անլոյծ օրակարգ՝ միջազգային հարթակներու վրայ:*

*Ղարաբաղի ճակատագիրը միշտ ալ ցաւոտ վէրք եղած է հայութեան համար: Խամսայի մելիքութեանց օրերէն ի հեճուկս հայ բնակչութեան ճնշող մեծամասնութեան, անոր պատկանելիութիւնը վիճարկած են թաթար եկուորներ՝ զայն վերջնականապէս կորզելու յետին նկատառումով: Բռնութեան, հալածանքի եւ վայրագութեան լեզուն կիրառած են անոնք, որոնք երազած են Արցախը հայաթափել, հայազրկել եւ միացնել Պաքուի իշխանութեան: 1905-ի եւ 1918-ի արիւնալի իրադարձութիւնները Ղարաբաղի շուրջ կը վկայեն, թէ տարածքը անգիջելի լեռնակղզի մըն է յաչս հայութեան, մինչ մշտապէս համեղ խայծ մը՝ ազերիական ծաւալամտութեան:*

*28 տարիներ առաջ կը կրկնուէր պատմութիւնը, անգամ մը եւս դէմ յանդիման բերելով երկու անհամատեղելի ժողովուրդները. վերջնական խօսքը պիտի վճռուէր ռազմադաշտին վրայ:*

*1988-ի Արցախի շուրջ ծաւալած կտրուկ իրադարձութիւնները մեր եզրաբանութեան մէջ բնութագրուած է որպէս «Ղարաբաղեան Շարժում»: Եթէ կային նախաձեռնական բոյլ մը տարրեր, շարժման ընթացք եւ ուղղութիւն տուող կարգ մը ուժեր, խորքին մէջ ան համազգային վերազարթօնքի խթան մըն էր՝ ազգին հանուր շերտերը զօրաշարժող:*

*Ներազգային առումով, Ղարաբաղեան Շարժման հետ կապուած կարելի է առանձնացնել երեք երեսակներ:*

*Ա.- Հողային հարց մըն էր այդ, որ կը պահանջէր իր արդար եւ իրաւացի հանգուցալուծումը: Ղարաբաղի ազգաբնակչութիւնը ազգային ինքնորոշման իրաւունքի հիման վրայ կը ցանկար միանալ Հայաստանի Հանրապետութեան: Այս մեկնակէտէն ելած, կարելի չէ ըստ քմայքի եւ հաճոյքի սահմաններ գծել ու պարտադրել: Ժողովուրդներ ունին իրենց ազգային արժանապատուութիւնը եւ իրենց ապագան տնօրինելու տարրական իրաւունքը, ինչ որ զլացուած էր արցախահայութեան: Աւելին, պարտադրեալ հեղձուցիչ պայմանները սկսած էին սպառնալ տեղի բնակչութեան ազգային, մշակութային, հոգեւոր, բարոյական առանձնայատկութիւններուն: Ինքնութեան յարատեւման հարցն էր դրուած, քանզի հետեւողական ջանադրութեամբ Պաքու հետամուտ էր Ղարաբաղի հայաթափման՝ յանուն ազերիական բնակչութեան խտացման: Ժողովրդագրական տեղաշարժը եթէ շարունակուէր ըստ Ալիեւի քաղաքականութեան, ապա Ղարաբաղը պիտի նմանէր Նախիջեւանի եւ կատարուած իրողութեան դիմաց՝ Արցախ կուլ պիտի երթար Պաքուի ձուլամէտ նկրտումներուն: Ուրեմն՝ Ղարաբաղեան Շարժումը կանխեց վերահաս վտանգը, հեռագնայ սադայէլական ծրագիր մը:*

*Բ.- Ռազմական մարտահրաւէր մըն էր այդ՝ քաղաքական աքթ ըլլալու կողքին: Հոն ուր բանակցութիւնները կը ձախողին, հոն ուր դիւանագիտութիւնը կը մատնուի անելի, վճռորոշ խօսքը բնականաբար կ'իյնայ մարտիկներու ուսերուն: 1988-ին բռնկած շարժումը աստիճանաբար վերածուեցաւ պատերազմի՝ երկու հարեւան ժողովուրդներու միջեւ: Պատերազմի նախադրեալները պարարտ էին, ժամանակը հասունցած կը թուէր ըլլալ, ներհակընդդէմ կողմերը անգիջում էին՝ ուղղուելու արիւնալի մարտերու: Երկկողմանի հազարաւոր զոհերէ, տեղահանուածներէ, նիւթական ու բարոյական սոսկավիթխար կորուստներէ ետք, վեցամեայ պատերազմը 1994 Մայիս 12-ին կանգնեցաւ՝ հրադադարի հաստատումով: Հրադադար՝ որ ցարդ կը խախտի իր լպրծունութեան եւ մշուշոտութեան պատճառներով:*

*Գ.- Բարոյահոգեբանական երեսակը Ղարաբաղեան Շարժման ու Արցախի պատերազմին դարձակէտային նշանակութիւն ունեցաւ մերազն սերունդներուն համար: Ընդմիշտ պարտեալի, տուժածի եւ զոհի կարծրատիպը փուլ գալով ձեւաւորուեցաւ յաղթականի տիպարը: Վերջապէս վերագտանք մեր երբեմնի որձութիւնը՝ իգավարի կականներէ ետք: Ակնարկ մ'իսկ մեր անցեալին վրայ հերիք է նշմարելու, որ միշտ կորսնցուցած ենք հող ու տարածք: Սակայն՝ 1988-էն 1994 պատկերը հակառակն էր: Արեան գետեր հոսեցան՝ ապացուցելու համար որ մենք նաեւ կրնանք յաղթանակ արձանագրել: Այս բարոյահոգեբանական ցնցումը այնքա՜ն անհրաժեշտ էր վերակոփելու մեր նկարագիրը եւ պաղ ցնցուղ մը տալու ամէն գոյնի հակառակորդներու:*

*Վերոյիշեալ երեք երեսակները ամփոփելով կրնանք եզրակացնել, թէ 20 Փետրուար 1988-ին ալեկոծուած շարժումը ազգին գոյակռիւն էր ոչ միայն Արցախի ճակատին վրայ, այլ՝ լինելութեան, պատուախնդրութեան եւ մշտնջենական գոյատեւման իմաստներով:*

*«Ղարաբաղը մերն է» կը գոռայինք 28 տարիներ առաջ: Պատմութեան եւ պայքարի տրամաբանական շղթայ մըն էր որ յանգեցաւ Ղարաբաղի եւ յարակից ազատագրուած տարածքներուն արցախացմամբ՝ այսինքն՝ հայկականացմամբ:*

*Տրամաբանութեան շղթան շարունակուեցա՞ւ, թէ՞ հակատրամաբանութիւնը եղաւ իրողութեան տէրը:*

*Ահա այսօրուան հրատապ հարցումը:*

*Իսկ ո՞րն է հակատրամաբանութիւնը:*

*«Ղարաբաղը մերն է», իսկ մենք Ղարաբաղի՞ն ենք, երբ Արցախն ու շրջակայ տարածքները չենք կրնար բնակեցնել հայութեամբ: Ընդարձակ հողաշրջաններ կը մնան ապալեր ու լերկ. երբ անվար է հողը եւ կորդ է դաշտը, հապա որո՞ւ համար ինկան նահատակները նուիրական: Ի՞նչ արցախատիրութեան մասին է նշանախօսքը, երբ ղարաբաղցին կը չուէ Հայաստան, հայաստանցին՝ արտասահման. երբ՝ երեւանցին խէթ աչքով կը նայի արցախահայուն, իսկ ղարաբաղցին՝ տիրակալի ու սանձազերծի ախորժակով է գինուած Հայաստանի տարածքին: Հետեւաբար՝ ցորքան չենք խտանար հողին վրայ՝ կարգախօսը կ'ըլլայ փուչիկ մը սոսկ:*

*Փորեղ հատոր մը կը թերթատեմ ստէպ. Հայաստանի հանրագիտարանի խմբագրութեամբ հրատարակուած «Ղարաբաղեան Ազատագրական Պատերազմ. 1988-1994» խորագիրով. լոյս տեսած Երեւան՝ 2004-ին: Ինչ հերոսական դէմքերու, պանծալի նահատակներու, տիպար կանանց, սխրալի ճակատամարտերու, ազատագրուած աւաններու եւ գիւղերու անուններ կը կարդաք հոն:*

*Ինչո՞ւ: Անմարդաբնակ հայրենիքի՞ համար: Ամայի ու անջրդի հողի՞ համար:*

*1988-ին՝ «Ղարաբաղը մերն է»:*

*2016-ին՝ մենք Ղարաբաղի՞ն ենք: Մենք Հայաստանի՞ն ենք:*

*Ահա ցաւատանջ մտորում մը արդարեւ:*

www.massispost.com
daily news updates

Bedros S. Maronian
818/500-9585
Siamanto B. Maronian
818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900
Los Angeles, CA 90048
805 East Broadway
Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500
Pasadena, CA 91101
• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability
• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning
• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B
A.B.A. INSURANCE SERVICES
New York Life · Anthem · BlueShield · Aetna · Health Net · CIGNA · KAISER PERMANENTE
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.



# ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՋՈՂ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

## Միութեան Խնամակալ Մարմնի Ատենապետ՝ Իրաւ. Արսէն Դանիէլեանի խօսքը Ի Նպաստ Սուրիահայութեան Օժանդակութեան Հաւաքին

*Գաղութիս առաջնակարգ կազմակերպութիւններէն Լոս Անճելոսի Իրանահայ Միութիւնը գեղեցիկ գաղափարն ունեցած էր կազմակերպելու հանգանակային ճաշկերոյթ մը ի նպաստ սուրիահայ գաղութի անյետաձգելի կարիքներուն:*

*Աւելի քան 400 հոգիներ հրաւիրուած էին սոյն ազգօգուտ միջոցառումին, որ տեղի ունեցաւ անցեալ Շաբաթ, Փետրուարի 20ին, 2016 թ. Իրանահայ Միութեան սրահին մէջ: Ներկաներուն մէջ կը նշմարուէին Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս՝ Վալերի Մկրտումեան, Կլենտէյլի քաղաքապետ՝ Արա Նաճարեան, հայկական տարբեր կազմակերպութեանց եւ մամուլի ներկայացուցիչներ եւ ծանօթ ազգայիններ:*

*Սուրէն Մկրտիչեանի կատարմամբ ԱՄՆի եւ Հայաստանի քայլերգերու յոտնկայս ունկնդրութենէն ետք բացման խօսքով հանդէս եկաւ Միութեան նախագահ Յովիկ Գապիգեանը: Ան ողջունեց բոլոր ներկաները, որոնք համախմբուած էին իրենց նեցուկն ու համագործակցութիւնը ցուցաբերելու ի նպաստ Սուրիոյ հայութեան:*

*Հանդիսավար Թոմիկ Ալեքսանեան ամփոփ կերպով ներկայացուց իր ղեկավարած Իրանահայ Միութեան ազգանուէր եւ հայրենանուէր վսեմ առաքելութեան առաջադրանքներն ու օգտաշատ ներդրումները տարբեր բնագաւառներու մէջ: Ան կոչ ուղղեց մասնակցիլ սուրիահայութեան ի նպաստ Թելեթոնին:*

*Գաղութիս ծանօթ ազգային բարերար Տօքթ. Յակոբ Այնթապլեան, լուսապատկերներու միջոցով հակիրճ պատմականը ըրաւ ցեղասպանութեան եւ վերապրած տարագիր հայութեան, որոնց մեծ մասը ապաստան գտած է Հալէպ քաղաքին մէջ: Ինք եւս կոչ ուղղեց մասնակցիլ դրամահաւաքի գործին: Այս առթիւ կատարեց 10,000 տոլարի նուիրատուութիւն մը, ի նպաստ սուրիահայ ուսումնատենչ դպրոցականներուն, որոնց համար ստեղծած է առանձին ֆոնտ մը:*

*Օրուան գլխաւոր բանախօսն էր Իրանահայ Միութեան Խնամակալ Մարմնի ատենապետ՝ Արսէն Դանիէլեանը: Ան իր ելոյթին մէջ ընդգծեց որ Իրանահայ Միութիւնը կը պատկանի բոլոր հայերուն անխտիր եւ իր դռները բաց են բոլորի առջեւ: Այնուհետեւ սուրիահայութեան շտապ օգնութիւն ցուցաբերելը անյետաձգելի առաջնահերթութիւն նկատեց եւ կոչ ուղղեց մեր համայնքի բոլոր զաւակներուն, ազգային միասնականութեամբ աջակցիլ հանգանակային գործին:*

*Երեկոյի մթնոլորտը խանդավառեցին տաղանդաւոր արուեստագէտներ ասմունքող Նունէ Աւետիսեան, հայրենի անուանի երգիչ Անդրէն, դերասան եւ երգիչ Ռազմիկ Մանսուրեան, դաշնակահարուհի Ալին Մելիք-Ադամեան, երգչուհի Մելիսա Զաքարեան եւ երգիչ Սուրէն Մկրտիչեան:*

*Կլենտէյլի քաղաքապետ՝ տիար Արա Նաճարեան իր խօսքին մէջ գնահատանքով անդրադարձաւ Իրանահայ Միութեան այս միջոցառումի նախաձեռնութեան համար եւ յորդորեց ներկաները անմասն չմնալ եւ գործնապէս աջակցիլ սուրիահայ մեր եղբայրներուն եւ քոյրերուն օգնելու գործին:*

*Սուրիահայութեան Օժանդակութեան Հիմնադրամի (SARF) պատասխանատուներէն Ռաֆի Քէնտիրճեան կոչ ուղղեց ներկայ հասարակութեան դրական մասնակցութիւն բերել վաղուան համար նախաձեռնուած Թելեթոնին, որուն նպատակն է գործնապէս աջակցիլ մեր սուրիահայ քոյրերուն եւ եղբայրներուն:*

*Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելոսի աւագ հիւպատոսի օգնական Տիար Վալերի Մկրտումեան, շնորհաւորելէ ետք իրանահայութեան գեղեցիկ միջոցառումը զայն համարեց հայրենասիրական ջերմ ոգիի արտայայտութիւն: Այս առթիւ ան նշեց նաեւ որ Հայաստանի կառավարութիւնն ալ հնարաւոր բոլոր միջոցներով իր գործնական աջակցութիւնը կը ցուցաբերէ սուրիահայ մեր ազգակիցներուն: Անոնցմէ շուրջ 17 հազար հոգի, այսօր հիւրընկալուած են Մայր Հայրենիքէն ներս եւ կը վայելեն ամէն տեսակի անհրաժեշտ օժանդակութիւններ, որպէսզի հեշտ ըլլայ անոնց կեցութիւնը հայրենի հողին վրայ: Ան յաջողութիւն մաղթեց ծրագրուած աշխատանքներուն, ինչպէս նաեւ խաղաղութիւն եւ մշտական անդորրութիւն մաղթեց սուրիահայութեան:*

*Սոյն յիշատակելի երեկոյի աւարտին շնորհակալական խօսքով հանդէս եկաւ Իրանահաայ Միութեան վարչութեան փոխ ատենապետ՝ Փիթըր Տարագճեան: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր խօսք առնողներուն, գեղարուեստական բաժնի մասնակիցներուն եւ նուիրատուներուն:*

*Տեղեկացանք, թէ սոյն միջոցառումէն գոյացած է 42 հազար տոլար:*

*Այս յաջող եւ շնորհաւորելի նախաձեռնութեան համար մեծապէս գնահատելի են կազմակերպիչ յանձնախումբի անդամները:*

### Արսէն Դանիէլեանի խօսքը

*Մօտաւորապէս 5 տարիներից ի վեր, Սուրիայի ժողովուրդը, եւ նրա հետ այդ երկրի հայութիւնը, ի մասնաւորի Հալէպի մեր հարազատները ապրում են օրհասական մի տագնապ, որի ծալքերի մասին ամէն օր հասնում են սրտաճմլիկ տեղեկութիւններ:*

*Մեզ՝ ապրուստի համեմատաբար հանգիստ պայմաններ վայելողներիս համար, գուցէ մի քիչ դժուար է ըմբռնել, թէ ինչ է նշանակում ամէն պահ ապրել գլխավերեւում սուրացող օդանաւերի եւ հրթիռների ժխորի ներքոյ եւ ունենալ այն սրտդողումը, որ հիմա մի հրթիռ էլ պիտի հարուածի մեր բնակարանը, աշխատավայրը, այն փողոցը որտեղից գնում ես զաւակներիդ համար ապրուստի կենսական կարիքները ապահովելու, եւ կարող ես զոհը դառնալ գազանաբարոյ մարդորսների□*

*Նոյնչափ դժուար է երեւակայել, թէ պէտք է օրեր անցնես առանց ելեքտրականութեան հոսանքի եւ առանց ջրի. Կենսատու ջուր ունենալու համար պիտի դիմես մի քանի հարիւր մեթր հեռու*



*գտնուող մի ջրհորի կամ ջրամբարի, որպէսզի տանդ լուացարանի համար ջուր կրես: Էլ չեմ խօսում պատերազմական կացութեան հետեւանքով ահաւոր չարաշահութիւնների մասին, տարրական սննդամթերքի չգոյութեան, սղութեան կամ նրա որակի մասին:*

*Հինգ տարի առաջ ստեղծուած եւ արագօրէն ծանրացած պատերազմական այս վիճակը ահաւոր նահանջների է ենթարկել Սուրիայի մեր հայկական օջախը, սակայն հակառակ նման անտանելի վիճակի, բազմահազար հայրենակիցներ դեռ շարունակում են իրենց կեանքը: Գործում են ազգային հաստատութիւններ, բարեսիրական կազմակերպութիւններ, գործում են մանաւանդ հայկական դպրոցները, ուր մանուկ ու պատանի աշակերտներին ուսում է ներարկւում աներեւակայելի խոչընդոտների յաղթահարումով:*

*Սուրիայի մեր հարազատները տակաւին մի քանի տարի առաջ ապրում էին բարօր պայմաններում, կենսագործում էին իբրեւ մարդ եւ իբրեւ հայ: Նրանք որեւէ բանի կարիքը չունէին, այլ ընդհակառակն, իրենց օժանդակող ձեռքերը չէին խնայում մեր հայրենիքին ու հայկական աշխարհի բոլոր այն շրջաններին ուր աջակցութեան կարիք էր զգացւում: Այսօր, սակայն, նրանց կամքից անկախ, պատերազմը քանդել է բնակարաններ, փոշիացրել է գործատեղերը, մոխրացրել է շատերի նիւթական կարողութիւններն ու կարողականութիւնը: Բազմահարիւր անմեղներ զոհ են գնացել կոյր ռմբակոծումների, մարդորսների: Կրթական հաստատութիւններ, դպրոցներ ու ազգային հաստատութիւններ ծանր վնասների են ենթարկուել: Ստեղծուել է այնպիսի մի վիճակ երբ որպէս անհատ, ընտանիք կամ հաւաքական գաղութ՝ գոյատեւելը դարձել է անկարելի: Բայց նաեւ ըստ կարելւոյն նորոգուել են եկեղեցի ու դպրոց, ու շարունակւում է նուիրական առաքելութիւնը:*

*Սուրիային պարտադրուած պատերազմական այս վիճակը ունի յայտնի եւ մութ բազմաթիւ երեւ-*

*Շար.ը էջ 18*

Հրապարակային Քննարկում

Կազմակերպութեամբ՝
ՍԴՀԿ «Փարամազ» Մասնաճիւղի

Նիւթ՝
Փարամազ Եւ Հրանդ Տինք

Օսմանեան Կայսրութեան
Եւ Թուրքիոյ Հանրապետութեան
Ժողովրդականացման Առաքեալները

Կը Զեկուցէ՝
Յարութ Տէր-Դաւիթեան

Տեղի Կ'ունենայ Չորեքշաբթի, Փետրուար 25, 2016-ի
Երեկոյեան ժամը 8-ին, Փասատինայի ՀՄՄ-ի
«Կարօ Սողանալեան» սրահին ներս

1060 N. Allen Ave. Pasadena Ca. 91104



# Ա. ԵՒ Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 31-ՐԴ ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ



Վարժարանս տօնեց իր հիմնադրութեան 31րդ տարեդարձը ճաշկերոյթ-պարահանդէսով մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, Յունուար 30, 2016ին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ «Կիրակոս» սրահին մէջ:

Ծնողա-ուսուցչական կազմին եւ տնօրէնութեան կազմակերպած սոյն ձեռնարկը յաջող արգասիքն էր անոնց կատարած երկար ամիսներու ծրագրումին եւ աշխատանքին:

Ճաշկերոյթ-պարահանդէսին բացումը կատարեց Տկն. Ճիլ Սիմոնեանը՝ պատկերասփիւռի խօսնակ եւ հիմնադիրը thefabmom.com համացանցային օրագրին: Ան իր խօսքին մէջ նկատողութեան յանձնեց ծնողա-ուսուցչական անդամներուն կատարած հրաշալի աշխատանքը, որուն շնորհիւ ամբողջ սրահին զարդարանքն ու բեմայարդարումը լաւապէս կը ներկայացնէր 007 շարժապատկերներուն մթնոլորտը, նկատի առնելով որ այս տարուան ճաշկերոյթ-պարահանդէսին թեման էր այդ:

Ան բեմ հրաւիրեց Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի առաջնորդ սրբազան հայրը՝ Յովնան արք. Տէրտէրեանը: Սրբազանը իր



խօսքին մէջ դրուատեց վարժարանիս կատարած աշխատանքը, տնօրէնութեան ղեկավարութիւնը եւ ուսուցչակազմին անսակարկ նուիրումը իրենց կոչումին հանդէպ: Ապա բեմ հրաւիրուեցաւ եկեղեցւոյս հովիւ՝ Տէր Սարգիս Փեթոյեանը, որ իր աղօթքով օրհնեց ճաշկերոյթի սեղանները, ու ապա փոխանցեց, որ այս տարեշրջանը մեր վարժարանի տնօրէնին պաշտօնավարութեան տասնամեակն է: Այս առթիւ յատուկ պատարագի արարողութիւն պիտի կատարուի Կիրակի, Մարտ 13ին եկեղեցւոյս մէջ:

Բեմ հրաւիրուեցաւ վարժարանիս հոգաբարձութեան ատենապետ Պրն. Ասպետ Թաթուլեանը, որ իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց ծնողա-ուսուցչական կազմին կատարած աշխատանքին, ինչպէս նաեւ շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք հաւատք ունին հայկական դպրոցին առաքելութեան եւ կը վստահին իրենց զաւակներուն դաստիարակութիւնը մեր հաստատութեան:

Հիւրաբար մեր ձեռնարկին ներկայ էր Conan O'Brienի օգնականը՝ Օրդ. Սօնա Մովսէսեանը: Ան խօսք առնելով նախ դրուատեց իր ծնողքին կատարած ճիշդ որոշումը՝ իր կրթութիւնը վստահելու հայկական վարժարանի, ուր աճած է մեր հայրենիքին եւ ազգին հանդէպ իր ունեցած սէրն ու յարգանքը, ապա խօսեցաւ իր իրլանտացի վերակացուին հետ Հայաստան այցելութեան փորձառութեան եւ անցուդարձերուն մասին:

Ապա բեմ հրաւիրուեցաւ վարժարանիս տնօրէն Պրն. Շահէ Մանկրեանը եւ հաճելի ու զուարճալի ձեւով շնորհակալութիւն յայտնեց վարժարանիս մէկ մեծ հովանիին տակ համախմբուած բոլոր կազմերը, որոնց իւրաքանչիւրին պիտակեց 007 շարժապատկերներուն անուններուն նման հիանալի որակումներով, իրենց կատարած անշահախնդիր աշխատանքներուն համար:

Յայտագրին պաշտօնական բաժնէն ետք, բեմ հրաւիրուեցաւ օրուան առաջին երգիչը՝ Շիրազը, որ մթնոլորտը ջերմացուց իր ժողովրդական երգերու մեկնաբանութեամբ: Ապա բոլորին համար սպասուած հաճելի անակնկալն էր երգիչ Արմենչիկին բեմ բարձրանալը, որ իր երգերով խանդավառեց ներկաները:

Կ'արժէ նշել, որ նման ձեռնարկներուն հասոյթները կը յատկացուին վարժարանիս տարբեր կարիքները հոգալու՝ սատարելով անոր բարելաւման: Այս տարուան ձեռնարկին հասոյթը պիտի տրամադրուի վարժարանին ապահովական մարզին:

**ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆ**
**ՍԱՀԱԿԵԱՆԻ ՕՐ**
**Մայիս 15, 2016**

# 19-ՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԲԺՇԿԻ ԱՉՔՈՎ



Չորեքշաբթի, 10 Փետրուար 2016ին, Տոքթոր Ռաֆֆի Պալեանը ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանի մէջ դասախօսութիւն մը տուաւ Թոքախտի եւ 19րդ դարու հայ բանաստեղծներու մասին, որոնք տառապած էին այդ հիւանդութենէ:

Դպրոցէն ներս 9րդ եւ 10րդ դասարաններու յառաջադէմ խումբերու աշակերտները կ'ուսումնասիրեն հայկական գրականութեան Գեղապաշտ Շրջանը:

Դասախօսութեան սկիզբը, աշակերտները յոտնկայս արտասանեցին Միսաք Մեծարենցի «Սիրերգ»ը: Ապա հիւր դասախօսը ներկայացուց Թոքախտի համառօտ պատմութիւնը, անոր պատճառ եղող մանրէն, հինգ ախտանշանները, բժշկութեան միջոցներն ու անոր բազմաթիւ տեսակները: Յարգելի հիւրը նաեւ պատմեց, թէ 19րդ դարուն Թոքախտաւորները Թոքերուն ցաւը թեթեւցնելու համար գործածեր են ,հաշիշ ու բալասանե. երկու դեղամիջոցներ, որոնք յիշուած են այդ բանաստեղծութեան մէջ:

Աշակերտները շնորհակալական բացիկ մը նուիրեցին Տոքթոր Պալեանին, ապա դասախօսութիւնը վերջ գտաւ հարց-պատասխանով:

Տոքթոր Պալեանի դասախօսութիւնը աւանդութիւն մը դարձած է: Ան տարեկան այցելութիւններով աշակերտներուն մատչելի բժշկական լեզուով կը բացատրէ Թոքախտագրականութիւն յարաբերութիւնը եւ կու տայ կարեւոր լուսաբանութիւններ:

Կալին Աղէկեան
(9րդ դասարանի աշակերտուհի)

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆ ԹԻՒ 119 ՐԴ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԷՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՀԵՏ



Վարչութիւնը տնօրէն Յովհաննէս Կարապետեանի հետ

Հինգշաբթի 18 Փետրուար 2016 ին Սահակեան Սանուց Միութեան վարչութիւնը հանդիպում ունեցաւ Երեւանի «Բենիամին Ժամկոչեան» Թիւ 119 րդ դպրոցի տնօրէն՝ Տիար Յովհաննէս Կարապետեանի հետ, Փասատինայի Սահարա ճաշարանի մէջ: Յարգելի Պրն. տնօրէնը, մանրամասն զեկուցեց «Բենիամին Ժամկոչեան» Դպրոցի ուսումնական մակարդակի, աշակերտութեան թիւի, արձանագրած յաջողութիւններու եւ դիմակալած կարիքներու մասին:

Մանրամասնութիւնները լոյս պիտի տեսնեն մեր յաջորդ թիւով:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

# Massis Weekly

Volume 36, No. 7 Saturday, February 27, 2016

## The Syrian Conflict: Possible Influence of Russian-Turkey Relations on Armenia



YEREVAN -- Armenia's Social Democrat Hunchakian Party (SDHP) organized a seminar discussion on The Syrian Conflict: Possible Influence of Russian-Turkey Relations on Armenia"

"Daily developments in the Middle East are rapidly changing the geopolitical situation, and Armenia is directly linked to the developments," said Narek Galstyan, Chair of the Social Democrat Hunchakian Party's Armenia Executive Committee. "As the crisis deepens in Syria, Turkey has even launched air strikes at the positions of Kurdish militias and the Syrian army. The stability of Kurdish life inside Turkey and in Syria is also deteriorating. All the while, Israel is issuing statements on a need for a Kurdish state. Armenia must calculate all possible scenarios of developments in both the Middle East and our region. Armenia should be consistent in its steps and be ready to protect its interests and if need be, its original lands in Western Armenia."

"Armenia cannot stand aside during these processes. How well is our country and foreign policy prepared to meet the current challenges? Armenia, Armenian political and civil intellects must be prepared." continued Galstyan.

Syrian-Armenian columnist, and political analyst, Hakob Mikaelian said that he had lived in Syria for about 70 years and enjoyed the country's favorable attitude. According to him, there are many "why's" in the Syria conflict, and no question has so far been answered. "The Syrian regime has always had pro-Russian views, thus it is no surprise the level of global and regional proxy war being engaged in Syria," he said. "The Armenian communities in Syria, with all the Armenian organizations, educational and cultural centers, were well respected, yet the Armenian communities of Syria and to a lesser degree the Middle East are in danger of disappearing." Mikaelyan is sure that Turkey strives to leave no Armenian trace in the region. "While we were preparing to commemorate the centennial of the Armenian Genocide in Ottoman Empire, Turkey was celebrating that date by aiding the destruction of our cultural heritage in Syria," the analyst concluded.

"Turkey considers the Middle East and the region from the perspective of neo-Ottoman syndrome. It does not come to terms with the loss of its influence in the region." stated Aram Ananyan, an expert in Turkish studies. "When the Treaty of Lausanne was signed in 1923 and Turkey confined itself within the southern borders, even at that time there were complaints. Turkey had ambitions towards the north of Iraq and Syria. Examining the "Justice and Development" party's policy, we see that there is a big difference

Continued on page 3

## New Armenian Ombudsman Elected

The National Assembly voted overwhelmingly on Tuesday to appoint Armenia's new human rights ombudsman nominated by President Serzh Sarkisian's Republican Party (HHK).

Arman Tatoyan, who served as a deputy minister of justice until now, was backed by 96 of the 131 members of the Armenian parliament. He was sworn in for a six-year term immediately after the vote.

The position has been vacant since its previous holder, Karen Andreasian, unexpectedly stepped down on January 12. He gave no clear reasons for the move.

Andreasian was publicly attacked by several HHK parliamentarians in October when he presented the National Assembly with an annual report on the work of his office. He denounced the harsh criticism as a smear campaign ordered by an unnamed government-linked individual.

The ruling party, which enjoys a

Continued on page 2

## Russia Grants Armenia $200 Million Loan for Purchase of Advanced Military Products

MOSCOW — The Russian government has granted Armenia a $200 million loan for the purchase of military products, according to Russian media reports. Under the terms of the 10-year export loan Armenia would have to pay 10 percent for all purchases, with the rest to be covered by the credit.

The Russian government posted on one of its websites a copy of the loan agreement that was signed by the two sides in Yerevan in June last year. Under the terms of the loan Armenia will buy Russian Smerch rocket launchers and ammunition, Igla-S air defense missile systems, Avtobaza-M ground-based radar jamming and deception systems, the TOS-1A heavy flame-throwing systems with transporter-loader vehicles, 9M113M guided missiles, RPG-26 grenade launchers, Dragunov sniper rifles, Tiger armored vehicles, engineering means and communication systems.

The heaviest weapon on that list is the Smerch multi-launch rocket system with a firing range of up to 90 kilometers. One of the most destructive weapons of its kind in the world, it can fire 12 300-milimeter rockets in less than a minute.

An annex to the 2015 Russian-Armenian agreement revealed on Thursday says that the Armenian government will also spend the $200 million loan on buying Russian-made anti-tank weapons, shoulder-fired surface-to-air missiles, demining and communication equipment, armored personnel carriers and heavy military trucks.

The anti-tank systems include 9M133 guided missiles that first went into service with the Russian army in the late 1990s.The 135-milimeter rockets can supposedly destroy tanks within a 4-kilometer range.

Citing another Russian-Armenian accord signed in 2013, Armenian military official stress that Yerevan can now buy brand new weapons at domestic Russian prices that are well below international market-based levels. The 2015 loan agreement makes a reference to that deal.

The military alliance with Russia has already enabled Armenia to receive many Russian weapons at discount prices or even free of charged over the past two decades. That has put it in a position to fully or partly offset Azerbaijan's massive military buildup fueled by oil revenues. Ohanian thanked Moscow for its "huge" military assistance when he met with Russian Defense Minister Sergey Shoygu in Moscow in December.

## Russia Deploys Advanced Aircraft to Armenia



MOSCOW (RT) -- Russia has sent five additional Mig-29 fighter jets and a multipurpose helicopter to its military base in Armenia, the Russian Defense Ministry reported.

The aircraft have been transported to a military airfield in the Armenian capital of Yerevan and will soon arrive at Erebuni airfield, where planes attached to the 102th military are based, the command for the South-Eastern Military District said on Saturday.

"Soon military engineers will assemble generation 4+ fighter jets and the Mi-8MT helicopter, which will then enter service," the report said. "The unit's pilots will start practice flights on the new Mig-29s in mid-March."

Four of the fighter jets are regular Mig-29s, which were recently overhauled. Another one is an upgraded Mig-29S version, which has double the payload amounting to four tons and several other improvements. The new aircraft strengthen the 18 Mig-29s and 7 Mi-24P helicopter gunships already based at Erebuni.

The build-up comes amid a period of high tension between Russia and Turkey in the wake of the downing of a Russian bomber by the Turkish Air Force on the Syrian border. Erebuni airfield is south of Yerevan and about 20km from the Turkish border.

## Pope Francis to Visit Armenia in September



YEREVAN (RFE/RL) - Pope Francis is set to visit Armenia in September 2016, press service of the Mother See of Holy Etchmiadzin reports. The announcement came in an official ststement of the Supreme Religious Council, chaired by His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians.

The Mother See is currently coordinating the details of the visit with the Vatican. Pope Francis will likely travel to Armenia as part of a tour of the three South Caucasus states. Citing unnamed Vatican sources, the Russian TASS news agency reported earlier this month that the pontiff plans to visit Armenia, Azerbaijan and Georgia in September.

One of Pope Francis's predecessors, John Paul II, and the previous Armenia Church head, Garegin I, laid the groundwork for the rapprochement in 1996 with a joint declaration that put an end to centuries-old theological disputes between the two Christian denominations. John Paul went on to become in 2001 the first Catholic Church leader to set foot on Armenian soil. During that historic trip, he issued a joint declaration with Garegin I describing the 1915 Armenian massacres in Ottoman Turkey as genocide.

Pope Francis has publicly reaffirmed the genocide recognition during his papacy, most recently at an April 2015 mass at the Vatican's St. Peter's Basilica dedicated to the 100th anniversary of the tragedy. Turkey reacted angrily to his reference to "the first genocide of the 20th century," accusing the pontiff of distorting history and recalling its ambassador to the Vatican in protest.

Pope Francis again paid tribute to Armenians massacred "just for being Christians" after holding a mass with Armenian Catholic Patriarch Gregory Peter XX at the Vatican's St. Martha chapel in September. He compared their suffering with the ongoing persecution of ancient Christian communities of the Middle East.

## World Bank Provides $55 Mln lLoan to Armenia

Armenian Minister of Finance Gagik Khachatryan and World Bank's Regional Director for the South Caucasus Mercy Tembon signed a loan agreement today, under which the World Bank will provide Armenia with a loan of $55 mln with a 25 year maturity period, of which 14.5 mln will be soft loan.

The "Local Economy and Infrastructure Development Programme" loan agreement signed with the International Bank for Reconstruction and Development (IBRD) envisages improvement of infrastructure and institutional capacities in Ararat, Vayots Dzor and Lori provinces, thus boosting the development of tourism in the regions.

## New Armenian Ombudsman Elected

**Continued from page 1**

comfortable majority in the parliament, has denied forcing him to resign.

Under Armenian law, Tatoyan needed at least 79 parliamentary votes in order to become ombudsman. His candidacy was backed by deputies representing not only the HHK and its coalition partner-in-waiting, the Armenian Revolutionary Federation, but also the nominally opposition Prosperous Armenia and Orinats Yerkir parties.

Also voting for Tatoyan was Nikol Pashinian, an outspoken opposition lawmaker who set up a new party last year. Pashinian said during a parliament debate on Monday that Tatoyan should be given a chance to prove his declared commitment to human rights.

But other opposition deputies rejected the choice of Andreasian's successor. One of them, Zaruhi Postanjian, branded Tatoyan as an "advocate of the government."

Her colleagues representing the opposition Armenian National Congress (HAK) made similar claims when they announced that they will boycott the parliament vote on the new ombudsman.

Tatoyan, 34, was careful not to reveal his immediate objectives or pass judgment on a number of controversial arrests and imprisonments of opposition activists."I need time to clarify many issues and figure out my priorities," he told reporters after his election. "I cannot make evaluations at this point."

Tatoyan similarly skirted opposition deputies' questions about the existence of political prisoners in Armenia during Monday's debate.

## Israeli Party Accused of Being Foreign Agents of Azerbaijan

### Yisrael Beiteinu actively works to prevent Israel from officially recognizing Armenian genocide

JERUSALEM (Haaretz) -- Meretz Party chairman MK Zehava Galon charged Wednesday that Avigdor Lieberman's Yisrael Beiteinu party is getting financial support from Azerbaijan government officials in return for advancing Baku's political and financial interests in Israel.

According to Galon, Yisrael Beiteinu is supporting the interests of the Azeri national fuel company and has been actively working to prevent Israel from officially recognizing the Turkish genocide of Armenians during World War I, because of Azerbaijan's territorial feud with Armenia.

Galon said that she has filed a complaint on the matter to Attorney General Avichai Mendelblit, along with evidence of her claims. Party chairman Lieberman vehemently denied Galon's allegations, saying "not a word of what Galon said is true."

Galon made the statement in the Knesset Wednesday while condemning Yisrael Beiteinu's support of the so-called "transparency bill," which primarily targets left-wing NGOs that get funding from foreign governments. Galon charged that Lieberman's own party benefited from Azeri government money.

"You are the foreign agents of the Azeris," she said. "You are getting benefits from them; you have set up organizations through which you get money from them. You set up the organization called AZIZ, you are part of the management of AZIZ.

"Knesset colleagues, the AZIZ organization, the Israel-Azerbaijan International Association, serves as a financial and organization platform for Yisrael Beiteinu, and is funded by Azeri government officials. You are party of AZIZ's management in a revolving door fashion; whoever isn't an MK or a minister is part of AZIZ's management.

"Avigdor Lieberman, when he was foreign minister, attended a conference funded by the State Oil Company of the Azerbaijan Republic, the same company that a year before Lieberman helped get involved in oil and gas drilling off the Israeli coast. This company got a five percent share, and it's funded by a foundation headed by the president of Azerbaijan," said Galon.

She added that former Yisrael Beiteinu MK Faina Kirschenbaum "named a street in Israel after the father of Azerbaijan's great dictator." The Meretz leader also accused Lieberman and his party of "working to prevent the recognition of the Armenian genocide because you are envoys of the Azerbaijan government and because of Nagorno-Karabakh. You are getting millions from Azeri sources through the fund you've set up and you dare to speak of and demand transparency from civic society groups. You are a corrupt gang and now you are seeking to work against civic society organizations."

Lieberman categorically denied Galon's claims, saying, "In this case, as usual, there is not a word of truth in what Zehava Galon is saying. MK Galon, who was questioned for hours by the police [in 2001 on suspicion of financial irregularities in a peace center she ran] and whose case was closed for lack of evidence, has turned lies and libel into a way of life. Even Meretz doesn't deserve such a shallow and deceitful leader like Zehava Galon. In any case, every lie by Zehava Galon against me and Yisrael Beiteinu is a big compliment."

## George Clooney to Visit Armenia April 22-24




NEW YORK (Armradio) -- The co-founders of 100 LIVES and the Aurora Prize Selection committee – co-chaired by Nobel Laureate Elie Wiesel and Academy Award-winning actor and humanitarian George Clooney – will honor the Aurora Prize finalists for their exceptional acts of humanity with a weekend of events from April 22 through April 24, 2016.

On behalf of the survivors of the Armenian Genocide, and in gratitude to their saviors, the Aurora Prize celebrates the strength of the human spirit that compels action is the face of adversity.

The weekend of events, hosted in Yerevan, Armenia, will encourage discussion of some of the most pressing humanitarian issues the world is facing today, and honor those helping to address them. The weekend's events will culminate in the inaugural Aurora Prize ceremony, honoring three finalists for their exceptional acts of humanity and presenting the final recipient with the award.

# Demolition of Old Houses in Yerevan May Affect Tourism Development



YEREVAN (Arka) -- Tour operators and winemakers of Armenia are concerned about demolition of old houses in the central part of Armenia's capital city, particularly in the Pushkin-Abovyan-Arami crossroad.

Nune Manukyan, director of the Areni Wine Festival Foundation, told journalists on Thursday that demolition of old constructions strikes hard directly at tourism in the country.

"Tourism and wine industry are to-priority areas in Armenia's economy," she said. "But we are losing the face of the city which we can sell as a tourist product. As a result, the city is becoming not interesting to tourists. Tour operators can't shepherd tourists through Yerevan longer than one hour, and tourists leave the city without spending their money."

In autumn 2015, the city authorities confirmed rumors that houses in the mentioned streets would be destroyed. This decision sparked outcry also among Armenian winemakers, since there are wine cellars in the basement.

Manukyan said that a wrong policy is pursued by the authorities.

"Once we were assured that Northern Avenue in the very center of the capital will be different, not as we see it now," she said adding that tourists find nothing interesting in it.

"Instead, we organize tours through backyards and old-time places to show the city's spirit and atmosphere to them. Of course, financial resources are needed to maintain old monuments, but if they are preserved more resources come to the country's budget."

Recent studies of the Institute of Archeology and Ethnography of Armenia show that there are well-preserved wine presses and wine vaults of 16-18 centuries in Yerevan's territory.

"As a historian specialized in wine production history, I say that it is very important to preserve these historic places," said Boris Gasparyan, a research officer at the Institute of Archeology and Ethnography of Armenia. "It is not enough to save wine vaults from demolition – we should treat these historical monuments seriously, since they are our wealth."

Gasparyan said that the problem is not to lay legislative groundwork for preserving historical monuments, but to have a good will to do that.

# The Syrian Conflict

**Continued from page 1**

between their declared values and policy. This force came to power with such slogans that expressed willingness to solve problems, but, when faced with the reality both inside the Turkey and in the region, completely another situation was formed. Turkey led "zero issue with neighbors" policy and as the result it got 'Zero neighbors' and numerous issues, Aram Ananyan said.

As to the question whether in what terms the recent developments of the Syrian conflict are important and fundamental for the citizens of Armenia, Aram Ananyan highlighted the issue on maintenance of Armenian community, historical, cultural and spiritual heritage. "The Armenian community of Syria is the direct generation of descendants of the Armenian Genocide and this community is the constant reminder of the Genocide issue. Today Syria is keen on conservation issue of the community, monasteries, churches and schools."

"There is another important issue for us: the memory of the Armenian Genocide. The north of Syria was the biggest concentration camp; 100 years before when Ottoman power was destroying our nation's people. Explosion of Holy Martyrs Church was a signal that development promoters in Syria have negative attitude towards the historical memory for Armenians." Aram Ananyan added.

Political scientist Hrant Melik-Shahnazaryan pointed out the significance of regional developments, while Armenia can only follow them by means of mass media. Moreover, experts do not often voice their opinions on the ongoing processes. "By and large, geopolitical rivalry has entered a new stage. And ignoring this new stage is tantamount to a great threat to Armenia's own security," the expert said. Speaking of Russia's influence on the conflict, Mr Melik-Shahnazaryan noted that Russia realized its non-participation would undermine its influence on both the Black Sea and Middle East and threaten its national security.

"Russia is attempting to preserve its influence on the international arena," the expert said. He is sure that the relative peace in the South Caucasus is the credit of the Armenian army that is capable enough to rebuff any provocations.

# ONEArmenia's "Bring on the Buzz" Campaign to Help Sustain Armenian Border Village



On February 4th, ONEArmenia, a non-profit organization focusing on building sustainable economies in Armenia, launched a new campaign to initiate beekeeping activities in the border village of Baghanis.

About 800 people live in Baghanis, a small village located a few kilometers away from the border between Azerbaijan and Armenia, where the economic situation is dire. Most of the these lands are inaccessible because of unsettled border issues, landmines and occasional sniper fire. There is no industry in the region, and the lack of jobs causes high emigration rates, as the men leave to find work in Armenia's capital, Yerevan, or in neighbouring Russia.

"What's at stake is the creation of sustainable income-providing activities in Baghanis, so that families need not be torn apart, nor uprooted", said Patrick Sarkissian, ONEArmenia's founder. "Our goal is for the people in a strategically important area to be able to live and thrive on their own land".

"Bring on the Buzz" is exactly that. ONEArmenia and Sahman NGO are collaborating on a crowdfunding campaign to provide 18 rural families from Baghanis with 4 beehives each, allowing them to create a stable income and sustain themselves through honey production.

The funds collected will go towards made-in-Armenia beehives, bee colonies, beekeeping tools, and equipment. Each of the 18 families involved will receive extensive training in beekeeping techniques, and will also be assisted in finding market outlets for their honey production.

"We're aiming for sustainable, lasting impact", says Anna Aghajanian, Sahman NGO's co-founder. To ensure the project's sustainability, Sahman's in-house beekeeping expert will therefore regularly visit the new beekeepers for a full year, providing ongoing training and advice.

**Beekeeping: a sustainable activity for Armenian villages**

The Food and Agriculture Organization of the United Nations (FAO) has described beekeeping as a helpful means to create sustainable livelihoods. Bees are low maintenance as they typically look after themselves, so beekeeping fits in well with other income-providing activities.

BringOnTheBees1Beekeeping is neither time-consuming, nor overly complex, but it is a lucrative trade. One beehive can produce up to 25 kilograms of honey per year, and in Armenia, each kilogram can be sold for up to 7 dollars. In impoverished border villages such as Baghanis, where a family's income averages approximately 500 dollars per year, starting a beekeeping business can mean the difference between local development vs. total emigration.

The installation of 72 beehives in Baghanis will not only improve the villagers' living conditions. It will also have a positive impact on the surrounding environment by bringing pollinating honeybees to the region, hence ensuring the preservation of Baghanis's natural assets.

Bees are also known to thrive in non-industrial areas like the Tavush region, where the air is clean and the environment preserved. "Healthy bees help ensure the quality of the honey", explains George Tabakian, Sahman NGO's co-founder. "And while the climate in Armenia's countryside is favorable to beekeeping, its potential hasn't yet been properly utilised".

**Sustainability & Community**

For the last 4 years, Sahman NGO has been working with similar villages in the Tavush region, and their model has already proved efficient. The NGO's track record is impressive, with 30 greenhouses, and 112 beehives under their belt in the villages of Barekamavan, Berkaber, Chinari, Aygedzor and Nerqin Karmraghbyur.

For both NGOs involved, it is crucial that the project's impact goes beyond the 18 families provided with beehives. "The future beekeepers have already agreed that they would give back to their community by donating 1kg of honey per hive over 2 years", says Anna Aghajanian from Sahman NGO. "The donated honey will then be sold to help fund the local kindergarten".

To help ONE Armenia and Sahman NGO make lives sweeter in the border village of Baghanis, share or donate to their "Bring on the Buzz" campaign.

# "Armenia: An Open Wound" Exhibition at Brand Library Art Galleries

GLENDALE -- The City of Glendale and the Library, Arts & Culture Department are pleased to announce their partnership with the Armenian American Museum to present the exhibition "Armenia: An Open Wound". The exhibit will be on view at the Brand Library Art Galleries between April 9 and June 11, 2016 during the library's regular hours: Tuesday and Thursday 12-8pm, Wednesday 12-6pm, and Friday and Saturday, 10am-5pm. A series of weekly programs will accompany the exhibition. Brand Library & Art Center is located at 1601 West Mountain Street, Glendale, California, 91201.

"Armenia: An Open Wound" debuted in Mexico City at the Museo Memoria Y Tolerancia [Museum of Memory and Tolerance] in April 2015 in honor of the Armenian Genocide centenary. The exhibition explores the intricate history of the Armenian people and creates an interactive experience by illustrating early Armenian culture; it shares the story of Armenian livelihoods on their ancestral lands, and prepares viewers to gain a deeper insight into the events which lead to the 1915 Armenian Genocide.

"[The exhibition] seeks to raise awareness about the Armenian Genocide by inspiring reflection, respect for ethnic and cultural diversity, and upholding human dignity" stated Museo Memoria Y Tolerancia temporary exhibitions director Linda Atach Zaga. "The Armenian Cause is rooted in the universal theme of preserving memory as the first step in mobilizing toward global human rights and this exhibition is uniquely designed to encourage critical reasoning among diverse audiences as they relate the Armenian context to broader social justice themes."

The mission of the Museo Memoria Y Tolerancia is to preserve, teach, and promote within Mexican society the history and meaning of genocides and crimes against humanity, as well as the importance of diversity and tolerance.

Designed on the basis of a detailed, didactic route, "Armenia: An Open Wound," sheds light on both the historical and current ramifications of the 1915 Armenian Genocide through survivor testimony, modern-day pursuits for justice, and aims to empower visitors to take responsibility on behalf of all those who have been, and continue to be affected by genocide. In addition to honoring victims and commemorating the Armenian Genocide, this exhibition presents the unique contributions of Armenian Genocide survivors who




settled in Mexico during the early 20th century, and the international Armenian diaspora community which have collectively grown to embody the concept of global citizenship.

"It is our honor to announce our partnership with the Museo Memoria Y Tolerancia and we equally commend the City of Glendale Library, Arts & Culture Department for their commitment to engaging diverse collaborative opportunities" stated Armenian American Museum executive development committee chairman Berdj Karapetian. "Armenia: An Open Wound tells the story of Armenians through a multicultural approach, and exemplifies the eclectic programs and exhibitions the Armenian American Museum aspires to bring to the City of Glendale and the broader Los Angeles community."

The mission of the Armenian American Museum is to promote understanding and appreciation of America's ethnic and cultural diversity by sharing the Armenian American experience.

City of Glendale Library Arts, & Culture director Cindy Cleary shared her enthusiasm about the opportunity to partner with the Armenian American Museum by noting, "this exhibition supports the Library's mission to offer our community a diversity of ideas that will inspire curiosity and enrich our daily lives." Cleary further expressed that she "hopes all members of the public will share in this unique experience that celebrates the history and the resilience of the Armenian people and commemorates the horrific consequences of the Genocide."

A robust slate of programs that will complement "Armenia: An Open Wound" is being planned by the Brand Library & Art Center and the Armenian American Museum in collaboration with local and regional community partners. The educational experience of visitors will be enhanced by lectures, discussion panels, musical performances and more. All events at Brand Library & Art Center are free and open to the public.

For more information please visit ArmenianAmericanMuseum.org or call (844) 586-4626

# Pianist Sergei Babayan in Concert at Fresno State

FRESNO -- Award winning pianist Sergei Babayan will perform in recital as part of the Philip Lorenz Memorial Keyboard Concert Series at Fresno State. The performance will take place at 8:00 PM on Wednesday, March 9 in the Concert Hall on the Fresno State campus.

The concert is co-sponsored by the Armenian Studies Program of Fresno State. Babayan will be performing works by Schumann, Liszt, Rachmaninoff, and Brahms.

Acclaimed for the immediacy, sensitivity, and depth of his interpretations, Sergei Babayan's performances reveal an emotional intensity and bold energy, equipping him to excel in repertoire ranging from Rameau to Ligeti. Winner of the 1989 Robert Casadesus International Piano Competition in Cleveland, this Armenian pianist returns to Fresno for another display of his "unequaled touch, perfectly harmonious phrasing and breathtaking virtuosity" ( Le Figaro, Paris).

One of the most charismatic personalities on today's concert stage, Babayan's vibrantly expressive performances have spirited audience acclaim worldwide. Ever since his arrival in the United States, on his first trip outside of the Soviet Union in 1989, his breathtaking virtuosity and a wide- ranging tonal palette have brought him critical praise and accolades.

Babayan was born in Armenia to a musical family and started to play the piano at the age of three. He began his musical studies at the age of six under Luisa Markaryan and later with George Saradjev. He continued his studies at nineteen with Mikhail Pletnev at the Moscow Conservatory and completed post-graduate work there in 1989 as a student of Professor Vera Gornostaeva. He also studied privately with Lev



Naumov in Moscow.

After making his New York recital debut in 1990 at Alice Tully Hall to great critical acclaim, Babayan embarked on a busy schedule that has included solo appearances with The Cleveland Orchestra, the Calgary Philharmonic Orchestra, and the Osaka Symphony, among others.

The Concert is supported by The Thomas A. Kooyumjian Family Foundation, The Ararat Foundation of Alexandria, Virginia, Grace Jelalian Shahinian Armenian Concerts Fund, and the Leon S. Peters Foundation.

General tickets for the Concert are available for $25 per person, for seniors tickets are $18, and tickets for students are $5.00 per person. Ticket reservations for the concert may be made by calling 278-2337. http://www.keyboardconcerts.com/concert-sergei-babayan.aspx

Parking will be available in Lot P1 (Shaw and Maple entrance to campus). For more information please contact the Armenian Studies Program at 278-2669 or visit fresnostate.edu/armenianstudies.






## ՅՈՒՇԵՐ

# «ՍՓԻՒՌՔԻ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊ»ի ԿՈՄԻՏԷԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԵՐԳԵԼՍ ԵՒ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋԿՐԱԾ ՅԱՐՁԱԿՈՒՄՍ

*ԳՐԻԳՈՐ ՇԷՆԵԱՆ*

*Սովետական վարչակարգի փլուզումի նախօրեակին, «Սփիւռքի հետ Մշակութային Կապի Կոմիտէ»ի հրաւէրով կը գտնուէի Երեւան, մասնակցելու Կոմիտէութեան կազմակերպած համագումարին, որպէս սեփականատէր եւ խմբագիր «Նոր Կեանք» շաբաթաթերթի: Հոն էին նաեւ Յակոբ Պօղոսեանը՝ խմբագիր «Նոր Օր»ի եւ Տօքթ. Յարութիւն Սաղրեանը՝ խմբագիր «Մասիս»ի: Համագումարի աշխատանքներու աւարտին կայացած հիւրասիրութեան ընթացքին, Կոմիտէի նախագահ Վարդգէս Համազասպեան յայտարարեց. «Վերջապէս գտայ մի թերթի խմբագիր, յանձինս Գրիգոր Շէնեանի, որ ոչ միայն փող չուզեց, այլ նաեւ ազնիւօրէն ասաց թէ ի՞նչ կը փափաքիք որ ղրկեմ Լոս Անճելըսէն»: Ապա ինձմէ խնդրեց, որ ազգային երգեր երգեմ, քննելու համար ներկաներու զգացումները... Առանց ինքզինքս գոված ըլլալու, լաւ ձայնեղ ըլլալս յայտնի էր Անթիլիասի դպրեվանքէն ի վեր: Հանդէսներու կ՛երգէի, նաեւ եկեղեցիի ժամերգութիւններու եւ նոյնիսկ պատարագներու ընթացքին: Յովսէփ սարկաւագ (յետագային Վաչէ Արք. Յովսէփեան, առաջնորդ ԱՄՆ-ի Արեւմտեան Թեմի), «Խաւարման» գիշերը ինծի երգել տուած էր «Ուր Ես Մայր Իմ»ը, որ մեծապէս գնահատուած էր հաւատացեալ ունկընդիրներու եւ դպիրներու կողմէ:*

*Երբ «Անտոք Ծովասար»ը երգեցի, որուն մէջ կը յիշուի «Վահան փաշա»յի բառերը, ոմանք հարց տուին, որ արդեօ՞ք բարերար Վահան Շամլեանի մասին էր խօսքը եւ կամ ազգականական կապ ունէ՞ր անոր հետ: Պատասխանեցի «չեմ գիտեր»: Շարունակեցի այլ ազգային յեղափոխական երգեր երգել, որոնք արժանացան ներկաներու խելայեղ ծափահարութեանց: Լիբանանի Պուրճ Համուտ Թաղի ղեկավարներէն մին, որ այդ ժամանակ Երեւան կը գտնուէր, երգելէս ետք եկաւ եւ ըսաւ. «Բանդ բուրդ է, Գրիգոր, բանտին մէջ «չիւրիկ» պիտի ըլլաս: Ես քեզի աւելի խելացի կը կարծէի»: Սակայն ներկաները վրաս խուժեցին, ողջագուրուեցան ու համբուրուեցան հետս: Դժբախտաբար Մշակութային Կապի Կոմիտէութեան գործունէութիւնը կանգ առաւ եւ Կոմիտէն անշքացաւ ու կազմալուծուեցաւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումէն ետք, երբ Հայոց Համազգային Շարժումը եւ Լեւոն Տէր Պետրոսեան երկրի կացութեան տէր եղան:*

******

*Երբ 1997-ի Մայիս ամսուն վրաս յարձակում գործուեցաւ եւ ամիս մը հիւանդանոց մնացի ու հինգ ամիս ալ չկրցայ «Նոր Կեանք»ը խմբագրել, կինս Արշօն եւ մտաւորական Հրանդ Աճեմեանը վարեցին եւ փրկեցին թերթը: Աշխարհի չորս կողմերէն ապաքինման եւ զօրակցական մաղթանքներ կը ստանայի: Լոնտոնէն հեռաձայնեցին ազգային բարերար Վաչէ Մանուկեանը եւ Հայաստանի նախկին վարչապետ Արմէն Սարգսեանը: Արմէնին ըսի, թէ իմ վրայ յարձակում գործող «ազգային»ները վաղն ալ կրնան Հայաստանին տիրել... Արմէնը պատասխանեց, որ այդ մէկը չի կրնար պատահիլ, որովհետեւ Հայաստանցիները չեն սիրեր անոնց եւ դուն սիրուած անձ մը ըլլալուդ, քու դէմ կատարուածը աւելի պիտի խրտնեցնէ ժողովուրդը անոնցմէ:*

*Պէյրութի «Ազդակ»ը, որուն ժամանակին շատ օգնած էի, անդրադարձաւ յարձակման: Նաեւ «Զարթօնք»ը, որուն մէջ մտաւորական Թորոս Թորանեանը «Գրիչին դէմ Երկաթ» խորագրով դատապարտական խօսք գրած էր: Իսկ այստեղ «Մասիս»ն ալ «Խաւարում» խորագրով դատապարտական յօդուած գրեց ազատ մամուլը եւ միտքերու ազատ արտայայտութիւնը լռեցնել փորձողներուն դէմ: Դէպքերու ինչ հեգնանք, որ Սովետական Հայաստանի մէջ յեղափոխական երգեր երգելս խանդավառութեամբ ընդունուեցաւ, իսկ այստեղ, Ամերիկայի մէջ, «յեղափոխական»ներ չհանդուրժեցին «Նոր Կեանք» անկախ մամուլի ազատ խօսքի արտայայտութիւնը:*

## ԿԵԱՆՔԻՍ ՅՈՒՇԵՐԻՑ

*ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ*

*Պարսկաստանի Արքայ Շահ Աբասը հազարաւոր հայեր գաղթեցրեց Պարսկաստան, նրանց տեղաւորեց մի մասը Սպահան քաղաքի շրջակայքում հիմնելով Նոր Ջուղան, ապա մեծ մասամբ հողագործ բռնագաղթած հայեր բնակութիւն հաստատեցին գիւղերում: Ջարմահալ, Փերիա, Բուրվարի եւ Արաքի շրջակայ գիւղեր եւ գաւառներ՝ Քալաւա, Քազազ, շրջաններում տեղաւորուեցին հայ հողագործները, որոնք հարեւան պարսիկների հետ սկսեցին աշխատել:*

*Նախնական շրջանում անշուշտ շատ դժուար էր հայ գիւղացիութեան կացութիւնը, բայց հետզհետէ համակերպուելով պայմաններին, օդին, ջրին, հայերը շատ կարճ ժամանակաշրջանում կարողացան ընտելանալ տիրող պայմաններին եւ շնորհիւ իրենց բնատուր ունակութիւններին եւ աշխատասիրութեան, հողատէրերի յատուկ ուշադրութեանը եւ յարգանքին արժանացան, հայ գիւղացիները տեղացի պարսիկների հետ համագործակցաբար սկսեցին աշխատել եւ շատ շուտով աչքի ընկան իրենց ճշմարտախօսութեամբ եւ աշխատանքով:*

*Գիւղատէրերը՝ որոնք ամէն տեսակէտով շահագործում էին խեղճ շինականին սկսեցին հաշուի առնել հայերին: Միշտ եւ ամենուրէք նրանք տարբեր վերաբերմունք էին ցուցաբերում հայերի նկատմամբ: Երբեմն խորհրդակցում էին հայութեան ղեկավարների հետ, ու լսում նրանց պահանջները: Դեռ մինչեւ այսօր էլ պահպանւում է պարսիկների մօտ այն ասացուածքը թէ «Հայը երբեք սուտ չի ասի»: Գիւղապետերը յաճախ պարծենում էին այն բանով, որ իրենց գիւղերում հայ գիւղացիներ կան:*

*Անշուշտ բոլորն էլ աշխատում էին աւելի շատ թիւով հայ ընտանիքներ բնակեցնել իրենց գիւղերում, որովհետեւ նրանք արդէն տեսել եւ զգացել էին հայի ունակութիւնը: Բայց միւս կողմից կար նաեւ մի ցաւալի երեւոյթ: Գիւղերում ապրելով, հայ հողագործները միւսների նման կտրուած էին արտաքին աշխարհից: Այն օրերին ոչ երթեւեկութեան ճանապարհներ եւ միջոցներ կային, եւ ոչ էլ որեւէ հաղորդակցութեան միջոց: Բռնագաղթուած հայերի սերունդը շատ բան չգիտէր Հայաստանի եւ հայ ժողովրդի պատմութեան մասին:*

*Ի դէպ յիշենք որ 1946ին ամբողջ այդ գաւառները հայաթափուեցին ու հայութիւնը 80 տոկոսով մեկնեց Մայր Հայրենիք: Մնացեալը անցան Թեհրան: Սակայն մինչեւ այսօր էլ կանգուն են որոշ շրջանների եկեղեցիները այդ թւում Քալաւայի եկեղեցին, որն նորոգուել է հիմնովին, եւ ամէն տարի Ս. Աստուածածնի տօնի օրը ուխտագնացութիւն է կատարւում դէպի Քալաւայի Ս. Յակոբ Եկեղեցին: Բոլոր գիւղերում դեռ կան հայոց գերեզմանները հազարաւոր շիրմաքարերով, որոնք պահպանւում են, իսկ մի մասն էլ ոչնչացել է ձիւնի եւ անձրեւի պատճառով:*

---

*Յարձակումը հրահանգողին հանդիպեցայ եւ զինք նմանցուցի «Ալ Գաբոն»ին: Իրեն յիշեցուցի, թէ ժամանակին իր ընտանիքին մեծ օգտակարութիւն ունենալուս դիմաց, այդպիսի՞ երախտամոռութեամբ պիտի վարուէր հետս: Բերանը բանալով բան մը չըսաւ: Ես 16 տարի եւս շարունակեցի խմբագրել «Նոր Կեանք»ը:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**

*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ------------------------------------------
**Address:** ---------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**----------------------- **Email:** -------------------------



## ԴԻՄԱՏԵՏՐԻ (FACEBOOK) ԷՋԵՐԻՑ ՄԵԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ...
# Առնօ Բաբաջանեանի ծննդեան 95-ամեակը

*ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ*



*Սովորաբար, իւրաքանչիւր օր, առաւօտ կանուխ առաջին գործս է լինում համակարգիչ բանալը՝ աշխարհի, ի մասնաւորի Հայ Աշխարհի նորութիւններին տեղեակ լինելու համար: Ճիշդ է, ամէնօրեայ Ասպարէզն ստանում եմ, ինչպէս եւ միւս թերթերը, բայց նորութիւններին տեղեակ լինելու համար այդ լրագրի վրայ յոյս դնել չի լինի, որովհետեւ, ոչ թերթի խմբագրութեան մեղքով, օրաթերթը վերջին մէկ-երկու տարուայ ընթացքին օրը-օրին չի հասնում բաժանորդին: Օրինակ, այս շաբաթուայ ընթացքում երկու օրուայ թերթ եմ ստացել՝ երկուսն էլ նախորդ շաբաթուայ համարներ:*

*Բոլորիս է յայտնի: Ողջ Ամերիկայի տարածքին վերջին մի քանի տարում սնանկութեան աստիճանի հասած ամերիկեան փոստային ծառայութեան պժգալի պատմութիւնը:*

*Այժմ գանք մեր բուն նիւթին: Դիմատետրի բազմաթիւ նիւթերի մէջ առաջինը, որ գրաւեց ուշադրութիւնս՝ հետեւեալն էր.*

*Ինձ բոլորովին անծանօթ մի հեղինակ՝ Քոչար Ոսկանեան անունով (հաւանաբար յօրինուած անուն-մականուն), ռուսերէն լեզուով երկարաշունչ մի յօդուած էր գրել տաղանդաւոր դաշնակահար եւ հանճարեղ կոմպոզիտոր Առնօ Բաբաջանեանի մասին՝ կապուած նշանաւոր հայորդու ծննդեան 95-ամեակի հետ:*

*Յօդուածի հեղինակը բաւական ցայտուն սարկազմով (Սարկազմ՝ կծու, սպանիչ ծաղր) հարուածի տակ էր դրել Հայաստանի Մշակոյթի Նախարարութեանը, որ արժանիօրէն չի նշել հենց միայն երաժշտական գլուխ-գործոց եղող «Հերոսական Բալլադ»,-ով հայ ժողովրդին հերոսացնող Առնօ Բաբաջանեանի ծննդեան 95-ամեակը, այլ բաւարարուել է մի խումբ անյայտ մարդկանց հետ ծաղկեփունջ (գուցէ եւ ծաղկեպսա՞կ...,- չգիտենք) դնելով Երեւանի ամենահին, Թոխմախ անունով յայտնի գերեզմանատանը հանգչող կոմպոզիտորի գերեզմանի վրայ:*

*Յօդուածի բովանդակութիւնից դժուար չէր ենթադրել, որ հեղինակը Առնօ Բաբաջանեանի ընտանիքին մօտ կանգնած անձնաւորութիւններից մէկն է, որովհետեւ նա երգահանի ծննդեան թուականի հետ կապուած մի այնպիսի յայտարարութիւն է անում, որը չկայ եւ կամ ես չեմ հանդիպել կոմպոզիտորին նուիրուած որեւէ աշխատութեան մէջ:*

*Քոչար Ոսկանեանը գրում է, որ՝ Առնօ Բաբաջանեանը ծնուել է 1921 թուականի ոչ թէ Յունուարի 22-ին, այլ 21-ին, այսինքն Ռուսական Յեղափոխութեան առաջնորդ Լենինի մահուան օրը: Եւ, միանգամայն խելացի որոշումով, նորածին Առնոյի համար ծննդեան թուականի հետ կապուած, յետագայում հասարակութեան մէջ անհամ համեմատութիւններից զերծ պահելու մտահոգութիւնից դրդուած, ծնողները անսալով պատկան մարմնի թելադրանքին, համաձայնուել են մէկ օր առաջ տանել երեխայի ծննդեան թուականը եւ հաստատել Յունուարի 22-ը:*

*Ոսկանեանի յօդուածից երեւում է, որ որեւէ լուրջ միջոցառում՝ կապուած Առնօ Բաբաջանեանի յոբելեանի հետ՝ տեղի չի ունեցել Երեւանում:*

*Ի հակադրութիւն հայաստանեան նման անհաճոյ երեւոյթի բացայայտման, յօդուածագիրը Առնօ Բաբաջանեանի ծննդեան 95-ամեակին նուիրուած, Մոսկուայում կայացած մէկ ժամ տեւողութեամբ փառահեղ համերգ-երեկոյի տեսագրութիւնն է հրամցնում հասարակութեանը:*

*Եւ ի՜նչ համերգ. Բեմում սիմֆոնիկ նուագախումբ եւ չորս տղամարդ երգիչներ, քառեակ կազմած պանծացնում են Առնօ Բաբաջանեանի երաժշտութիւնը: Այս անգամ արդէն նորովի հնչողութեամբ, ֆիլմերի համար գրուած նրա երաժշտութիւնը վերածած երգերի, անուանի ռուս բանաստեղծների տեքստերի հիման վրայ: Հանդիսասրահում ցնծութիւն է, հրավառութիւն:*

*Նայում, լսում ես այս ամէնը եւ հոգիդ փառաւորւում է այն գիտակցութեամբ, որ մենք՝ հայերս էլ ունենք արժէքներ, մեծութիւններ, ինչպէս իրենք՝ ռուսները, եւ կարող ենք հարստացնել իրենց արուեստի գանձարանը մեր համաշխարհային արժէքներով:*

*Այո, գաղտնիք չէ, որ ռուսները խելակորոյս կերպով են սիրում Բաբաջանեանի երաժշտութիւնը, ի մասնաւորի նրա երգերն ու ֆիլմերի համար գրած երաժշտութիւնը: Դէ, մենք էլ, հայերս մի քանի տարին մէկ, «Երեւան-70» երաժշտական փառատօն ենք անցկացնում ինչպէս Երեւանում, այնպէս էլ Լոս Անջելէսում, որի ծրագրի մէջ եղող երգերի առիւծի բաժինը մշտապէս յատկացւում է Առնօ Բաբաջանեանի երգերին:*

*Քոչար Ոսկանեանի գրութեան մէջ շատ դառը տողեր կան կապուած Բաբաջանեանի անբուժելի հիւանդութեան եւ մահուան հետ կապուած: Ես դեռ էն հին օրերից, 1960-ական թուականներից գիտէի կոմպոզիտորի սոսկալի ծանր, անբուժելի հիւանդութեան մասին: Գիտէի, որ նա դեռ երիտասարդական տարիներից տառապում էր արեան քաղցկեղով:*

*Յօդուածագիրը միանգամայն իրաւացիօրէն, սրտի ցաւով է նկարագրում Առնօ Բաբաջանեանի մահուան եւ թաղման մանրամասների մասին: Պարզւում է, որ ինքը՝ Բաբաջանեանն է կտակ թողել, որպէսզի իրեն հողին յանձնեն Հայաստանում, հակառակ պարագային, եթէ այդ կտակը չլինէր, անկասկած նրան կը թաղէին Մոսկուայում:*

*Եւ տարօրինակն այն է, որ այդ օրերի (1983 թուական) Հայաստանի իշխանաւորները, ի մասնաւորի Կուսակցութեան Առաջին Քարտուղարը, որ անուն էր հանել որպէս ազնիւ, մաքուր, դասական երաժշտութեան գիտակ, վախենալով մոսկովեան իշխանութիւններից (միանգամայն անտեղի) չհամարձակուեց Առնօ Բաբաջանեանին արժանիօրէն թաղել Կոմիտասի անուան այգու Պանթեոնում՝ Հայ մշակոյթի եւ գրականութեան մեծերի հարեւանութեամբ:*

*Արդիւնքում՝ Բաբաջանեանի դին հողին յանձնուեց, ինչպէս վերը նշեցի Երեւանի ամենահին գերեզմանոցում՝ Թոխմախգեօլի գերեզմանատանը, հայ բեմի անգուգական վարպետ Աւէտ Աւետիսեանի եւ..., եւ, որքան էլ արտառոց հնչի, Անկախ Հայաստանի առաջին տարիներին անփառունակ վախճանով կեանքին հրաժեշտ տուած Հայաստանի գլխաւոր դատախազ Հենրիկ Խաչատուրեանի հարեւանութեամբ:*

*Տարօրինակ է չէ՞, բարեկամներ. Բաբաջանեան եւ նրա կողքին՝ հսկայական տարածութիւն զբաղեցնող պետական, քաղաքական գործիչ:*

*Դիմատետրի մէջ կողք-կողքի տեղադրելով երեք տապանաքարերի լուսանկարները, գրող-լուսանկարիչը նպատակ է ունեցել հասարակութեան ուշադրութիւնը բեւեռել արտառոց «Եղբայրական գերեզմանի» վրայ, միեւնոյն ժամանակ առաջարկելով, միանգամայն իրաւացի, երկու խոշորագոյն արուեստագէտների շիրիմները տեղափոխել Երեւանի Քաղաքային Պանթէոն:*

*Հազիւ յօդուածի ընթերցումն աւարտած, թանձր մտքերի մէջ թաղուած իմ ուղեղը անկոչ հիւրի դրան զանգից վերադարձաւ դէպի իրականութիւն: Մտերիմ բարեկամ էր եկողը: Ինչպէս ժամանակին Երեւանում, էն լա՜ւ, անհոգ երիտասարդական տարիներին, առանց զանգ տալու, առանց ժամադրութեան: «Ձեր կողմերում էի, ասի գնամ տեսնեմ ո՞նց են մերոնք»,- հազիւ շքամուտքից ներս մտած ասաց նա ու առօք-փառօք տեղաւորուեց յարմարաւէտ բազկաթոռի մէջ՝ միանգամայն պարզ, ակնառու ձեռքի շարժումներով հասկացնել տալով, որ այնքան էլ շուտ գնալու մտադրութիւն չունի:*

*Ես վերադարձայ աշխատասենեակ, անջատեցի համակարգիչը՝ յետոյ կրկին վերադառնալու համար ծանօթ նիւթին: Ճիշդ էր ենթադրութիւնս. Մինչեւ «Իրեն լաւ չտեսաւ»,- ինչպէս ասում են ուտող-խմող տղերքը, բարեկամս չհեռացաւ մեր տնից:*

*Նրա մեկնելուց յետոյ, անմիջապէս անցայ համակարգչի առջեւ՝ ծանօթ նիւթը կրկին ընթերցելու եւ նշումներ անելու մտադրութեամբ, սակայն..., որքան էլ փորձեցի հնարաւոր չեղաւ դիմատետրի մէջ գտնել Առնօ Բաբաջանեանին վերաբերուող նիւթը:*

*Աներեւոյթ ուժեր եւ աներեւոյթ ձեռքեր հանել էին համակարգչից իրենց վարկաբեկող եւ, ինչո՞ւ չէ, իրենց ստորացնող նիւթը: Մենք շատ ենք հանդիպում նման երեւոյթների, մենք դրա փորձառութիւնն ունենք...*

*... Ամբողջ գիշեր չկարողացայ քնել, անընդհատ Առնոյի հետ էի: Իմ մտապատկերում վերակենդանացան դէպքեր, իրադարձութիւններ՝ կապուած Առնօ Բաբաջանեանի հետ, որոնց բովանդակութեանը այժմ սիրով կը ծանօթացնեմ ընթերցող հասարակութեանը:*

*Սկզբից ասեմ, որ Առնօ Բաբաջանեանին ժամանակին բնաւ չեն շփացրել հայաստանեան մամուլն ու հեռուստատեսութիւնը: Նրա մասին քիչ է գրուել: Եւ, որովհետեւ նա մշտապէս Մոսկուայում էր բնակւում, միայն ժամանակ առ ժամանակ էր յայտնւում Երեւանում, շատ անգամ էլ անուշադրութեան մատնուելով Հայաստանի պատկան մարմինների կողմից:*

*Մեր ասածը փաստելու լաւագոյն ապացոյցը հետեւեալ պատմութիւնն է:*

*1971 թուականի Յունուարի 20-ին, այսինքն 45 տարի առաջ, ինձ է հեռաձայնում Հայաստանում բաւական սիրուած ու տարածուն Աւանգարդ թերթի խմբագիրը.*

*- Հենրիկ, երկու օր յետոյ, այսինքն ամսի 22-ին Առնօ Բաբաջանեանի 50-ամեակն է, խնդրում եմ վաղն առաւօտեան յօդուածը սեղանիս լինի,- առարկութիւն չվերցնող տոնով կարգադրում է խմբագիրը:*

*- Այդ ինչպէ՞ս, մէկ օրուայ ընթացքում այդպիսի լուրջ յօդուած գրել կը լինի՞..., ինչո՞ւ նախապէս չէք ասել..., աւելի ճիշդ կը լինի եթէ դիմէք որեւէ երաժշտագէտի:*

*- Մենք միայն քիչ առաջ իմացանք այդ մասին Անասեան, էն էլ խմբագրութիւն եկած մի երաժշտից: Տարիների փորձով ես գիտեմ, որ միայն դու կարող ես մէկ օրուայ ընթացքում արժէքաւոր յօդուած գրել Առնոյի մասին: Վաղը միւս օր միւս թերթերը կը տպեն, իսկ մենք խայտառակ կը լինենք, եթէ չ՚անդրադառնանք այդ յոբելեանին:*

*Ինչեւէ. Յաջորդ օրն իսկ Առնօ Բաբաջանեանի 50-ամեակին նուիրուած յօդուածս Աւանգարդ թերթի խմբագրի սեղանին էր: Յօդուածը լոյս տեսաւ թերթի 1971 թուականի Յունուարի 23-ի համարում:*

*Եւ, որքան էլ տարօրինակ ու զարմանալի, եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում, միայն Աւանգարդ թերթն էր, որ անդրադարձաւ Առնօ Բաբաջանեանի յոբելեանին:*

*Յետագայում, արդէն Միացեալ Նահանգներում, ես այդ նոյն յօդուածը տեղադրեցի 1992 թուականին Լոս Անջելէսի «Անի» տպարանում հրատարակուած իմ «Այս եմ ես» շարքի երկրորդ հատորում:*

*1960-ականների վերջին, երբ համատեղութեան կարգով վարում էի Հայկական Ռադիոյի Ֆոնդային Ձայնագրութիւնների բաժինը, Առնօ Բաբաջանեանը Երաժշտական խմբագրութեանն էր ներկայացրել իր նոր գործը՝ «Յորժամ» հոգեւոր մեղեդու մշակումը՝ լարային նուագախմբի եւ անգուգական երգչուհի Լուսինէ Զաքարեանի համար:*

*Ես, ի պաշտօնէ հետեւում էի ձայնագրութեանը եւ մտքեր փոխանակում Առնոյի հետ, բայց դժուարանում էի նրան հասկացնել, որ այո. ձայնագրութիւնը կը լինի, Լուսինէն էլ կ՚երգի, բայց ռադիոյով եթեր սփռել չի լինի: Երեւի նա չգիտէր, որ հայկական հոգեւոր երաժշտութիւն արգիլուած էր ռադիոյով հաղորդել:*

*Ձայնագրութիւնը հոյակապ*

*Շար.ը էջ 19*

# «ՀԷ~Յ ԱՇԽԱՐՀ» ՄԱՅՐԻԿԻՍ ՅԱՃԱԽԱԿԻ ԱՍՈՅԹԸ

***Ռ. ԿՈՐԻՒՆ***
***(Շարունակուած նախորդ թիւէն)***

*Արդէն ամբողջ էութեամբ մայրիկովս էի տարուած, ձեռքս աշխատանքի չէր գնում, մայրս էր իմ միտքը զբաղեցնողը, կչեռքի նժարին եմ դնում իմ արածները մօրս հանդէպ, ինչով եմ նրան ուրախացրել, ինչով եմ նրա դէմքին ժպիտ եւ սրտին գոհունակութիւն բերել, կարելի է ասել՝ իմս ոչինչ է եղել իմ մօր արածների նկատմամբ, դոյզն իսկ ես չեմ փոխարինել մօրս անհաս ու անծիր արածների դիմաց, լուսոյ բաժին դարձած մայրիկ ջան խնդրում եմ ներիր քո հեռաւոր զաւակիդ բոլոր այն ակամայ թերացումներն ու անտարբերութիւնները, դու միշտ ներող ես եղել՝ մեծահոգի ու ազնուահոգի, վստահ եմ չես թողնի ինձ ամօթով ու գլխիկոր:*

*Իմ ուղեղի եւ հոգու սլացքը այնքան զուլ էր, որ չկարողացաւ ներթափանցել քո առաքինութեամբ յուռթի հոգեկան անդաստանը, դու համեստութեան եւ ազնուութեան մարմնացում, դու բարեսրտութեան եւ գթասրտութեան շտեմարան, դու նուիրումի ու զոհողութիւնների անզուգական մայրիկ:*

*Յիշո՞ւմ ես մայրիկ, երբ այս մեծ տարիքով էլ հիւանդանում էի, ինչպէս էիր խնամում ինձ, ես ինչ արեցի քեզ դրա փոխարէն, քանի անգամ նստեցի քո սնարին եւ խնամեցի քեզ, ասա՛ մայրիկ, իմ կարծիքով երբեք, մանաւանդ այս վերջին երկու տարիները, որ դու յաճախ հիւանդ ես եղել եւ ես հեռու:*

*Յիշո՞ւմ ես մայրիկ, երբ աղքատը գալիս էր դռան առջեւ նրան ձեռնունայն չէիր վերադարձնում:*

*Յիշո՞ւմ ես մայրիկ, շատ եւ շատ ծառայութիւններ մեր տոհմի զաւակներին:*

*Յիշո՞ւմ ես մայրիկ, թէ ինչպէս մեր շէնքի միջի եւ դրսի հայ ու պարսիկ հարեւանների հետ որքան քաղցր ու սիրալիր յարաբերւում էիր, ասում էիր.*

*-Էս պարսիկ հարեւանը երբ տեսնում է ինձ մահումեռ է գալիս, թուշս համբուրում է:*

*Սիրելի՛ մայրիկ, գիտեմ, մենք չքեղ հարստավայել կեանք չունեցանք, չենք էլ ափսոսում, սակայն գոնէ պիտի ուրախ լինենք, որ ապրել ենք բարոյական արժանիքներով առողջ կեանք: Տեսնում էի, թէ ինչպէս էիր հպարտանում քո զաւակներով, որ նրանք անառակ զաւակներ չեն եղած եւ քեզ ու պապային պատիւ են բերել իրենց վարքով ու կենցաղով:*

……………………

*Մամայի մահուան բօթը թախծալի ինձ խոկալու է տանում, մտածմունքի մէջ է գցում, շարունակ մայրիկս եմ յիշում, նա իմ սրտումն է անդուլ իր պարզ ու միամիտ հոգեբանութեամբ, ինչ որ ունէր իր հոգու խորքում սկիւտեղի վրայ դրած մատուցում էր շուրջիներին: Նա իր ծնողի մեծ զաւակն էր, նա մեր տան մեծն էր, նա տոհմի հարսների մեծն էր, բայց երբեք մեծութիւն չարաւ, իր խառնուածքն ու նկարագիրն էր սա ինչպէս ուռենու ճիւղերը: Մեր մայրը համեստութեան դասը եւ խոնարհութեան խորհուրդը սովորել էր մեր Աւետարանից՝ Յիսուսից: Յիսուս խոնարհուեց իր աշակերտների առջեւ եւ նրանց ոտքերը լուաց, նա այս իր արարքով ոչ թէ փոքրացաւ, այլ՝ մեծացաւ, աշակերտներին հասկացնելով, որ մինչեւ չփոքրանան, չեն մեծանայ:*

……………………

*Նկատելով որ ես մի շարք խնդիրների համար չկարողացայ մամայիս թաղման արարողութեան ներկայ գտնուել, ուստի իմ ծրագրած եկեղեցական հոգեհանգստեան արարողութիւնը տեղի ունեցաւ որոշուած թուականին: Մեր հարազատները Գլէնդէլում իմացուած էին: Արեւակէզ ամառային կիրակի օր, ընտանիքով ներկայ ենք գտնուել կիրակնօրեայ պատարագին: Եկեղեցին լցուած է բարեպաշտ ժողովրդով: Այստեղ Գլէնդէլում, թերեւս ուրիշ քաղաքներում նոյնպէս, արտօնուած չէ եկեղեցիների զանգերը հնչեցնել, քրիստոնեայ երկրում զանգերը մունջ լռում են, ոչ մի ղօղանջ եւ ոչ մի բարձրախօսային ձայնասփռում եկեղեցու ներսից դէպի դուրս:*

*Մեր դարաւոր եկեղեցու պատարագի երգեցողութիւնը հոգեպարար է, մեղմ ու քնքուշ շարականների ելեւէջը մասնաւոր խորհրդաւորութիւն է ստեղծում բարեպաշտ աղօթողների համար, որոնք առաւելաբար տարէցներ են: Երիտասարդներին չի հետաքրքրում եկեղեցին, մեր հոգեւորականները հին աւանդական սովորութիւններին կառչած տեղ քայլ են խփում, կարճ եւ դիպուկ արարողութիւններով եւ կեանքին ու կենցաղին առնչուող քարոզներով պէտք է երիտասարդութեան գրաւել:*

*Մամայիս կեանքը սկսւում է գիւղից: Նա տասնչորս տարեկանում հարս է դառնում Քէշիշեան նահապետական գերդաստանին, նա դառնում է այդ գերդաստանի արժանաւոր հարսերից մէկը բերելով իր ծառայութիւնը յօգուտ սերնդագործման նրա բարւօք եւ յաջող կեանքի: Սիրւում եւ յարգւում է բոլորի կողմից իր հաւատարմութեան եւ հոգեկան վեհ արժանիքների համար: Մեր պապայի հոգեբանութեան ներդաշնակ կեանք է ապրում խնայողութեամբ եւ չափաւոր, քանի որ հագիւ միջակ եկամուտով չէր կարելի շռայլ ու վատնող լինել: Նա նուիրուած իր սիրասուն զաւակներին մեծացրեց՝ ֆիզիքապէս առողջ ու անթերի, հեռու ամէն տեսակ փորձութիւններից: Արժանի է մեր մայրը Յովհաննէս Շիրազի բառերով ասուած այս բանաստեղծութեան՝*

Մեր տան ծառան էր մայրս,
Մեր տան իշխանն էր մայրս,
Մեր տան դեղն ու ճարն էր մայրս,
Մեր տան աղբիւրն էր մայրս,
Մեր տան արեւն էր մայրս:

*Մայրս իմ այդ մէկ ամսեայ արձակուրդի ընթացքում շարունակ ախ քաշելով «Հէ~յ աշխարհ»-ով ասելիք ունէր, բայց ես անգիտակ չըմբռնեցի նրա միտքը:*

*Ես երախտապարտ զաւակդ իմ մէկ ամսեայ այցելութեան ընթացքում ինչո՞ւ աւելի շատ չխորացայ մայր քո այդ ասոյթի վրայ՝ «Հէ~յ աշխարհ», որ յաճախակի կրկնում էիր: Զթափանցեցի քո հոգուդ խորքը, փոխանակ մեղմութեամբ ու գորովալից սիրտդ գրաւէի եւ փայփայէի, ջղայնացած պահանջում էի այդ ասոյթը չարտաբերել: Դու խորհրդաւոր բառերով կ'ուզէիր ինձ հասկացնել, որ չգնամ էն երկիրը խորթ, մնամ մօտդ եւ քեզ խնամք տանեմ:*

*«Հէ~յ աշխարհ»-ով մայրս սիրտն էր բացում բողոքով, թէ ինչու բալէս ինձ հիւանդ ու դալուկ ծերութեամբ կքուած թողնում ու հեռանում է:*

*Սրտի տակից ժայթքող «Հէ~յ աշխարհ»-ով մայրս ինձ նկատողութիւն էր անում եւ ես չէի ընկալում, որ անհաւատարիմ եմ գտնւում այն բոլոր տառապանքների համար, որ սիրով կրել է, ցաւերով ինձ աշխարհ բերել եւ ինչ խանդաղատանքով մեծացրել է:*

*«Հէ~յ աշխարհ»-ով մայրս ասել կ'ուզէր, թէ աշխարհը փուչ է ու ունայն՝ անհաւատարիմ ու անցողիկ, որ զաւակը նոյնիսկ չի դառնում մօրը կարեկից:*

*Բայց մայր իմ անուշ ու հեզ, դու միշտ իմ սրտումն ես եղել, միշտ քեզ սիրել ու որդիական զգացումներս անբիծ կենդանութեանդ ցուցաբերել:*

*Մայր իմ սիրելի ու ազնիւ, մենք եղբայրներով չենք հաւատում քո մահւան, դու միշտ մնալու ես մեր սրտում եւ քո օգնութիւնը, աղօթքներն ու բարեխօսութիւնն ենք հայցում մինչեւ մեր կեանքի վերջալոյսը:*

***

*Մօրս թաղմանը չկարողացայ ներկայ լինել, վերջին անգամ դէմքը տեսնելու եւ համբոյրներով հրաժեշտ տալու նրան՝ ծառայութիւնից հիւծուած մաքրամաքուր մայրիկիս, սա ինձ համար մեծ ցաւ պիտի մնայ: Խնդրում եմ մայրիկ ջան այս անգամ էլ ներիր, չէ որ դու միշտ ներել ես ինձ իմ սխալներիս եւ թերացումներիս համար: Շիրիմիդ վրայ արցունք չթափեցի, բայց այստեղ արցունք թափուեց ինքնաբերաբար, խունկ ծխուեց, մոմեր վառուեց քո յիշատակի համար: Մեր նշանաւոր բանաստեղծ՝ Գեղամ Սարեանն եւս չկարողացաւ մօր թաղմանը ներկայ լինել, բայց նա մի սրտաբուխ բանաստեղծութեամբ խնդրում էր՝ արցունքներն ամպ դառնար մօր գերեզմանը թրջելու համար, որն ամբողջութեամբ արտատպում եմ՝*

Սիրտս բեկուած նստէի ես
Հեռու դաշտում անաղմուկ,
Ու որբացած մի մանկան պէս
Թափէի յորդ արտասուք:

Իմ արցունքներն արեւն առնէր,
Հանէր երկինք, դարձնէր ամպ,
Քամին նրան տանէ~ր, տանէ~ր,
Հեռու երկիր տխրութեամբ:

Եւ այնտեղ, ուր իմ արցունքիս
Ամպն ակամայ կը կանգնէր,
Թողնէր նրան, որ մայրիկիս
Սուրբ գերեզմանը թրջէր

***

*Հոգեգրաւ արտայայտութիւններով հոգեճաշը աւարտուեց:*

*Սգակիցները մեկնում են սփոփանքի խօսքեր ասելով...*

***(Յապաւումներով եւ վերջ)***


**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**
**«Մասիս»**
**Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680 massis2@earthlink.net**



**El Niño Awareness and Public Forum**



Presented by
Armenian Athletic Association Ladies Society
**THURSDAY, MARCH 24, 2016**
Starting at 7:00 p.m. – 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104
Keynote Speaker
Pasadena Police Chief Phillip Sanchez
**FREE ADMISSION • ALL ARE WELCOME**
Refreshments will be served

# ՊԱՏԱՌԻԿՆԵՐ՝ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԷՆ
# «ՊՏՈՅՏ ՄԸ ՊՈԼՍՈՅ ԹԱՂԵՐՈՒՆ ՄԷՋ»



ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ

Այա Սօֆիա

Այա Սօֆիայի Տաճարը Բիւզանդական Կայսրութեան ժամանակ ամենասուրբ վայրն էր Յունական Եկեղեցիին համար: Իր կառուցումէն (537) ետք, 916 տարի ան գործածուած է որպէս եկեղեցի, ապա, Կ.Պոլսոյ գրաւումէն ետք (1453)՝ 481 տարի ալ որպէս մզկիթ: «Իսլամանալէն» ետք, Այա Սօֆիային պատերը կիրով ծեփուեցան որպէսզի քրիստոնէական սրբապատկերներն ու գրութիւնները ծածկուին: Բնականաբար տաճարին չորս կողմերէն մինարէները սունկերու պէս վեր բարձրացան, Աստուծոյ եւ Քրիստոնեաներու սիրտերը խոցելու: Մուսթաֆա Քէմալ Աթաթիւրքի հրահանգով, այդ ծեփերը մաքրուեցան եւ 1935-էն ետք եկեղեցին վերածուեցաւ թանգարանի:

«Այա Սօֆիա» կը նշանակէ «Աստուածային Իմաստութիւն»:

360 թուականին, Բիւզանդիոնի Կոստանդին կայսրը Այա Սօֆիայի ներկայ վայրին վրայ «Մեծ Եկեղեցի»ն (Մէղալօ Էքլէսիա) շինել տուաւ, որը սակայն հրդեհի զոհ գնաց: 416-ին, Թէհէօտօսիուս Կայսրին հրամանով նոր եւ աւելի մեծ եկեղեցի մը շինուեցաւ նոյն վայրին վրայ: 532-ի «Նիքա»ի արիւնալի ապստամբութեան ժամանակ այս նոր եկեղեցին ապստամբներու կողմէ կործանեցաւ:

«Նիքա»ի ապստամբութիւնը ճզմուելէն ետք, Յուստինիանոս Կայսրը ներկայ տաճարին կառուցումին սկսաւ: Տաճարին կառուցումը տեւեց 5 տարի, ուր 100 մասնագէտ ճարտարապետներ եւ 10,000 արհեստաւորներ աշխատեցան շինութեան վրայ: Միջերկրականեան երկիրներէն բերուեցան լաւագոյն մարմարները: Եկեղեցիին գլխաւոր չորս կանանչ կրանիթեայ սիւները բերուեցան Եփեսոսի «Հարպըր Ծիմնազիում»էն, չորս անկիւններու հսկայական ծիրանագոյն սիւները եկան Պաալպէքի Աբօլլօյի մեհեանէն: Եկեղեցիին հսկայական (աշխարհի ամենաբարձր) գլխաւոր գմբէթը վեր բռնելու համար գործածուած են 40 հիմնական եւ 67 պատշգամներու սիւները: Որպէսզի գմբէթը շատ ծանր չըլլայ, Ռոտոսի կղզիէն բերուած են մասնաւոր, թեթեւ կղմինտրէ պատրաստուած աղիւսներ: Իրարայաջորդ կայսրերը եկեղեցին զարդարած են բիւզանդական ոճի մօթիֆներով, մոզայիք սրբապատկերներով եւ Սուրբ Գիրքէն գրութիւններով: Պատերուն վրայ կը գտնենք Յունական եկեղեցւոյ նշանաւոր Պատրիարքներու նկարները: Քանի որ Իսլամները «սրբապատկերներ»ու դէմ են, պատերուն վրայ կը տեսնենք շրջանի իսլամ նշանաւոր մեծամեծներու անունները միայն, արաբերէն գեղագիրներով գրուած:

Մուտքի ձախ կողմը կայ եռանկիւնաձեւ մարմարեայ սիւն մը որ «Լացող Սիւն» կամ «Խոնաւ Սիւն» կը կոչուի: Ըստ աւանդութեան, եթէ մատդ այդ «Լացող Սիւն»ի ծակերէն մէկուն մէջ մտցնես եւ մատդ խոնաւնայ, փափաքդ կը կատարուի: Ես փորձեցի, եւ տակաւին կը սպասեմ փափաքներուս իրականացման ... :

1204-ին, երբ Խաչակիրները Կ. Պոլիսը գրաւեցին, Այա Սօֆիա եկեղեցին վերածեցին Լատինական, կաթողիկէ եկեղեցիի: Երբ անոնք հեռացան Կ.Պոլիսէն, որպէս «խաչակիր»ներ, ոսկեայ խաչերը «կրեցին» իրենց հետ, ինչպէս նաեւ սրբապատկերները եւ եկեղեցւոյ գանձը կողոպտելով միասին տարին:

Երբ ուխտագնացներս սիւնազարդ միջանցքներէն թանգարան - եկեղեցին մտանք, մեզմէ առաջ հաւանաբար աւելի քան հազար զբօսաշրջիկներ ներսն էին: Եկեղեցի-Թանգարանի մէկ մասը վերանորոգումի մէջ էր: Մուտքին ճիշդ դիմացը, մայր խորանին վրայ Աստուածածնի մեծադիր նկարը կայ, Յիսուս Մանուկը գրկած: Սրբապատկերին աջ եւ ձախ կողմերը կը տեսնենք Կոստանդին եւ Յուստինեանոս Կայսրերուն նկարները իրենց ընտանիքներով: Քիչ մը աւելի առջեւի պատին աջ կողմին վրայ մեծադիր արաբերէն տառերով գրուած է «Ալլահ», իսկ ձախ կողմը՝ «Մուհամմէտ»: Կողմակի պատերուն վրայ գրուած էին առաջին չորս խալիֆաներու անունները, Ապու Պէքիր, Օմար, Օսման եւ Ալի: Մուտքի դրան երկու կողմերն ալ գրուած էին Մուհամմէտի երկու թոռներուն անունները ՝ Հասան եւ Հուսէյն: Հոս փակագիծ մը բանալով դրուագ մը պատմեմ: Օսմանցի Սուլթաններէն մէկուն զաւակները «Հասան» եւ «Հուսէյն» կը կոչուէին: Սուլթանը «ֆէրման» մը կը հանէ, որով կը հրահանգուի բոլոր եկեղեցիներու մէջ, Պատարագի ժամանակ այդ անուններն ալ յիշել: Կիրակի մըն ալ երկու Թուրք լրտեսներ եկեղեցի կու գան ստուգելու որ քահանան այդ անունները պիտի յիշէ՞: Մեր քահանան ալ քարոզի ժամանակ կ՚ըսէ որ «երբ մարդիկը հիւսիսէն Յիսուսին քով հասան ...»: Լրտեսները գոհ սրտով կը վերադառնան իրենց տիրոջ քով: Որպէսզի կարենայինք գմբէթը տեսնել, գլուխնիս պէտք էր 90 աստիճանով ետ տանէինք: Տասնեակներով յախճապակեայ հսկայ ջահեր կը լուսաւորէին եկեղեցի-թանգարանը: Պատերուն վրայ իւրաքանչիւր կէտը ծածկուած էր զարդանկարներով կամ զանազան կերպերով:

Այա Սոֆիա եկեղեցի-թանգարանին մէջ կան նաեւ սուլթաններու կողմէ տրուած «ֆէրման»ներ, արաբատառ շատ գեղեցիկ, Օսմանեան ոճով գեղազարդարուած: Այս "calligraphy"ներուն իւրաքանչիւրը արուեստի գործեր են: Հաւանաբար այդ գրիչներէն ոմանք հայեր եղած են:

Յոյները եւ Օրթոտոքս Եկեղեցին տակաւին յոյսը ունին որ «օր մը» Այա Սոֆիան իրենց պիտի վերադարձուի: Տակաւին քանի մը շաբաթ առաջ, Ռուս-Թրքական վերջին խնդիրներուն ժամանակ, Ռուսական կարգ մը թերթեր եւ պետական պաշտօնեաներ յիշեցուցին Թուրքերուն որ Այա Սոֆիան Օրթոտոքս Եկեղեցիին կը պատկանի եւ զայն պէտք է իր տէրերուն վերադարձուի ... :

Աշխարհի այս ամենագեղեցիկ եւ ամենափառաւոր եկեղեցիներէն մէկուն մասին աւելի յստակ գաղափար մը կազմելու համար անհրաժեշտ է անձամբ այցելել եւ վայելել յունա-օսմանական արուեստներուն մէկտեղումը զարմանահրաշ եւ փառաւոր միջավայրի մէջ:

Օր մը, երբ Իսթանպուլը վերագրաւուի Յոյներուն կողմէ, Այա Սոֆիան ալ կը վերասրբագործուի...:

Իսթանպուլի Գոց Շուկան (Գափալը Չարշը)

Աւելի քան 3500 խանութներ կամ կրպակներ 80 փողոցներու երկայնքին փռուած մաս կը կազմեն Իսթանպուլի Գոց Շուկային: Մօտ 15,000 ծախողներ ժրաջան կ՚աշխատին այս խանութներուն մէջ: Նուրօսմանիէի մայր դռնէն զատ 17 մուտքերով կարելի է մուտք գործել այս շուկայէն ներս: Բացի խանութներէն, 7 աղբիւր-շատրուաններ, մզկիթ մը եւ 12 «աղօթատեղիներ» կան շուկային մէջ:

12 երկրաշարժներէ եւ 9 մեծ հրդեհներէ ետք, 1954-ին շուկան գտաւ իր ներկայի ձեւը:

Մեր այցելութեան վերջին օրը այս շուկան պիտի այցելէինք: Պասը նախ մեզ Պոլսոյ նեղլիկ թաղերէն հայկական հին շրջանները տարաւ: Կը զարմանայինք որ ինչպէ՞ս այսքան նեղ թաղերէն այդ հսկայ պասը կրնայ շարժիլ: Յանկարծ տեսանք որ ճամբաներէն մէկը փորած էին խողովակներ զետեղելու: Գամուած մնացինք: Շարժավարը ոչ կրնար ետ-ետ երթալ, ոչ ալ առաջ: Մարդը գնաց գործաւորներուն ըսելու որ փոսը լեցնեն որպէսզի պասը կարենար իր ճամբան շարունակել: «Տէլի մը սըն նէ սըն» (խե՞նդ եւ ի՞նչ ես) եղաւ մարդոց պատասխանը: Շարժավարը եւ աշխատողները Թրքերէնով շատ «մաքուր» եւ «երաժշտախառն ելեւէջներով» հայհոյանքներ փոխանակել սկսան: Ժամէ մը աւելի հոն վատնելէն ետք, քալելով ետ դարձանք եւ ուրիշ պասով մը շուկայ գացինք:

Մարդուս միտքէն ի՞նչ կ՚անցնի, շուկային մէջ կը ծախէին: Օսմանցիներուն ժամանակ գերիներ ալ կը ծախէին եղեր: Գորգավաճառներէն մինչեւ ոսկերիչները, անուշավաճառներէն մինչեւ տեսակաւոր համեմունքներ ծախողները, յուշանուէրներէն մինչեւ հագուստեղէն ծախողները, կօշիկներէն մինչեւ խաղալիք ծախողները, մէկ խօսքով, ծախու էր «ամէն բան»: Մեզի համար, մանաւանդ մեր կիներուն համար, նուազագոյնը երեք օր պէտք էր «քիչ մը գնում» ընելու, բայց հազիւ քանի մը ժամ ունէինք: Գեղեցիկ յուշանուէրներ, անուշեղէններ (խենդանալիք լոխումներ ունէին անպիտանները), եւ ուրիշ բաներ գնելէ ետք, որոշուած դռնէն դուրս ելանք: Շուկային ճիշդ դուրսը, ձեռքի վրայ,

Շար.ը էջ 18




## ԻՆՉՊԷՍ ՄԵԾՑՆԵԼ ԿԱՄՔԻ ՈՒԺԸ

Թէեւ շատերը կը կարծեն, որ կամքի ուժը բնածին տրուած երեւոյթ է՝ հոգեբանները կը պնդեն, որ անիկա կարելի է աւելի մեծցնել ու աւելի կամային դառնալ: Այսպիսով, ինչ պէտք է ընել կամքի ուժը «մարզելու» համար:

Մտախոհութիւն (meditation)

Մտախոհութիւնը որոշ մարդոց համար հաւանաբար կը թուի բաւական ձանձրալի եւ անիմաստ զբաղմունք, բայց անիկա կրնայ օգնել ձեզի կամքի ուժը մեծցնելու հարցով:

Մտախոհութեան առաջին օրերուն, ձեր գիտակցութիւնը պիտի փորձէ խանգարել եւ ստիպել ձեզի յանձնուիլ: Սակայն դուք կրնաք վերահսկել ձեր մտքերն ու ստիպել գիտակցութեան լռել: Ընդունեցէք մտախոհութեան դիրքը եւ խոր շնչեցէք ու արտաշնչեցէք: Քանի մը օր անց դուք պիտի նկատէք, որ դուք աւելի դիւրութեամբ կը կեդրոնանաք ձեր խնդիրներուն վրայ եւ չէք շեղիր:

Հետեւեցէք ձեր կեցուածքին

Գիտնականները ապացուցած են, որ աւելի կամային դառնալու համար պէտք է ուղղել կեցուածքը: Ուսումնասիրութիւններուն մասնակցած կամաւորները, երկու շաբաթ հետեւելով իրենց կեցուածքին, դարձած են աւելի կամային, որ պարզ դարձած է յատուկ փորձարկումներու միջոցով: Ուստի, մշտապէս ուղղեցէք կեցուածքը:

Սննդականոն

Կամքի ուժին վրայ դրական ազդեցութիւն կրնայ ունենալ նաեւ յստակ սննդականոնը: Պարզապէս պէտք է ճիշդ ժամանակին ուտել եւ երբեք չշեղիլ սահմանուած վարչաձեւէն:

Հետեւեցէք ձեր խօսքին

Ասիկա կամքի ուժը փորձելու եւ զայն աւելի ամրացնելու հիանալի միջոց է: Պէտք է հետեւիլ ձեր խօսքին եւ փորձել ճիշդ, պարզ, լակոնիկ, հոմանիշներով հարուստ խօսք օգտագործել: Այսինքն՝ աւելի գեղեցիկ խօսիլ: Մէկ ամիս անց գրագէտ խօսքը ձեզի համար այլեւս ոչ մէկ դժուարութիւն չի յառաջացներ:

Յստակ նպատակներ

Ձեր չիրականացած ծրագիրները բացասական հետեւանքներ կրնան ունենալ ձեր կամքի ուժին վրայ: Սակայն յուսահատելէ առաջ պէտք է հասկնալ, թէ որքան իրական էին այդ նպատակները, որքան միջոց, ուժ եւ եռանդ ներդրած էք անոնց իրականացման հարցով: Բայց այս ամէնէն խուսափելու համար պէտք է յստակ եւ ճիշդ նպատակներ ունենալ:

Մարզուիլ

Գաղտնիք չէ, որ մարզաձեւի մը հետեւիլն ու մարզումները աւելի կամային կը դարձնեն մարդը: Հետեւաբար, եթէ կը փափաքիք «մարզել» կամքի ուժը, քանի մը ամիս գացէք մարզուելու: Այնուհետեւ ատիկա սովորութիւն պիտի դառնայ ձեզի համար եւ դուք նոյն եռանդով պիտի շարունակէք:

Ուշադրութիւն դարձուցէք ձեր շրջապատին

Եթէ կը փափագիք վերահսկել ձեր կամքի ուժը, պէտք է նաեւ ուշադրութիւն դարձնէք ձեզ շրջապատող մարդոց: Կան մարդիկ, որոնք կը սպառեն ձեր ուժն ու կը նուազեցնեն կամքի ուժը: Պէտք է ազատիլ անոնցմէ: Պէտք է չփուիլ այնպիսի մարդոց հետ, որոնք օրինակ, «մարտկոց» ըլլան ձեզի համար եւ զանոնք տեսնելով դուք մեծ եռանդով կը լեցուիք:

## ԻՆՉՊԷՍ ՃԻՇԴ ՁԵՒՈՎ ԸՆԴՀԱՏԵԼ ԶՐՈՅՑԸ՝ ՉՆԵՂԱՑՆԵԼՈՎ ԶՐՈՒՑԱԿԻՑԸ

Յաճախ պէտք կ՚ըլլայ ընդհատել գործնական խօսակցութիւնը, սակայն վախը, որ կրնաս նեղացնել խօսակիցը, չի ձգեր ընել ատիկա:

Ներկայացնենք քանի մը խորհուրդ...

1. Շնորհակալութիւն յայտնեցէք (բովանդակալից զրոյցի, տեղեկութեան, անկեղծութեան, ժամանակ տրամադրելու համար եւ այլն):

2. Հակիրճ ձեւով բացատրեցէք, թէ ինչ մտադիր էք ընել եւ ցոյց տուէք, որ անմիջապէս ձեռնամուխ պիտի ըլլաք այդ գործին:

3. Խօսակիցին առաջարկեցէք շտապ որեւէ բան ընել, բացատրելով, թէ ինչու պէտք է ատիկա անյապաղ կատարել:

4. Ոտքի կանգնեցէք, սեղմեցէք ձեռքը, հրաժեշտ տուէք:

5. Այցելուին ուղեկցեցէք մինչեւ դուռը:

6. Գործողութեան մէջ դրէք «փրկութեան մասին համաձայնագիրը» գործընկերոջ հետ:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ՏԱՍԸ ԵՐԵՒՈՅԹ, ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ՊԷՏՔ Է ՄԻՇՏ ՅԻՇԵԼ

Ամբողջ կեանքի ընթացքին կը սպասես մէկուն, որ կը հանդիպի եւ կ՚ընդունի քեզ այնպէս, ինչպէս որ ես, բայց յետոյ կը հասկնաս, որ դուն երբեք ալ առանձին չես եղած, քանի որ դուն քեզի ունիս: Քու կեանքդ ՔՈՒ ձեռքերուդ մէջ է եւ ՈՉ ՄԷԿԸ կրնայ երջանկութիւն պարգեւել քեզի: Այս հարցով քեզի կ՚օգնեն հետեւեալ տասը խորհուրդները: 80/20-ի օրէնքը

Փարէթոյի կամ 80/20-ի օրէնքը կը նշանակէ՝ 20% ջանք եւ 80% արդիւնք, իսկ ուժերու մնացած 80%-ը կու տան 20%-ի արդիւնք: Օրինակ՝ պարտադիր չէ մառանը կամ նկուղը ամէն օր մաքրել, քանի որ անոնք այնքան ալ յաճախ չեն օգտագործուիր, իսկ խոհանոցը կամ լոգարանը ամէնօրեայ մաքրութեան պէտք ունին: Այսպիսով, ձեր բնակարանին մէջ սենեակներու 20%-ը կը պահանջեն ձեր ուշադրութեան եւ ջանքերուն 80%-ը:

Այս պարագային տունը մաքրելու խնդիրը աւելի արդիւնաւէտ ձեւով կը լուծուի: Կեդրոնացիր եւ ժամանակը ծախսէ արդիւնաւէտ գործերու վրայ:

Փարքինսընի օրէնք

Համաձայն Փարքինսընի օրէնքին՝ աշխատանքը կը սպառէ անոր կատարման յատկացուած ամբողջ ժամանակը: Այսինքն՝ եթէ գործատուն կը յանձնարարէ մէկ ամսուան մէջ կատարել աշխատանք մը, որ կարելի է աւարտին հասցնել մէկ շաբթուան մէջ, ապա աշխատողը անպայման անիկա կ՚ընէ մէկ ամսուան մէջ՝ դժուարացնելով եւ երկարացնելով աշխատանքը կատարելու գործընթացը: Ան չի կեդրոնանար էական եւ հիմնական խնդիրի լուծման վրայ եւ ժամանակը արդիւնաւէտ ձեւով չ՚օգտագործեր: Իսկ եթէ սահմանուած ժամկէտը ըլլայ մէկ շաբաթ, ան պիտի կեդրոնանայ իր գործին վրայ եւ արդիւնաւէտ ձեւով պիտի կատարէ զայն: Այսինքն՝ պէտք է աւելի արագ գործել:

Տալ, իսկ յետոյ ակնկալել

Ասիկա ճիշդ հերթականութիւնն է: Սկիզբը պէտք է տալ, իսկ յետոյ ակնկալել, քանի որ միայն այսպէս դուն կը ստանաս այն, զոր կը փափաքէիր եւ կ՚երազէիր: Յիշէ, աշխարհի վրայ ամէն վայրկեան կ՚իրականանայ ոեւէ մէկուն երազանքը: Վաղը հաւանաբար քուկդ կատարուի: Ոչ մէկը երբեք իր տուածէն աւելին չէ ստացած:

Սխալներ եւ անյաջողութիւններ

Անոնք անգնահատելի փորձ կրնան ըլլալ քեզի համար: Անյաջողութիւնները կրնան խթան դառնալ յաջողութեան ճանապարհին: Սխալներէն պէտք չէ հիասթափուիլ, անոնք երբեմն կրնան դրական ազդեցութիւն ունենալ կեանքիդ վրայ: Ծանօթացիր եւ ազատօրէն շփուիր նոր մարդոց հետ: Իւրաքանչիւր հանդիպում պատմութիւն մըն է եւ անոր պէտք է լուրջ վերաբերիլ: Եթէ անծանօթ մարդոց հետ կը շփուիս այնպէս, ինչպէս մտերիմներուդ, ուրեմն աւելի ինքնավստահ, աւելի անկեղծ մարդու տպաւորութիւն կը ձգես եւ դրականօրէն կ՚ազդես դիմացինիդ վրայ:

Լաւատեսութիւնը կրնայ փոխել իրականութիւնը

Յոռետեսութիւնը կը թաքնուի իրականութեան դիմակին տակ եւ միայն լաւատեսութեամբ կրնաս փոխել զայն:

Երախտագիտութիւն՝ պարզ միջոց երջանիկ զգալու համար Հիանալի միջոց շրջապատի հետ լաւ յարաբերութիւններ հաստատելու, անոնց ուրախութիւն պարգեւելու եւ ինչու ոչ, երջանկանալու համար. չէ որ երջանկութեան զգացումը վարակիչ է:

Մի համեմատեր քեզ ուրիշներու հետ Եթէ դուն քեզ կը համեմատես ուրիշներու հետ, ուրեմն կ՚արտօնես, որ արտաքին աշխարհը ղեկավարէ քեզ: Իբրեւ արդիւնք տրամադրութեան անկումը անխուսափելի է: Աւելի ճիշդ եւ արդիւնաւէտ պիտի ըլլայ, եթէ համեմատես նոյնինքն դուն քեզ հետ, որպէսզի տեսնես, թէ որքան աճած ես, զարգացած եւ ինչ նուաճումներ արձանագրած ես:

Վախի աչքերը շատ մեծ են

Վախերուդ 80-90%-ը երբեք տեղի չ՚ունենար: Անոնք միայն կը ծնին եւ կ՚ապրին գլխուդ մէջ: Անհանգստութիւնը ժամանակի եւ ուժի անիմաստ կորուստ է:

Ամէն ինչին շատ լուրջ ձեւով մի վերաբերիր Այսօրուան խնդիրներէն շատերը վաղը նոյնիսկ պիտի չյիշես: Եթէ զգացումներուն եւ միտքերուն շատ լուրջ կը վերաբերիս, կը սպառես ուժերդ: Մտածէ միայն դրական երեւոյթներու մասին:

## 3 ՀԻՄՆԱՒՈՐ ՊԱՏՃԱՌ՝ ՁԿԱՆ ԻՒՂԸ ԱՇՆԱՆ ԵՒ ՁՄՐԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հիւանդութենէ ամենալաւ պաշտպանութիւնը ժամանակ առ ժամանակ առողջութեան հետեւիլն է: Բայց, չես գիտեր ինչու, մարդոց մեծ մասը իր առողջութեան մասին կը յիշէ միայն, երբ ցուրտ է, եւ կը սկսի վարակիչ հիւանդութիւններու շրջանը: Երբ կը նկատես, որ հանրակառքերը լեցուն են փռշտացող եւ հազացող մարդոցմով, յանկարծ կը հասկնաս, որ մարմինը պէտք է պաշտպանել հիւանդութիւններէն: Լաւագոյնը, ինչ որ կարելի է առաջարկել այդ պարագային, ձկան իւղն է:

Ձկան իւղի բաղադրութեան մէջ կը մտնեն մեծ քանակութեամբ վիթամիններ, հանքանիւթեր եւ օմեկա-3 թթուներ, որոնք անհրաժեշտ են մարմնին՝ անոր լիարժէք աշխատանքին համար: Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան տուեալներով՝ ձկան իւղի պարբերաբար օգտագործումը կը նուազեցնէ սրտի կաթուածի, ինչպէս նաեւ՝ սիրտ- անօթային հիւանդութիւններու յառաջացումը:

Ապացուցուած է, որ ձկան իւղի պարբերաբար օգտագործումը դրականօրէն կ՚ազդէ դիմադրողական համակարգին վրայ: Ըստ որոշ հետազօտութիւններու՝ օմեկա-3 թթուները զգալիօրէն կը նուազեցնեն քաղցկեղի յառաջացման հաւանականութիւնը:

Ձկան իւղը կը կայունացնէ զարկերակային ճնշումը: Զայն կը նշանակեն թոքախտի, ռախիտի, անեմիայի պարագային:

Խորհուրդ կը տրուի դաշտանի ցաւի, յղութեան բարդութիւններու պարագային:

Կ՚արտօնուի օգտագործել ճարպակալման, շաքարախտի, օսդէոփորոզի, փսորիազի պարագային:

Դրական ազդեցութիւն կ՚ունենայ ջղային համակարգին վրայ:

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Դժբախտաբար գործիդ խորերը չես թափանցեր եւ անոր լրջութեան կարեւորութիւն չես տար: Շատ ներկայանալի եւ վայելուչ ես, սակայն դուն քեզ չես արժեւորեր: Քեզի տրուած պատասխանատուութիւնները լիուլի կատարէ որ շաբաթավերջին հանգչիս:
Բախտաւոր թիւերդ են: 2,14,16,25,30

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Կրնաս մօտաւորապէս գուշակել դիմացինիդ նկարագիրը, սակայն անոնց իսկական նկարագիրը կը յայտնուի անոնց վարուելակերպէն: Ֆիզիքապէս տկար եւ թերաճ չմնալու համար, պէտք է սնունդիդ եւ կերուխումիդ լաւ հոգաս: Կեղծաւոր մարդոցմէ հեռու մնացիր:
Բախտաւոր թիւերդ են: 8,19,27,29,35

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20
Մարդոց տկարութիւնները օգտագործելով հաճոյք կը ստանաս, զգուշացիր բարկացող անձերէ: Խորհրդաւոր ճամբորդութիւն մը քեզ պիտի մօտեցնէ անձի մը որ երկար ատենէ շուրջդ դառնալով բարեկամդ ըլլալ կ'ուզէ: Փորձէ օգնել կարօտեալներուն:
Բախտաւոր թիւերդ են: 11,18,25,26,34

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Գործատեղիիդ մէջ՝ քեզի համար աշխատող անձերու տարբերութիւններուն նայելով մի դատեր զանոնք: Ընտանիքիդ անդամներէն մէկուն նկատմամբ վրէժխնդիր մի ըլլար, մասնաւորապէս մի ստեր եւ մի մերժեր անոր ներողամտութիւնը:
Բախտաւոր թիւերդ են: 9,15,18,27,31

**ԱՌԻՒԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Վիճաբանութիւններու ընթացքին երբեմն տեղի տալը աւելի լաւ է քան շարունակելը:
Երբ գործիդ մէջ հարցերը կը դժուարանան, կրնաս քիչ մը հանգչիլ եւ նորոգել զօրութիւնդ: Վստահէ հաւատարիմ բարեկամներուդ:
Բախտաւոր թիւերդ են: 6,16,24,31,34

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Ինքզինքդ պաշտպանէ խաբկանքներէ որպէսզի կարենաս զանազանել ճշմարտութիւնը՝ սուտէն: Շուրջիններուդ հետ հաղորդակցելու համար պէտք է իրենց հետ իրենց հետաքրքրող նիւթերու շուրջ խօսիս: Մեծ հաւաքի մը ներկայ պիտի ըլլաս:
Բախտաւոր թիւերդ են: 13,21,28,29,33

**ԿՇԻՌՔ** Սեպտեպբեր 23-Հոկտեմբեր 22
Նոր ինքնաշարժ մը գնելու նպատակդ շուտով պիտի իրականանայ: Ատամնային հարց մը քեզ շատ նեղելով՝ անտրամադիր պիտի դարձնէ: Կամակոր վերաբերմունքէ ձերբազատուելու լաւագոյն միջոցը՝ հանդարտ ըլլալն է:
Բախտաւոր թիւերդ են: 8,11,22,26,30

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Զօրաւոր ատելութիւն մը ունիս անձի մը հանդէպ, որու ներկայութենէն չես կրնար խուսափիլ: Փորձէ ինքզինքդ զսպել: Նեղութիւններէդ փախչելու համար մի տանջուիր, քաջութեամբ դիմագրաւէ զանոնք:
Բախտաւոր թիւերդ են: 1,14,25,28,29

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Գեղարուեստական ձեռնարկի մը ներկայ գտնուելով՝ շատ լաւ ժամանակ պիտի անցնես: Յատկանշական նկարագրի տէր անձ մըն ես եւ թերութիւններդ լաւ գիտնալով՝ դուն քեզ լաւ կը պահես: Նուէր մը պիտի ստանաս, մի մոռնար գնահատելու անձը:
Բախտաւոր թիւերդ են: 9,14,18,24,29

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Ընտանեկան փոխյարաբերութիւններդ զոհաբերութեամբ պէտք է ըլլան: Մոլութիւններ թող չտիրապետեն կեանքիդ վրայ, իմաստուն եւ արթուն եղիր: Գործիդ մէջ մեծ յառաջդիմութիւն մը քեզ շատ զբաղ պիտի պահէ:
Բախտաւոր թիւերդ են: 2,8,11,20,24

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18
Հին բարեկամներուդ հետ կապը պահելու ես եւ յարաբերութիւններդ հաստատես: Միտքդ եւ զգացումներդ վարանումի մէջ են եւ շատ մտածելով դուն քեզ կ'անհանգստացնես: Չակնկալուած տեղէ մը անակնկալ մը պիտի ունենաս:
Բախտաւոր թիւերդ են: 5,8,24,34,35

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Աշխարհը վայելել շատ կը սիրես, սակայն նիւթական դժուարութիւնները քեզ ետ կը ձգեն: Մեծ կարելիութիւն ունիս արժանանալու բարձր գնահատանքի՝ որմէ լաւ արդիւնքներ պիտի տեսնես: Մեծ հաւաքոյթի մը կը պատրաստուիս:
Բախտաւոր թիւերդ են: 10,18,27,31,34

## Իրաւ. Արսէն Դանիէլեանի խօսքը

*Շարունակուած էջ 7-էն*

*ներ, սակայն անվիճելի եւ աղաղակող կերպով յատուկ է թէ Օսմանեան Թուրքիայի ժառանգորդները ինչպիսի ոճրային դեր են խաղում սուրիական բեմում, իբրեւ ուղղակի եւ անուղղակի զոհ ընտրելով քրդերին, հայերին եւ այլ զանգուածներին: Այս մօտեցումով էլ, Հալէպում ու սուրիական այլ վտանգուած գօտիներում ապրող մեր հայրենակիցները անվիճելիօրէն դասւում են մեր Դատի գինուորագրեալների շարքում եւ պաշտպանում են հայութեան պատմական բերդը:*

*Այս բոլորին գիտակցում ենք մենք: Տագնապի ծանրութեանը հաղորդակից է ամբողջ հայկական աշխարհը, Հայաստանից մինչեւ մօտակայ եւ հեռաւոր հայկական օջախներ: Ստեղծուած վիճակի մասին աւելի սրտացաւ գիտակցութիւն են ապրում մանաւանդ հայութեան ընդհանուր մարմնի այն գօտիները, որոնք մօտ կամ հեռու անցեալում ապրել են նման վիճակներ: Անշուշտ ոչ մէկ շրջանի տագնապ կարելի է բաղդատութեան դնել միւսի հետ, սակայն մենք՝ Իրանահայերս էլ մէկն ենք տագնապներից անցած ու փոթորիկների յաղթահարած հայութեան գաւակներից, հետեւաբար, երէկ, այսօր ու վաղն էլ մենք՝ Իրանահայերս մնալու ենք օժանդակութեան հրաւէրների ընդառաջողների առաջին շարքերում:*

*Այս պահին, բոլորդ այստեղ էք՝ ընդառաջելով Լոս Անջելոսի Իրանահայ Միութեան հրաւէրին, եւ ես որպէս ատենապետը այս միութեան Խնամակալ Մարմնի ի խորոց սրտի շնորհակալութիւն եմ յայտնում Ձեզ, ձեր ներկայութեան ու այս նախաձեռնութեան Ձեր մասնակցութեան համար:*

*Լոս Անջելոսի Իրանահայ Միութիւնը, սիրելի բարեկամներ, այս քաղաքում ստեղծել է ազնիւ աւանդութիւններ, որոնք իբրեւ հարկատու առուակներ թափւում են ամբողջական հայութեան կենսատու գետի մէջ, որոգում են թէ՛ այս գաղութի դաշտերը եւ թէ՛ հասնում այնտեղ ուր կարիք է զգացւում: 60 տարիներ առաջ, Լոս Անջելոսում հիմնադրուած այս միութիւնը ունի խոր արմատներ, որոնք երկարում են մինչեւ Պարսկաստանի հայաշխարհը եւ այնտեղից՝ մինչեւ Մայր Հայաստան, այսինքն՝ հայկական բոլոր օջախների մայրը: Իրանահայ Միութիւնը ծառայում է մեր մշակոյթին, պահպանում ու աճեցնում է դրան, որպէսզի մեր նոր սերունդները հաղորդակից լինեն մեր պատմութեան ու մշակոյթին: Իսկ մեր պատմութիւնն ու մշակոյթը կերտւում են նաեւ այսօր, հայութեան ամէն մի բնակավայրում՝ Հայաստանից մինչեւ Աւստրալիա ու Լոս Անջելոս: Այսօրուայ մեր պատմութեան էջերում արձանագրւում են նաեւ տխուր ու մութ էջեր, որոնցից է Սուրիայի հայութեան ու մասնաւորաբար Հալէպի մեր հարազատների ամենօրեայ ողբերգութիւնները:*

*Սիրելի բարեկամներ,*

*Վերջին տարիներին, մէկից աւելի հանգրուաններով մենք՝ Իրանահայերս էլ մասնակցութիւն ենք բերել հանգանակային եւ օժանդակութեան այս արշաւներին, որոնք կազմակերպուել են Արեւմտեան Միացեալ Նահանգներում: Մասնակցութիւն ենք բերել Հալէպի, Քեսապի եւ այլ շրջաններում ապրող հայերին օժանդակութեան աշխատանքներին, որովհետեւ չենք կարող անտարբեր աչքով ու կրաւորական դիրքերից դիտել պատահածը, չենք կարող ընդունել, որ պատմական մի գաղութ ամբողջովին փոշիանայ ու նրանից մնայ միայն մի հպարտաւիթ պատմութիւն: Հալէպն ու ընդհանրապէս Սուրիայի մեր գաղութը հայկական աշխարհում կերտել են փառաւոր պատմութիւն, այնպէս ինչպէս Իրանահայութիւնը կերտել է իր իւրայատուկ մշակութային եւ տնտեսական պատմութիւնը: Բոլորիս սրտերը բաբախել են թէ՛ մեր ապրած երկրների եւ թէ՛ Մայր Հայրենիքի՝ Հայաստանի եւ Արցախի սրտի զարկերի կշռոյթով: Տարբեր վիճակ ոչ միայն անընդունելի պիտի լինէր, այլ նաեւ աներեւակայելի:*

*Այսօր, Լոս Անջելոսի Իրանահայ Միութիւնում, մեր տնում, հաւաքուել ենք անցեալի ու ներկայի մեր արժանիքների ամբողջական գիտակցութեամբ: Մեր արժանիքներից են բխում հայութեան տարբեր շրջաններին սրտակից ու կարեկից լինելու զգացմունքը: Ես կասկած չունեմ, որ խօսում եմ բոլորիդ սրտից եւ հոգուց: Այս մտածումները միայն իմը չեն, այլ հաւատում եմ, որ որեւէ հայ նոյնն է մտածում, եւ գործում է այս գիտակցութեամբ եւ մղումով:*

*Նոյնքան վստահ եմ, որ Լոս Անջելոսի Իրանահայ Միութեան մեր այսօրուայ հաւաքն էլ գործնապէս տալու է այն շօշափելի արդիւնքը, որի նմաններով մեր ճակատը բարձր ենք պահել երէկ եւ անցեալին: Թող Հալէպի, Քեսապի եւ տառապեալ Սուրիայի այլ շրջաններում ապրող մեր քոյրերն ու եղբայրները, մանուկներն ու պատանիները վստահ լինեն, որ Լոս Անջելոսից մինչեւ Թեհրան եւ այլ օջախներ, հայը իր մորթի վրայ է զգում նրանց ցաւը, եւ հայութեան հաւաքական կամքից է երկարում օգնութեան մեր ձեռքերը:*

*Մեր առաջին ու վերջին փափաքն ու մաղթանքն է, որ հնգամեայ այս տագնապը շուտով հասնի վերջակէտի, որպէսզի Սուրիան ու նրա Հայ զաւակները վերաբացեն իրենք կեանքի բնական ուղիները եւ բոլորս միասին համաչափ քայլերով շարունակենք թէ՛ մեր պահանջատիրական եւ թէ՛ մեր հայապահպանումի երթը:*

## «ՊՏՈՅՏ ՄԸ ՊՈԼՍՈՅ ԹԱՂԵՐՈՒՆ ՄԷՋ»

*Շարունակուած էջ 16-էն*

*տեղական, եւրոպական եւ ամերիկեան նշանաւոր անուշահոտներ եւ «Ռոլեքս» ժամացոյցներ կը ծախէին: Անուշահոտերուն գինը «մեռցնելէն» ետք քանի մը հատ գնեցինք, իսկ ժամացոյցները, քանի որ «թախլիթ» (կեղծ) էին, չառինք: Փերեզակները մինչեւ պասը մեզի հետեւեցան (150-200 մետր) որպէսզի իրենց ապրանքները ծախէին: Լաւ որ Ալիսը քովս էր, ապա թէ ոչ քանի մը հարիւր տոլար կը ծախսէի:*

*Հասանք պանդոկ եւ սկսանք վալիզները պատրաստել յաջորդ առտու մեր տուները վերադառնալու:*

# Առնօ Բաբաջանեանի Ծննդեան 95-Ամեակը

*Շարունակուած էջ 14–էն*

*ստացուեց եւ մտաւ ձայնադարանի փակ ֆոնդ: Այդ նշանակում էր, որ դու քո պատասխանատուութեամբ կարող ես այդ ձայնագրութիւնից օգտուել մի փոքր մաս, կամ հատուած վերցնելով նրանից, այն էլ որեւէ գրական-երաժշտական հաղորդման մէջ:*

*Երաժշտական հաղորդումների խմբագրութեան գլխաւոր խմբագիր, տաղանդաւոր լրագրող եւ հիանալի թարգմանիչ Արմէն Յովհաննիսեանի հետ ուղիներ էինք փնտռում Առնոյի այդ հրաշալի մշակումը եթեր տալու համար, բայց չէինք գտնում:*

*Եղաւ այնպէս, որ Արմէնը պիտի գնար Մոսկուայ գործուղման: Ինչպէս նախկինում, ես էի փոխարինելու նրան: Ձայնադարանի տնօրէնուհին, Տիկին Ռոզան միայն Արմէնի ստորագրութեամբ իրաւունք ունէր փակ ֆոնդից որեւէ ձայնագրութիւն դուրս հանել: Որոշել էի, ինչ գնով էլ լինի՝ Առնոյի գործը հասցնել ռադիոունկընդրին, հաշուի չառնելով անգամ աշխատանքից վտարուելու վտանգը: 1965-ի դէպքերի յիշողութիւնը դեռ թարմ էր մարդկանց երեւակայութեան մէջ:*

*Առանց երկար-բարակ, ծանրթեթեւ անելու, քայլերս ուղղեցի դէպի ձայնադարան.*

*- Տիկին Ռոզա, խնդրում եմ բերէք Առնօ Բաբաջանեանի գործի օրերս կատարուած ձայնագրութիւնը, օգտագործելու եմ իմ մի հաղորդման մէջ,- միազմամայն ինքնավստահ, առանց յուզումի դիմեցի տիկնոջը:*

*- Ախր Հենրիկ ջան, էդ ձայնագրութիւնը փակի տակ է..., եւ յետոյ, գիտես էլի, Արմէնի ստորագրութիւնն է պէտք...*

*- Ինչ է, չգիտե՞ս, որ նա քաղաքում չէ, եւ ես եմ նրան փոխարինում:*

*- Ի՞նչ իմանամ Հենրիկ ջան..., գիտես չէ՞, թէ ես քեզ որքան եմ սիրում, յանկարծ բան-ման դուրս չգա՞յ...*

*- Չէ, չէ՜, մի անհանգստանայ, մի փոքր հատուած եմ օգտագործելու:*

*- Օրը Հինգշաբթի էր, ես միայն մէկ օր ունէի յանդուգն մտայղացումս իրագործելու համար: Երկուշաբթի Արմէնը գալու էր աշխատանքի: Ինձ մնում էր միայն Ուրբաթ օրը: Մտնում եմ Հայկական երաժշտութեան հաղորդումների խմբագրութիւն.*

*- Օֆելեայ Արտեոմովնայ, դուք Կիրակի օրուայ Պատուէրով Համերգը կազմե՞լ էք,- դիմում եմ աւագ խմբագիր, եօթանասունին բարեւ ասող օրիորդին.*

*- Ոչ, դեռ չեմ կազմել, բայց պատրաստւում եմ սկսել, շա՜տ պատուէրներ կան, մանաւանդ գիւղերից:*

*- Ինչ լա՜ւ, Օֆելեայ Արտեոմովնայ, այս Կիրակի օրուայ Պատուէրով Համերգը ես եմ կազմելու, դուք ձերը թողէք յաջորդ Կիրակի օրուայ համար:*

*- Մաղարիչ ունէք մաեստրօ, ես էլ պատրաստւում էի ձեզ խնդրել, որ թոյլ տաք այսօր աւելի վաղ թողնել աշխատանքը:*

*- Ազատ էք, կարող էք հիմա իսկ գնալ Օֆելեայ Արտեոմովնայ:*

*Վերադարձայ աշխատասենեակս ու, ինչպէս ասում են՝ անցայ հեռախօսի գլխին.*

*- Արարա՜տ..., ո՞րտեղ ես, դասասենեակո՞ւմ, թէ՞ կաբինետում (Արարատ Քոչարեանը Երեւանի Շահումեանի շրջանի Մետաքսի կոմբինատի բանուորական միջնակարգ դպրոցի տնօրէնն է):*

*- Կաբինետում եմ, ի՞նչ կայ, ի՞նչ է եղել Հենրիկ, ձայնդ մի տեսակ տագնապալից է հնչում:*

*- Ամէն ինչ լաւ է Արարատ: Հիմա ինձ ուշադիր լսիր: Քո այդ բանուոր «աշակերտներից» մի տասը տասնըհինգ հոգուց պատուէր ես վերցնում, թէ իւրաքանչիւրն ի՞նչ երգ կամ մեղեդի կ'ուզենայ լսել Կիրակի օրուայ Պատուէրով համերգի ժամանակ: Քեզ մի ժամ ժամանակ, ոչ աւելի:*

*- Հենրիկ ջան, էդ ի՞նչ բանի ես ախպե՜ր, ինչ համերգ, ի՞նչ պատուէր...:*

*- Արարատ, դու ինձ զարմացնում ես, ի՞նչ է, դու էս աշխարհից չե՞ս..., հէչ պատուէրով համերգ չես լսե՞լ Կիրակի օրերին...*

*- Լսել եմ, ի՞նչպէս չեմ լսել...*

*- Դէ՜, եթէ լսել ես, սա էլ դրանցից մէկն է: Շարունակեմ աւելիքս: Պատուէրներից մէկը պարտադրաբար պիտի լինի միջնադարեան «Յորժամ» հոգեհանգստեան մեղեդին՝ Լուսինէ Զաքարեանի կատարմամբ: Ընտրիր այնպիսի մէկին, որը քիչ-միչ կարդացած լինի:*

*- Այդ ի՞նչ ես անում եղբա՜յր, յեղափոխութի՞ւն..., ռադիոյով հոգեւոր ե՞րգ...*

*- Այո Արարատ, մենք միասին ենք յեղափոխութիւն անելու...*

*- Հասկացայ Հենրիկ, հիմա հասկացայ, միայն թէ ինձ համար պարզ չէր, թէ ինչ էր գործի անուանումը:*

*- Յոր-ժամ, երկու վանկ է, ՅՈՐ ԺԱՄ...*

*- Յորժամ...,- լա՜ւ... բա էդ խեղճ աղջիկն ի՞նչ գիտի թէ ինչ է Յորժամը, իսկի ես չգիտեմ:*

*- «Յորժամ»՝ գրաբարից է գալիս եւ նշանակում է՝ Երբ որ, երբ: Մի խօսքով՝ կարելի է ասել նաեւ այն ժամանակ: Մարդ ես, եթէ այդ աղջկան հարցնող լինի թէ ո՞րտեղից է լսել այդ մեղեդին, թող ասի, որ լսել է Էջմիածնի Մայր Եկեղեցում, պատարագի ժամանակ, Լուսինէ Զաքարեանի կատարմամբ:*

*- Եղաւ Հենրիկ, հասկացայ..., բայց դու չգիտե՞ս, որ ես կուսակցական եմ, այդ ի՞նչ հակախորհրդային յանձնարարութիւն ես տալիս ինձ:*

*- Լսի՜ր ընկեր կուսակցական, բա ինչի՞ ես գալիս եկեղեցի, դեռ մոմ էլ ես վառում...*

*- Ես քո պատարագները լսելու համար եմ գալիս...*

*- Գիտեմ: Կիրակի օրն էլ պատուէրով համերգի ընթացքին կը լսես Առնօ Բաբաջանեանի մշակած «Յորժամ»ը՝ Լուսինէ Զաքարեանի կատարմամբ:*

*... Բաւական երկար տեւեց չարաբաստիկ համերգի պատրաստելը: Որոշել էի*

*մի քանի նախադասութեամբ ներկայացնել թէ Բաբաջանեանին, թէ կատարուող ստեղծագործութեանը եւ թէ՝ սքանչելի երգչուհուն, որ նոր-նոր էր արժանացել համընդհանուր ճանաչման: Յետագայում հասկացայ, որ նման մօտեցմամբ, ես թեթեւացրել էի իմ մեղքը՝ «արգելուած պտուղը» հրամցնելով հասարակութեանը:*

*Ես մերոնց տեղեակ չէի պահել երեւոյթի մանրամասների մասին, միայն խնդրեցի, որ բոլորս մէկտեղուենք մեր խոհանոցում՝ լսելու պատուէրով համերգը: Երեւանում սովորութիւն է ռադիոընդունիչը խոհանոցի պատին ամրացնելը: Եկաւ «Յորժամ»ի պահը եւ բոլորս քարացանք: Ոչ մի ձայն, ոչ մի շշուկ մինչեւ մեղեդու աւարտը եւ նրանից յետոյ էլ մի քանի վայրկեան: Երկար լռութիւնից յետոյ հայրս էր խօսողը.*

*- Էս ի՞նչ է, Հենրիկ, արդէն թոյլատրւո՞ւմ է հոգեւոր երաժշտութիւն հաղորդել ռադիոյով:*

*- Ոչ հայրիկ, չի թոյլատրւում: Այդ ես է, որ խախտել եմ օրէնքը: Ինչո՞ւ պիտի ազատօրէն կարողանանք եթեր սփռել Բախի, Մոցարտի, Բեթհովէնի հոգեւոր երաժշտութիւնը, իսկ մերը՝ հայկականը ոչ: Ի՞նչ տխմար որոշում է չէ՞ հայրիկ: Մի խօսքով, մի քանի խոչընդոտներ յաղթահարելուց յետոյ ես հասա իմ նպատակին: Թէ գործից պիտի հանեն՝ թող հանեն:*

*Առանց մի խօսք ասելու հայրիկս յուշիկ քայլերով գնաց դէպի իր աշխատասենեակը՝ մինչ այդ մի անմեղ ժպիտ պարգեւելով ինձ:*

*Երկուշաբթի առաւօտեան, սովորականից աւելի նկատելի հագուստ-կապուստով գնում եմ Ռադիոկոմիտէ: Նախամուտքին, դռների առջեւ կանգնեցնում է ծանօթ ոստիկանը.*

*- Անասեան՝ նախագահի մօտ:*

*- Գիտեմ, ես սպասում էի դրան:*

*Նախագահի քարտուղարը ինձ տեսնելուն՝ չանթահար եղածի պէս վեր թռաւ տեղից ու՝*

*- Ընկեր Անասեան, խնդրում եմ մի րոպէ սպասէք, հարցնեմ տեսնեմ կարո՞ղ է հիմա ձեզ ընդունել թէ ոչ:*

*- Սիրո՜վ Նունիկ ջան, բայց ինչո՞ւ ես մի տեսակ վախեցած...*

*- Չգիտե՜մ, չգիտեմ..., ձեր մասին եմ մտածում...*

*Յստակ էր, որ օրիորդը ծանօթ էր պատմութեանը: Երկու երկվայրկեան անց նախագահի դրան ներսի կողմում էի: Սպասում եմ հրամանի, բայց ոչ մի ձայն չկայ, պարոնը երկու ձեռքերով բռնել է անկողնի սաւանի չափ «Սովետական Հայաստան» թերթը եւ խորասուզուած է ընթերցանութեան մէջ: Քիչ անց.*

*- Հը՜, եկել ես հա՞..., հերոս ենք խաղում էլի...: Դէ որ եկել ես՝ մօտ արի ու մանրամասն պատմի՝ գիտես ինչի մասին է խօսքս:*

*Առանց որեւէ մանրուք բաց թողնելու, մանրամասն պատմեցի ամէն ինչ, չմոռանալով ճառել հայկական հոգեւոր երաժշտութեան անփառունակ վիճակի մասին, եւ որ, մեր պարտքը պիտի լինի եւրոպական հոգեւոր երաժշտութեան ժողովրդականացման հետ մէկտեղ, տեղ յատկացնել նաեւ մեր աննման հոգեւոր երաժշտութեանը:*

*Իմ ամբողջ «ելոյթի» ընթացքում ոչ մէկ վայրկեան ինձ չընդհատեց նախագահը: Մի քանի րոպէ երկուսս էլ լուռ էինք: Յետոյ նա վեր ելաւ իր չքեղ բազկաթոռից ու մօտեցաւ ինձ՝ ակամայ ինձ ստիպելով, որպէսզի ես էլ ոտքի ելնեմ: Մօտեցաւ ու զսպուած ժպիտով, երկու ձեռքերով բռնեց ուսերս ու թափ տալով ամբողջ մարմինս ասաց.*

*- Գնա, գնա աշխատիր, ես ամէն ինչ հասկացայ,- ուրիշ ոչ մէկ բառ:*

*Ելքին չհասած շուռ եկայ: Նախագահը կանգնած էր նոյն դիրքով, նոյն տեղում: Ես էլ կանգնեցի մի պահ եւ ձեռքս բարձրացրի վեր՝ ասել ուզելով, թէ ի՞նչ են որոշելու աւելի վերեւներում:*

*Հասկանալով թէ ինչն է ինձ անհանգստացնում, այս անգամ արդէն բարձրաձայն, գրեթէ բղաւելով ասաց.*

*- Գնա՜, գնա ասացի, եւ աշխատիր նոյն ոճով...*

*...Սառոյցը հալուեց: Կարծրամտութիւնը իր տեղը զիջեց առողջ տրամաբանութեանը: Պարբերաբար հայկական ռադիոյից սկսեցին հնչել հայ հոգեւոր երաժշտութեան գոհարներ:*

*Այն ամէնը ինչ ներկայացրի ընթերցողին՝ մի նպատակ է հետապնդում. Երբեք չմոռանալ մեր մեծերին, ի մասնաւորի եզակի մեծութիւններին եւ նրանց աշխարհից հեռանալուց յետոյ, արժանի ձեւով պահենք նրանց յիշատակը: Ինչպիսի՞ն էր Առնօ Բաբաջանեանը,- մեծերից մեծը: Սա է պատասխանը: Պէ՞տք է նրան մեր յիշողութեան մէջ պահել.*

*- Անկասկած: Միշտ եւ անդադար: Եթէ նրա երաժշտութիւնն էլ մտաբերելու չլինենք, նրան յիշելու համար, բաւ է որ մտովի գնանք Երեւան, ուր, Կարապի լճի հարեւանութեամբ կը տեսնենք նրա՝ դաշնամուրին հենուած բրոնզէ քանդակը: Իսկ ողջ քանդակի ամենածանօթ բաղադրիչներից մէկը հանճարեղ կոմպոզիտորի նշանաւոր քիթն է...*

*- «... Եթէ ես բեմի վրայ չտեսնէի քո խոշոր քիթը, կը մտածէի թէ Ռիխտերն է նուագում...»,- Առնօ Բաբաջանեանի՝ որպէս հանճարեղ դաշնակահարի մասին այսպէս է արտայայտուել սովետական ականաւոր երաժշտագէտ Ասաֆեւը:*

*Առնօ Բաբաջանեանի մասին յոբելեանական յօդուած չէ, որ մենք ներկայացրինք ընթերցողին, այլ կոչ ու թելադրանք Հայաստանի պատկան մարմիններին, որպէսզի նրանք ըստ ամենայնի կարողանան Գնացած, բայց Յաւերժ մնացած մեր մեծութիւններին մշտապէս պահել ժողովրդի յիշողութեան մէջ:*

*Իսկ ես խոստանում եմ լուրջ, մասնագիտական յօդուածով հանդէս գալ հինգ տարի յետոյ, Առնօ Բաբաջանեանի ծննդեան 100-ամեակի օրերին, եթէ Տէրը կամենայ եւս հինգ տարի շնորհել ինձ...:*

**JOB OPPENNING**

**Director of Cultural Events: organize & execute Armenian cultural events from conception to completion, aiming to increase awareness of ethnography & to preserve ancient cultural arts & traditions; entertain/educate the community. BS degree, alternative, equivalent, or foreign equivalent in event management, Armenian studies or related field required. Job site & interview: Glendale, CA.**

**Email resume to hiamfoundation@hotmail.com or mail to Hi-Am Charity Foundation at 530 W Stocker St #307, Glendale, CA 91202.**

## BAVARIAN OPEN. ԹԻՆԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆՆ ՈՒ ՍԻՄՈՆ ՍԵՆԵԿԱԼԸ ԳՐԱՒԵՑԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՂԸ



Հայաստանը ներկայացնող Թինա Կարապետեան եւ Սիմոն Սենեկալ պարային զոյգը երկրորդ տեղը զբաղեցրեց Bavarian open գեղասահքի միջազգային մրցաշարում:

Կարճ ծրագրից յետոյ Կարապետեանն ու Սենեկալը երկրորդն էին եւ այդ տեղը պահպանեցին նաեւ ազատ ծրագրից յետոյ: Նրանց ցուցանիշն էր 140.16 միաւոր:

Bavarian open-ի յաղթող դարձաւ Մեծ Բրիտանիան ներկայացնող Պենի Կումս- Նիկոլաս Բուքլենդ պարային զոյգը, որը հաւաքեց 165.68 միաւոր:

## ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐԶԻՉՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՑԻՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ

Ըմբշամարտի Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչները հրապարակեցին թիմերի վերջնական կազմերը, որոնք հանդէս կը գան այս տարուայ Եւրոպայի առաջնութեանը, որոնք կը կայանան Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում, Մարտի 8-13-ը:

Ազատ ոճի ըմբշամարտի հաւաքականի գլխաւոր մարզիչ Արայիկ Բաղդատեանն եւրոստուգատեսին մասնակցելու համար հրաւիրել է 7 ըմբիշի՝ Գարիկ Բարսեղեանին (57 կգ քաշային կարգ), Վոլոդիա Ֆրանգուլեանին (61 կգ), Դաւիթ Սաֆարեանին (70 կգ), Գրիգոր Գրիգորեանին (74 կգ), Շամիր Աթեանին (86 կգ), Անդրանիկ Գալստեանին (97 կգ) եւ Լեւան Բերիանիձէին (125 կգ):

Յունահռոմէական ոճի Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակեանը Ռիգայի առաջնութիւնում վստահել է հետեւեալ ըմբիշներին. Ռոման Ամոյեան (59 կգ), Միհրան Յարութիւնեան (66 կգ), Վարշամ Բորանեան (71 կգ), Կարապետ Ջալեան (75 կգ), Ռաֆայէլ Մանուկեան (80 կգ), Մաքսիմ Մանուկեան (85 կգ), Արթուր Ալեքսանեան (98 կգ) եւ Էդգար Խաչատրեան (130 կգ):

## «ԱՐԱՐԱՏԸ» ՊԱՐՏՈՒԵԼ Է «ՆԻՒ ԵՈՐՔ ԿՈՍՄՈՍԻՆ»




«Արարատը» երկրորդ ստուգողական հանդիպումն է անցկացրել ԱՄՆ-ում՝ 0:2 հաշուով պարտուելով ամերիկեան «Նիւ Եորք Կոսմոսին»:

NASL-ի ախոյեանի հետ խաղում երեւանցիներն արդէն 11-րդ րոպէին 10 ֆուտպոլիստներով են մնացել Բենիկ Յովհաննիսեանի հեռացման պատճառով: «Նիւ Եորք Կոսմոսը» մէկական կոլ է խփել խաղակէսերից իւրաքանչիւրում:

Փետրուարի 23-ին «Արարատը» ԱՄՆ-ում ընթացող հաւաքի վերջին ստուգողական խաղում կը մրցի հարաւքորէական «Սոննամ» թիմի հետ:

## ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԸ ԳՈՀ Է ՓԱՇԻԿ ԱԼԱՎԵՐԴԵԱՆԻՑ



Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեճում այսօր կայացել է Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի նիստը:

Ինչպէս տեղեկացնում է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտէի պաշտօնական կայքը, նիստը վարել է ՀԱՕԿ-ի գլխաւոր քարտուղար Հրաչեայ Ռոստոմեանը: Վերջինս յայտարարել է, որ օլիմպիական կոմիտէի նախագահ Գագիկ Ծառուկեանը գոհ է ծանրամարտի Հայաստանի հաւաքականների գլխաւոր մարզիչներ Փաշիկ Ալավերդեանի եւ Արտաշէս Ներսիսեանի կատարած աշխատանքներից:

Հրաչեայ Ռոստոմեանը նիստի մասնակիցներին տեղեկացրել է, որ ծանրամարտի հանրապետական ֆեդերացիայի նախկին նախագահ Արմէն Շահազիզեանի հրաժարականից յետոյ կազմակերպութեան ծախսերն որոշել է իր վրայ վերցնել ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկեանը:

## ԱՆԳԼԻԱՅԻ ԳԱՒԱԹ. «ՉԵԼՍԻՆ» 5 ԳՆԴԱԿ ՈՒՂԱՐԿԵՑ «ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻԻ» ԴԱՐՊԱՍԸ



Ֆուտպոլի Անգլիայի գաւաթի խաղարկութեան 1/8 եզրափակիչում «Ջելսին» տանը 5:1 հաշուով յաղթեց «Մանչեսթեր Սիթիին» եւ դուրս եկաւ յաջորդ փուլ: Մանչեսթերցիները խաղում էին երկրորդ կազմով: 5 ֆուտպոլիստներ նորամուտը նշեցին Մանուէլ Պելեգրինիի թիմում:

Քառորդ եզրափակիչի ուղեգիր նուաճեց նաեւ 5:1 հաշուով «Բլեքբերնին» յաղթած «Վեստ Հեմը», իսկ Լոնտոնի «Տոտենհեմը» տանը նուազագոյն հաշուով պարտուեց «Քրիսթալ Փելասին» եւ լքեց պայքարը:

Անգլիայի Գաւաթ, 1/8 եզրափակիչ
«Ջելսի» - «Մանչեսթեր Սիթի»՝ 5:1
«Տոտենհեմ» - «Քրիսթալ Փելաս»՝ 0:1
«Բլեքբերն» - «Վեստ Հեմ»՝ 1:5

## ՖՈՒՏԲՈԼԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԱՒԱԹԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ




Տեղի է ունեցել ֆուտբոլի Ամերիկայի գաւաթի խաղարկութեան վիճակահանութիւնը: Ֆուտբոլի հարաւամերիկեան կոնֆեդերացիայի հիմնադրման 100-ամեակի կապակցութեամբ անցկացուող մրցաշարին մասնակցում է 16 հաւաքական:

Ա. խմբում ընդգրկուել են ԱՄՆ-ը, Կոլումբիան, Կոստա Ռիկան, Պարագվայը, Բ. խմբում՝ Բրազիլիան, Էկվադորը, Հաիթին, Պերուն, Գ. խմբում՝ Ճամայքան, Մեքսիկան, Ուրուկուէյը, Վենեզուէլլան, Դ. խմբում՝ Արժանթինան, Չիլին, Փանաման, Բոլիւիան:

Ամերիկայի գաւաթն անց է կացւում 4 տարին մէկ: Վերջին անգամ այն կայացել է 2015 թուականին, սակայն 100-ամեակի կապակցութեամբ որոշուել է հերթական առաջնութիւնն անցկացնել 2016 թուականին:

Առաջին անգամ Ամերիկայի գաւաթի խաղարկութիւնը կայանալու է Հարաւային Ամերիկայի տարածքից դուրս՝ ԱՄՆ-ում: Մրցաշարն անց է կացուելու Յունիսի 3-ից 26-ը:

## ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԱՐԺԷՔՆ ԱՃԵԼ Է

Հայաստանի հաւաքականի եւ Դորտմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանի տրանսֆերային արժէքը հասել է 28 մլն եւրոյի: Ինչպէս տեղեկացնում է «Արմենպրես»-ը, 2015 թ. Փետրուարի 4-ի դրութեամբ նրա տրանսֆերային արժէքը 21 միլիոն եւրօ էր:

Այս տարուայ ցուցանիշը հայազգի ֆուտպոլիստի կարիերայում առայժմ ամենաբարձրն է:

Ընթացիկ՝ 2015-2016 մրցաշրջանում 27- ամեայ ֆուտբոլիստը «Բորուսիա»-ի կազմում մասնակցել է Գերմանիայի առաջնութեան 20 խաղի եւ դարձել 8 կոլի հեղինակ: Գերմանիայի Գաւաթի խաղարկութեան 4 խաղում խփել է 4 կոլ:

Յիշեցնենք, որ հայազգի ֆուտպոլիստը 2013թ. Յուլիսին ուքրաինական «Շախտեորից» «Բորուսիա» էր տեղափոխուել 27,5 միլիոն եւրոյի տրանսֆերային արժէքով:

## ՄԵՍՍԻՆ 300-ՐԴ ԿՈԼՆ Է ԽՓԵԼ ՍՊԱՆԻԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ

Բարսելոնայի յարձակուող Լիոնէլ Մեսսին 300-րդ կոլն է խփել Իսպանիայի առաջնութիւնում: Խիխոնի Սպորտինգի դէմ խաղում, որն աւարտուել է կատալոնական ակումբի 3-1 հաշուով յաղթանակով, Մեսսին 2 կոլ է խփել, որոնցից առաջինը յոբելեանական էր: Մեսսիից 300 կոլ խփելու համար պահանջուել է 334 խաղ: Այդ ընթացքում նա նաեւ 137 գոլային փոխանցում է կատարել:

## ՀՄՄ-Ի ՅԱՌԱՋԻԿԱՅ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

Ստորեւ կը ներկայացնենք Փասատինայի ՀՄՄի ֆութպոլի խումբի յառաջիկայ մրցումներու յայտագիրը.
Մարտ 28 ժամը 7:00ին ՀՄՄ ընդդէմ ՊԷՆԿԱԼՁ
Մարտ 16 ժամը 6:00ին ՀՄՄ նրդդէմ ՏԻԱՊԼՕ ԵՈՒՆԱՅԹԸՏ
Մարտ 20 ժամը 7:00ին ՀՄՄ ընդդէմ ՓԻՆԳ ՊԱՐՈՆՁ
Ապրիլ 3 ժամը 7:00ին ՀՄՄ ընդդէմ ՄԷՆՇԸՆ ԲԻԳՁԸՐՁ
Բոլոր խաղերը տեղի կ՚ունենան Փասատինայի Վիլլա Բարք մարզադաշտին վրայ՝ հասցէն 363 E. Villa Street, Pasadena: